

446

ფურცელი  
ყველაფერი

835

F-37

ყველა

1883



83 17

Printed in Turkey

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Թարգմանություն Գրքաներին

ԵՐԿՐԱԳԻ ՏՊԱԳՐԱԹԻՒՆ



2004

ՎԱՆ

Ի ՏՊԱԳՐԱՆԻ Վ. ՍՐՇՈՒՆՆԵՐ

Ի ՎԱՐՍՊ

- 1883 -

Ա  
Ճ  
Խ  
Հա  
ման  
ուան  
Լ  
լուս  
տար  
ներ  
կը վ  
գալ  
սիր  
տու  
են  
գայն  
րոյ  
րատ  
Ե  
իրեն  
տպակ  
դիր  
հան  
րով  
խոր  
անուն

ինչ որ մանկան բնութեան մէջ կը տեսնենք , այնու կարելի է զինքն ուղղել եւ ուսուցանել : Փոք- ձեր ցոյց կուտան թէ տղայք կը սիրեն ուսանիլ այն՝ ինչ որ բնական է իրենց . կ'ընթեռնուն՝ ինչ որ կը համապատասխանէ իրենց սիրոյն , սրտին եւ զգաց- ման : Այն ուսուցիչ որ այս պահանջումն կը հե- ոանայ՝ կը հեռանայ իւր իսկ նպատակէն :

Սոյն « Բարոյական պատմութիւններ » ըստ ամենայնի իրենց պարզ, դիւրահասկանալի, հե- տաքրքրական մանաւանդ զրօսեցուցիչ պատմութիւն- ներով դպրոցական մանկոնց ընթերցանութեան սէրը կը վառեն : — Այսու հանդերձ տղայք զանոնք կար- դարով իրենց սրտին մէջ կը զարթի երկիւղածութիւն , սէր , երախտազիտութիւն , հնազանդութիւն , սէր առ Աստուած , առ ընկեր , առ նմանիս : — Ասոնք են որ մանկան ապագայ կեանքը կ'երաշխաւորեն եւ զայն ընկերական շրջանին մէջ , ազնիւ , բարեբա- րոյ , ուսեալ եւ ընտիր քաղաքացի լինելու կը պատ- բաստեն :

« Բարոյական պատմութիւններ » իրենց բարոյական օգուտներէ հետ դպրոցական աշակերտին կ'ընծայեն նաև ուսանելու շատ մը դիւրութիւններ , զորոնք աւելի արդիւնաւոր ընելու համար ուսուցչին կը մնայ բազմակողմանի հարցե- լով գարթուցանել աշակերտի ուշադրութիւն դէպ ի իւր ընթերցումը , հետազօտել նորա պատճառը , հե- տեանքն եւ պարտոյն : Հարցնել՝ « ի՞նչու պատաս-



1379  
39

նիի այն խօսքերը դէպի կոտորաչոր, ի՞նչ համոզումն ունիք նա կամ ի՞նչ շարժառիթ, ի՞նչ եղաւ կռաւ պայտի փոխադարձ վարմունքը, աւելի ի՞նչ բանի համար զայրացաւ նա եւ ինչո՞ւ վերջէն լուեց, պապանձեցաւ, ի՞նչ եղաւ վերջապէս ամենի հետեւանքը եւ ։ Այսօրինակ հարցումներ պէտք է ոչ միայն ազայոց ընթերցողածի այլ նաև զանոնք շրջապատող մէն մի իրի նորա պէտքի եւ որպիսութեան վրայ : — Բացի ամանէ ուսուցիչը աշակերտաց ընդունումը եւ զայն արտայայտելու կարողութիւնը գարգացնելու համար, կրնայ պատմութիւններէն մին բարձրաձայն կարդալ մէկին կամ միւսին նորա բովանդակութիւնը համառօտ կամ աւելի ընդարձակ եւ պարագայիւք բերանացի պատմել տալ : Այս կրթութեամբ ազայք կսկսին օր քան զօր յառաջագիւտել իրենց տեսածը, լսածն եւ գաղափարածը ազատօրէն եւ իւրաքանչիւրը իրեն յատուկ ոճով մանաւանդ խօսքի բնական պարզութեամբ պատմել այսօրը մի փոքր պատմութիւն, այլ վաղը աւելի մեծն եւ ընդարձակը :

Նաև ուղղադրութեան համար ուսուցիչը կրնայ գոհացուցիչ արդիւնք ստանալ եթէ պատմութիւնները մերթ ընդօրինակել եւ մերթ ևս բարձրաձայն կարդալով գրել ապա աշակերտին, այնուհետեւ բոլորի ներկայութեան ուղղագրել, մասնաորապէս գրողի ուղղորութիւնը դարձնել դէպի իւր սխալներ, միանգամայն զղուշացնել միւսներին նմանօրինակ սխալներէ : Միեւնոյն ժամանակ պէտք է բացատրել

թէ ի՞նչ օրէնքներ ունին նմանաձայն գրերը բառերի գործածութեան գրեկուն և հնչելուն մէջ :

Բարոյական պատմութեանց վրայ կրնայ նաև ուսուցանել ըերականական կանոններ, բառադննութիւն, լուծումն, վերածել յաշխարհարառէ ի գրաբառ, անտի դարձեալ յաշխարհարառ, այնուհետև իրենց գրուածին վրայ փնտուել լեզուին օրէնքները :

Իսկ պատմութեանց ներքեւ գրուած երկտող ստանաւորներ, որոնք պատմութեանց բարոյական մասի ամբողջումն են, դիտամբ նօսք գրով գրուած են որպէս զի տղայք պատմութիւնները կարդան եւ ստանաւորներն ընդօրինակեն :

Վերջապէս ուսուցչին կը մնայ իւրանքանչիւր ազայի կարողութեան համեմատ ուսանելու յարմար նիւթ մատակարարել և « Բ ա Ր Ո Յ ա կ ա ն պ ա ա մ ու լ թ իւ ն ն ե Ր ը » գալրոցական աշակերտին ձեռք օգտակար դասագիրք մը ընել :

Սոյն երկրորդ տաղադրութեան վրայ յաւելցուցինք նա եւ քանի եւ այլ պատմութիւններ եւ միանգամայն որքան կարելի էր խնամ տարանք լեզուի մաքրութեան եւ ուղղադրութեան :

Խօսքի և Խօսքի



րէնութիւնը գործեց» — մի բարկանար քսաւ պատանին, այդ անօրէնութիւնը քո մեծ կուռքըն բրածէ. ինչպէս կ'երեւի իւր փոքրիկ եղբայրներուն նեղանալով ձեռքի գաւազանաւ զանանք ճեծեր կոտորտերէ. «նչ, աղաղակեց կուսպաշտը, անկարելի է այդ, որովհետեւ իմ կուռքերուս շարժին անգամ չեմ տեսած, դո՛ւ, չա՛ր պատանի, անշուշտ դուն բրածես: Այժմ՝ քո այդ շարութեան համար դքեզ այն գաւազանաւ ձեծերով պիտի մեռցնեմ»:

Պատանին եղած պպառնալիքէն ամենակին չք վախցաւ, ուրախ եւ անփէհեր սրտով քսաւ իրեն «նվ մարդ, բսէ ինձի, այն կուռքերը պանք ես իմ՝ տկար ձեռններովս կոտորտեցի եւ նոքա զիս պատժել չք կարողացան, ինչպէս կարելի է որ նոքա Աստուած լինին, երկինք և երկիր ստեղծեն:

կուսպաշտը պատանիի այս խօսքին ըւեց, պապանձեցաւ, խոր մտածմամբ մի քիչ կենալէն յետոյ մեծ կուռքն ևս ինքը կտորտեց, գետնի վրայ ծունր դրած՝ լալով ճշմարիտ Աստուծոյն երկկրպագութիւն բրաւ:

Երանէ՛ այն՝ որ Աստուած ինձ հանազաբ  
 Եւ ճշմարիտ սրտով զայն հայր կանոնանէ

99. 2. ԲՍՐԻ ՀԱՅՐ: Ինչուսով զիս

Առեւտրական գործով մի բարի հայր տէրութեան մայրաքաղաք կը մնար. իսկ իւր կին եւ զաւակներ իրմէ հեռու մի դիւզական ազարակի մէջ կը բնակէին: Միանգամ հայրը իւր զուտիաց գեղեցիկ ընծաներով լեցուն արկղ մի խրկեց եւ անոր հետ մի նամակ որոյ մէջ այսպէս գրած էր «Միրելի՛ զաւակներս, Չերմեռանդ եւ բարի եղէք, հաւատացէք որ չուսով իմ քոյս պիտի գաք. կ'աւետեմ ձեզ որ տակաին շատ գեղեցիկ ընծաներ կան պահուած այն տան մէջ որ ես ձեզ համար պատրաստած եմ»: Զաւակները այս խոստման վրայ շատ ուրախացան «ո՛րչափ բարի է մեր հայրը կըսէին, սրչափ կը մխիթարէ զմեզ, մենք դինք ՚ի սրտէ կը սիրենք, թէպէտ տեսնել եւ յիշել չենք կրնար, մեր պարտականութիւն թող լինի այսուհետեւ իւր բոլոր պատուէրները կատարել»:

Այս ուրախութեան վրայ մայրն քսաւ իրենց «Միրելի զաւակներս, ինչպէս որ ձեր հայրը երկրի վրայ զձեզ կ'ուրախացնէ, նոյնպէս նաեւ երկնաւոր հայրը երկրի ամէն մարդոց կը պարգևէ իւր բարիքը: Ճշմարիտ է որ մենք զԱստուած չենք տեսներ, բայց նա կուտայ մեզ ամէն ահապի գեղեցիկ պարգևներ՝ Արեգակ, Լուսին, Աստղեր, ծառեր և զանազան պտուղ-



ներ Աստուծմէ է եւ անոնցմով մենք իւր սէրը կը ճանաչեմք: Սուրբ գիրքը՝ նոյնպէս Աստուծմէ խրկուած նամակ մի է, որուն մէջ նա իւր կամքը կը յայտնէ մեզ եւ կատարողայ կը խոստանայ երկնից արքայութիւն, յորում պատրաստուած են՝ մեծամեծ ուրախութիւնք, ամենագեղեցիկ պարգեւներ որոնք այս աշխարհի մէջ չը կան:

«Ուրեմն, զուակներս, ՚ի սրտէ սիրենք զԱստուած, իւր կամքեր կատարենք, որպէս զի երկնից մէջ ուրախանանք: Այնտեղ Աստուած գէտ յանդիման պիտի տեսնենք, եւ մեր ուրախութիւնը աննկարագրելի պիտի լինի»:

Թէ մենք զԱստուած սրտով սիրենք  
Աստուած եւ երկնք կենք կը քոյնենք:



3. ԶԵՐՄԵՌՈՒԱՆԴ ՄԱՅՐ ԵՒ ԻՒՐ ՈՐԴԻՆԵՐ.

1. Մի աղնուական տիկին իւր երկու չափահաս զուակներով քաղաքէ հեռու գիւղի մէջ կը բնակէր: Մի օր երբ հանդիսաւոր տօն կը կատարուէր քաղաքի տաճարին մէջ, ըստ իւր որդոց՝ «Ախ երանի՜ թէ ես ալ այսօր տաճարն երթայի եւ այն տեղ ժողովոյ հազարաւոր մարդկանց հետ զՏէր Աստուած փառա-

բանէի: Բայց ափսոս, որ քաղաք չառ հեռու է, մեր կառքն այլ եւս չօգնէր մեզ, որովհետեւ ձիերը մեր չքաւորութեան պատճառաւ ծախեցինք»:

Զուակները՝ իրենց մօր վրախաղք կատարելու համար անմիջապէս կառքը բերին որ զինք տաճարը տանեն: Մայրը ուրախութեամբ նստեցաւ, աղնիւ զուակներն եւս ձիերու փոխարէն կառքին լծուած քաշեցին:

Երբոր քաղաքին մօտեցան, բոլոր ժողովուրդ մօր ջերմեռանդութեան եւ որդոց աննման սիրոյն վրայ յուզուած արատաւիլ սկսան: Քաղաքի դռնէն մինչ ՚ի տաճար ճամբու վրայ կանաչ ոստեր և գեղեցիկ ծաղիկներ սխուեցին: Բազմութիւնը ուրախութեամբ կ'աղաղակէր «օրհնեալ լինի քաղաքաւոր մայրը եւ օրհնեալ իւր սղնիւ զուակներ»:

Աստուծմէ մենք ալ սիրենք  
Որ զԱստուած եւ իւր ձեռքը ճշմարտութեան կը սիրէ:

2. Ժողովրդի ուրախութեան աղաղակներէն քաջալերուած վերջապէս տաճարը հասան: Զերմեռանդ մայրը սեղանին առաջ ծունր գընելով երկար եւ լալաղին աղօթեց. ՚ի վերջոյ «Աստուած իմ, ըստ, երկու զուակներս օրհնէ տուր անոնց ինչ որ կուղես եւ ինչ որ քան գար մէն բարի է»:

Եկեղեցւոյ աւարտումէն յետոյ առաքինի զաւակները կրկին անգամ կառքին լծուելով տունը վերադարձան եւ երեկոյեան դէմ յողնած ուրախ սրտով ՚ի քուն մտան : Երբոր մայրը միւս առաւօտ զիրենք արթնցնել կ'ուզէր, տեսաւ որ նոքա երկու զուարթերես հրեշտակներու պէս անշունչ պսակեր այլ ևս չեն արթննար :

Մայրը առաջին անգամ իւր զաւակաց մահուան վրայ խիստ տխրեցաւ, բայց ՚ի վերջոյ սիրտ առաւ ազազակեց « Աստուած իմ, դուն իմ աղօթքը լսեցիր, այժմ կը տեսնեմ որ քաղցր եւ երանելի մահէն ՚ի զատ աշխարհի մէջ լաւագոյն բան մի չը կայ որուն մարդօ ցանկայ : Իմ զաւակներս այժմ քեզ մօտ են . Աշխարհը նոցա մանկական սէրը վարձատրելու համար շատ ազբատ էր, անոր համար քեզի կանչեցիր որ իրենց վարձքը երկնից մէջ ընդունին » :

Մահե առաջ որտե՞ անգամ կ'աղօթես :  
Մէջը հոռի որ լաւագոյն կեանք խնդրես :

4. ԲՈՅՐ ԵՒ ԵՂԲԱՅՐ.

Մի օր երբ Յակոբ եւ Աննա միայնակ տուն մտցին, Յակոբ Աննային ըստւ, ե'կ տան մէջ աւտելու անուշ բան փնտռենք և ուտենք :

Աննան ըսաւ, եթէ դու դիւ մի այնպիսի տեղ տանես ուր մէկը չը տեսնէ զմեզ, կ'ընկերանամ քեզ հետ :

Ե'կ, ըսաւ Յակոբ, կաթի տուն երթանք և այնտեղ աման լեցուն քաղցր սեր ուտենք :

Ո՛չ ըսաւ Աննան, այնտեղ փայտ կարող դրացին կը տեսնէ զմեզ :

Ուրեմն խոհարան երթանք, ըսաւ Յակոբ, ուր մի աման լեցուն մեզր կայ, կրնանք զայն հացով կուշտ ուտել :

Այնտեղն ալ չէ, ըսաւ Աննան, որովհետեւ դրացուհին որ պատուհան նստած թել կը մանէ կը տեսնէ զմեզ :

Ապա ուրեմն ներքնատուն խնձոր ուտելու իջնանք, ըսաւ Յակոբ, այնտեղ խոր խաւար է եւ զմեզ ոչ ոք չը տեսներ :

Ո՛հ, իմ սիրելի Յակոբ, կը կարծե՞ս յիրաւ թէ այնտեղ մէկը չը տեսներ զմեզ, միթէ չե՞ս գիտեր որ վեր ամէն բան դիտող աչքմբ կայ, որոյ տեսութիւն պատերէն անգամ կը թափանձէ և խաւարին մէջ կը տեսնէ :

Յակոբ լսելով զայս խիստ վախցաւ, իրաւունք ունիս, սիրելի քոյր իմ, ըսաւ, այնտեղ ուր մարդոց աչքը չը զօրեր Աստուած կը տեսնէ, ուրեմն պէտք է որ տեղ մը չ'երթանք և շատ րիւք մը չը գործենք :

Աննան տեսնելով որ Յակոբ իւր խօսքերը սիրով ընդունեց, շատ ուրախացաւ. ուստի իրեն ընծայեց մի գեղեցիկ պատկեր, որոյ վրայ նկարուած էր նախապէս ամուսնացեալ Աւքը՝ լուսոյ ճառագայթներէ շրջապատուած և տակն այսպէս գրուած.

« Տուր ինչ Աստուծոյ որ երկնի մէջ սուրբ Աւքն է Զոհաբաշտ զես հրապարակեալ երբեք » :



5. ԱՐԵՂԱԿ .

Անճրեւային մի տխուր օր՝ երբ իսահակ իւր խաղերէն կը զրկուէր, ըսաւ, « ա՛խ երանի թէ միշտ արեգակ լինէր » : Աստուած իսահակի փափագը կատարեց, երկար ժամանակ երկնից երես ամպ չ'երեւցաւ : Այս չորութեամբ պատճառաւ դաշտեր եւ ագարակներ մեծապէս վնասուեցան : իսահակի ծնօղաց պարտիզի խոտեր եւ ծաղիկներ ցամքեցան, մանաւանդ կանեփ որուն վրայ իսահակ խիստ կուրախանար : հազիւ թէ երկու մատ բարձրացաւ : զոյ՛ն յմա՛ս « կը տեսնե՞ս այժմ, ըսաւ, իսահակի մայր որ անճրեւ Արեգակէն աւելի պէտքէ : Մեզ մարդերուս համար ալ աղէկ չէ որ միշտ զուարթ եւ գեղեցիկ օրեր ունենանք, պէտքէ տխրու »

թիւն գայ, վիշտ եւ նեղութիւն տեսնենք որպէս զի բարի մարդ լինինք » :

Ուրէ օրոյն երկնից Արեւ եւ Անշրեւ Այլ երբոր-իւր եւ շէշ Աստուծայնն եւ պարբէն :



6. ԱՆՁՐԵՒ .

Մի վաճառական երբ տարեկան տօնապաճառէն պարկ մի լեցուն ստակով ՚ի տուն կը դառնար, ճանապարհին սաստիկ Անճրեւի բռնուելով սկսեց գանգատիլ թէ իւր ճամբորդութիւն ըրած օրը Աստուած այնպէս խառնակ օդ առած էր :

Վաճառականը ճամբան շարունակելով մշտաւ մի անտառախիտ տեղ, ուր յանկարծ տեսաւ որ մի գաղանարարոյ աւազակ ճամբու վրայ նստած հրացան դէպի ինքն ուղղեր կը գարնէ : Բայց վառօրը անճրեւէն թրջուելուն պատճառաւ հրացանը չը պարպուիր, զայս տեսնելուն պէս ձին մտրակեց եւ վտանգէն ազատեցաւ :

Երբ վաճառականը ապահով տեղ մի հասաւ, սկսեց ինքզինք մեղադրել « ես ինչ յիմար մարդ եմ ասաց, որ այս օրուան անճրեւէն կը տրտնջի : Եթէ օդ պայծառ եւ գեղեցիկ

լինէր, չէ՞ որ ես այժմ արեանս մէջ շաղախուած եւ մեռած էի : Իմ զաւակներս 'ի զուր վերադարձիս պիտի սպասէին, այն անձրեւ որմէ ես կը տրանջէի՝ իմ հարստութիւն եւ իմ կեանքն ազատեց » :

Ինչ որ յերկնց՝ Կ. Աստուծոյ կ'ընդունի  
Տրտանջ օր ընէր, Վերջանջ Բարէ կը գործէ :



7. ՄԻՐԱՆԻ ԳՕՏԻ.

Մի առատ եւ արդիւնաւոր անձրեւի տեղալէ վերջ՝ երկնից երես ամենազեղեցիկ ծիրանի գօտի երեւեցաւ : Փոքրիկն Արտաշէս զայս տեսնելով ուրախութեամբ աղաղակեց : « Այսպէս գեղեցիկ գոյներ տակաւին տեսած չեմ, ծիրանի գօտին իւր ծայրը մինչեւ գետին առուակի մեծ ուռենոյն վրայ ձգած է : Ծառի տերևներ զանազան գոյներով ներկուեր են : Ես չուտով այն տեղ պիտի գնամ ասաց, եւ այն գեղեցիկ գոյներէն ներկերուս տուփը լեցնեմ » :

Այս բսելով վեր ելաւ, արագ դէպի ուռենին վազեց, բայց շատ զարմացաւ տեսնելով որ ծառի տերեւներուն վրայ անձրեւի կաթիլներէն 'ի զատ ուրիշ բան չկար : Վերջապէս ականջով անձրեւէն էլ թրջուած տուն դարձաւ եւ այս վշտին վրայ հօրը գանգատեց :

Հայրը լսելով զայն ծիծաղեցաւ « որդեակ իմ, ասաց : Այն գոյները բնաւ ամանի մէջ չեն ամփոփիր : Անոնք արեղական ճառագայթներ են, որ անձրեւի կաթիլներու վրայ զարնելով մի քանի վարկեան գեղեցիկ կ'երեւին, նոքա իրական գոյներ չեն եւ բնաւ տեսողութիւն չունին : Այսպէս են նաեւ Աշխարհի փառաւորութիւններն, որոնք 'ի հեռուստ մեր աչքին գեղեցիկ կ'երեւին, բայց ունայն երեւոյթներ են, ասոր համար՝

« Զգոյշ եղիւ երեսոյնէն չը խաբուի  
Ապա Բէ ոչ տեղ օձ շարի կը վաստի » :



8. ԱՐՁԱԳՍՆԻՔ.

Փոքրիկն Գէորք արձագանքի վրայ զեռագողափար չունէր : Մի օր, երբ մարդագետնի վրայ կեցած կը խաղար « հօ, հօք. գուչեց » Անմիջապէս նոյն « հօ, հօք » ձայնը մօտակայ անտառէն լսուեցաւ : Գէորք այս ձայնին վրայ խիստ զարմացած աղաղակեց, « սով ես դու » ձայնը կրկնեց, « սով ես դու » էհ « կերելի մի յիմար տղայ ես » . « յիմար տղայ » լսեց կրկին անտառէն :

Այս պատասխանի վրայ Գէորք զայրացած սկսեց դէպի անտառ հայհոյանքներ տեսլալ :

Բայց իր խօսքեր ամէնն էլ ճշտութեամբ կը լսէր : Ուստի փայտ մի առած դէպի անտառը վաղեց զինք նախատող տղան պատժելու համար, սակայն երկար փնտռելէն յետոյ ոչ ոք գտաւ :

Յետոյ տունը դառնալով մօրը գանգատեց թէ՛ մի չար տղայ անտառին մէջ ծածկուած դիտ կը նստատէ : Մայրը լսելով զայն, « որդեակ իմ առայ, դու այդ խօսքով զքեզ կը վատնես եւ քո վրայ կը գանգատիս, դիտցիր, դու ոչինչ չես լսած բայց միայն քո խօսքեր, ինչպէս որ դու շատ անգամ քո երես ջուրին մէջը կը տեսնես, նոյնպէս լսած ես այս անգամ քո ձայնը անտառին մէջ : Եթէ դու դէպի անտառ բարեկամական խօսքեր ուղղէիր, անշուշտ պիտի լսէիր բարեկամական մի եւ նոյն խօսքեր » :

« Բայց առիկայ բնական է, շատ անգամ ուրիշներէ եկած նախատինք ճիշտ մերինի արձագանքն է : Ինչ կերպով որ մենք ուրիշներու հետ վարուինք, մի եւ նոյնը անոնցմէ կը զբաւնենք : Մի թէ իրաւունք է այն մարդէն բարիք սպասել երբ մենք նորա հետ չարութեամբ կը վարուինք » :

Ուստի ինչ որ յիշ անասին կը գուէ  
ձեռն փեռնայն որոն յայնէն կը լսե



9. ԱՂԲԻԻՐ .

Ամառուայ մի տաք օր երբ փոքրիկն Յովհաննէս 'ի դաշտ կ'երթար, կէս օրուայ սաստիկ տաքութենէն իւր երեսներ այլեցան, լեզուն էլ ծարաւէն կը պտպտկէր : Այս վիճակի մէջ մի պաղ եւ վճիտ աղբիւրի քով հասաւ որ կանաչ կաղնիի ստուերով ծածկուած մի աղաւթէ կը բղխէր :

Յովհաննէս առանց համբերելու այն պաղ ջուրէն խմեց եւ իսկոյն թունալով գետին ինկաւ : Յետոյ հազիւ թէ վեր ելնելով տուն գնաց և վտանգաւոր ջերմէ բռնուեցաւ : Հիւանդութեան անկողնոյ վրայ ինկած հոգւոյ հանելով կըսէր անպաղար « ա՛խ սփ զիտէր թէ այն աղբիւր այնպէս մահացու թոյն ունէր » :

Յովհաննէսին հայրը լսելով զայն՝ առայ « քո հիւանդութեան պատճառ այն աղբիւր չէ, որդեակ իմ, այլ քո աննախատեսութիւն եւ անհամբերութիւն » :

Որպէ՛ անշուշտ անտառն որ լին  
կրնայ որոնել ձեռն փեռնայն : »



10. ՄԱՂԻԿ .

Գարնան մի գեղեցիկ առաւօտ Մարիամ գլուղի մօտակայ դաշտ ծաղիկ ժողովելու գնաց :

Մացառի մի քով ուր շատ գեղեցիկ ծաղիկներ կային՝ սկսեց ուրախութեամբ ժողովել :

Այս միջոցին մի գիւղաղի հեռուէն ձայնեց իրեն , « Օրիորդ այդ մացառէն հեռու կեցիր , այդտեղը շատ թիւնաւոր օձեր կան » :

Մարիամ ընելով զայն՝ զարհուրած մացառին մէջ նայեցաւ , բայց իւր ծաղիկ ժողովելու փափաքը այնչափ մեծ էր որ չուտով մոռացաւ : « Ահա այնտեղ կապոյտ և ամենագեղեցիկ ծաղիկ մի կայ , ասաց , խոտերէն վեր բարձրացած , երթամ այն ալ քաշեմ » :

Մարիամ դեռ ծաղիկին չէր հասած , յանկարծ մի օձ մացառէն դուրս սողալով՝ նորա ձեռքի վրայ փաթթուեցաւ , և զայն թիւնաւորեց : Մի քանի ժամէն յետոյ կայտառ եւ սիրուն օրիորդը դիակ դարձաւ :

Մի հասարակ , մի հասարակ փոփոխելի

Այս բն ոչ նա կը բերէ մահ անյետ :



11. ԽՆՁՈՐ.

Առ առօրեան դէմ փոքրիկ Գրիգոր պատահանէն դուրս նայելով դրացիի պարտիզի մէջ տեսաւ շատ կարմիր և գեղեցիկ խնձորներ , որոնք ծածկու տակ կանաչ խոտերու մէջ

ցրուած էին : Զանոնք ուտելու փափաքէն վարվազեց , պատի ծակէն սողալով պարտէզ մտաւ եւ գրպանները խնձորով լեցուց :

Այս միջոցին յանկարծ՝ դրացին փայտը ձեռք պարտիզի դռնէն ներս մտաւ : Գրիգոր տեսնելով զայն անմիջապէս դէպի պատի ծակ վազեց եւ կուղէր նորէն դուրս սողալ :

Բայց լեցուած գրպաններու պատճառաւ մեր փոքրիկ գոզը պատի ծակի մէջ մնաց , դուրս ելնել չը կրցաւ , մինչև որ գողցած բոլոր խնձորները գրպանէն հանելով պարտէզ ձգեց : Դրացին կը դիտէր գինք , սակայն առաջին անգամ լինելուն ներեց իրեն , սաստելով որ մի անգամ եւս նոյն չարիք չը գործէ :

Թէ օրորին հարստութեան յետ բերեալ

Մի հասարակ որ անպարտ ժամանակս :



12. ՏԱՆՁ.

Մարիամ անունով մի բարեսիրտ տիկին իւր Բագարատ որդին մի իշխանի տուն ծառայութեան տուաւ : Այն ժամուն երբ իւր որդիէն պիտի բաժնուէր՝ զինք զրկեց և լալով մայրական մի քանի իրատներ տուաւ : Որդեակ իմ ասաց , « երբէք Աստուած չը մոռանաս , ինչ

որ կընես գիտցիր որ նորա աչքին առաջն ես :  
Իշխանին առաջ որ քո տէրն է , միշտ որդիա-  
կան երկիւղածութիւն ունեցիր , սիրէ իւր զա-  
ւակներ եղբայրաբար : Ասոնց հետ մէկտեղ կը  
պատուիրեմ . քեզ զգուշանալ որկրամուտութենէ  
որ քո դիխաւոր պակասութիւնն է » :

Բագարատին պաշտօնն եղաւ տիրոջ սեղա-  
նին ծառայել : Մի օր՝ երբ շաքարով եփուած  
տանձեր արծաթեայ ամանով տիրոջ սեղան  
պիտի տանէր , անոնցմէ մինը ուտելու շատ փա-  
փաքը ունեցաւ : Այն ժամանակ թէպէտ մօր  
խրատը յիշեց բայց աւելի իւր փափաքին հետե-  
ւելով տանձերէն մինը կուլ տուաւ : Խեղճ պա-  
տանին հազիւ թէ ամանը տիրոջ սեղանին վրայ  
դրած էր , գետին էյնաբով դիակ դարձաւ : Այն  
տանձը զոր Բագարատը կուլ տուաւ խիստ օաք  
լինելով նորա կոկորդն եւ ստամոքս խորու-  
ված էր :

Չար փոխքներ ին գոանեց չը հաւածեն  
երբ եւ լինէ նոցա ըստ կը կրեն :



15. ԸՆԿՈՅՁ

Գեղին մօտ ընկոյզի մեծ ծառին տակ եր-  
կու տղաներ մի ընկոյզ գտան : Այդ իմն է ասաց

Գէորք . որովհետեւ զայն առաջին անգամ ես  
տեսայ : Չէ՛ , աղաղակեց Գրիգոր , իմն է որով-  
հետեւ ես զայն գետնէն վեր առի : Ընկոյզի  
վրայ երկուքը կռուիլ սկսան :

« Ես կուզեմ ձեր կուլը վերջացնել » , ասաց  
մի երիտասարդ՝ որ նոյն ժասուն այն տեղէն  
կանցնէր : Սա երկու տղայոց մէջ մտաւ եւ ըն-  
կոյզը բանալով ասաց , « մի փեճեկ կը պատ-  
կանի անոր որ ընկոյզը առաջին անգամ տեսաւ ,  
Միւսն անոր՝ որ զայն գետնէն վեր առաւ . իսկ  
կթուռը կը պահեմ ինձ , ըրած դատաստանիս  
ի վարձ » :

« Այսպէս է , շարունակեց նա խնդալով ,  
շատ դատաստաններու սովորական արդիւնքը » :

Թէ մշտ կուլ ին դար տեն  
Կորին կորստ կը ըստին :




14. ԸՆԿՈՅՁԻ ԿԵՂԵԻ .

Փոքրիկն Մարիամ պարտիզին մէջ գտաւ  
մի ընկոյզ որ տակաւին կանաչ կեղեւով պա-  
տած էր , կարծելով թէ ինձորէ սկսաւ ուտել ,  
բայց իսկոյն « վայ սրչափ դառն է » ըսելով ,  
գետին ձգեց :

Իւր Ստեփաննոս եղբայր որ աւելի խելա-

հաս էր, շուտով ընկոյզ վեր առաւ, վրայի կեղեւք հանեց, եւ ասաց, « ես այս դառն կեղև ձգելով միայն նորա մէջ ծածկուած քաղցր կլթունը կուտեմ որ խիստ ակորժելի է ինձ :

— Թեպէտ դառնէ արմար իրարուն  
Այլ պրտոյ նորա է քաղցրութիւն :



15. ԿՍՆԱԶ ՃԻԻՂ .

Ղուկաս մի թեթեամիտ և չարագործ տղայ էր, երբէք բարի խրատի չէր լսեր, մանաւանդ թէ կ'արհամարհէր դանոնք :

Մի օր իւր Սաթենիկ քրոջ հետ պարտէզ գնաց, պարտիզի մէջ Սաթենիկի ածուն գեղեցիկ ծաղիկներով լեցուն էր, իսկ Ղուկասին խոպան և անպէտ խոտերով ծածկուած :

« Եղբայ՛ր, եղբայ՛ր, ասաց աշխատասէր Սաթենիկ, դուն քո ածուն գեռ բնաւ կարգադրած չես, կը յիշեմ ինչ որ մեր մայր ձեզ համար կատէր թէ դուն քո կենաց մէջ կանաչ ճիւղի վրայ չը նստիս » :

Ղուկաս ծիծաղեցաւ, և փաթթուելով մեծ տանձենիին վրայ ելաւ ու գոչեց, « Սաթենիկ, միանգամ վեր նայէ, ես այժմ բոլորովին մի կանաչ ճիւղի վրայ ելած եմ, հազիւ թէ խօսքը

լմնցուցած էր, յանկարծ ճիւղք կտորելով Ղուկաս վար ինկաւ և բազուկը ջախջախեցաւ :

Բարի իրարներ մտիկ չընող մի ողջ  
Իւր կեանքի մըլ առանց պարտի չը մար :



16. ՀԱԶՈՒԱԳԻԻՏ ԲՍՆԶԱՐ .

Երկու աղախիներ Մարգարիտ և Հռիփսիմէ, պտուղներով լեցուն մի մի կողով բարձած քաղաք կ'երթային :

Մարգարիտը՝ իւր բեռան ծանրութենէն կը արսնջար եւ միշտ հողոց կը հանէր : Իսկ Հռիփսիմէն ընդ հակառակ կը ծիծաղէր եւ բնաւ հող չէր բներ :

Ինչպէ՞ս կը լինի որ դուն կը ծիծաղիս, հարցուց Մարգարիտ, քո կողով իմինիս չափ ծանր է եւ դու ինձ չափ զօրաւոր չես :

Հռիփսիմէն, ասաց, ես մի այնպիսի բանջար ունիմ բեռանս մէջ զորած որ հազիւ կըզգամ բեռանս ծանրութիւն, դու ալ ինձ պէս բրէ :

Վայ, աղաղակեց Մարգարիտ, մի հազուադիւտ բանջար պիտի լինի այդ, կ'աղաչեմ ինձի էլ տոա դորա անունը :

Հռիփսիմէն, պառասխանեց, — Այս հազու-

ւազիւտ խոտ, որ մարդոյս ամէն գծուարու-  
թիւններ կը թեթեւցնէ՝ կ'անուանի համբերու-  
թիւն :

Եւրո է- Բեթէ- կը որոշէ ճարտ Բն ու Լեւի  
Թէ որոշն Գլ Հ-ճիւր-Բեան Գ անի :



17. ԲՈՂՎ .

Մի ազքատ երկրագործ իւր պարտիզին մէջ  
այնպէս մեծ բողկ մշակեց, որուն վրայ ամէն  
մարդ կը զարմանար : Ես այս բողկ կը նուիրեմ  
ասաց մեր բարերար իշխանին որ դաշտ և պար-  
տէզ կը սիրէ եւ զայն լաւ մշակելուն վրայ շատ  
կ'ուրախանայ :

Այս ըսելով իշխանի ապարանք տարաւ  
բողկը զոր տեսնելով իշխանը շատ գովեց իւր  
աշխատութիւն եւ իւր բարի գիտաւարութիւն ,  
իրեն էլ երեք ոսկի պարգեւ տուաւ :

Մի ուրիշ գիւղացի, որ շատ հարուստ այլ  
ազահ էր, լսելով զայս ասաց, « ես էլ իմ մեծ  
հորթ կը նուիրեմ այն ողորմած իշխանին : Եթէ  
նա մի անպիտան բողկի համար երեք ոսկի  
պարգեւ տուաւ, ապա օրջափ պիտի սայ այս  
գեղեցիկ հորթին համար » :

Այս մտադրութեամբ հորթին վիշը կ'ապ

գնելով ապարանք տարաւ և իշխանին նուիրեց,  
ինքրելով որ ընդունէ զայն : Իշխանը խելոյն  
հասկցաւ թէ ինչո՞ւ այն ազահ գիւղացին այն-  
պէս առատարատութեամբ հորթը իրեն կը  
նուիրէր, ուստի իմացուց իրեն թէ իւր նուէրը  
չընդունիր :

Բայց գիւղացին միշտ յառաջ կը քշէր  
հորթը, կը խնդրէր, երբեմն ալ մուրալու ձևով  
կ'ազաչէր որ իւր նուէրը չ'արհամարհէ :

Եստ լաւ, ասաց, խելացի իշխան, որով-  
հետեւ այդ մասին կըստիպես զիս ես ալ կ'ըն-  
դունիմ : Բայց ձեր այդ առատարատութեան  
համար ինձ չի վայելեր որ ձեզ ձեռնունայն  
դարձնեմ : Ուստի քեզ 'ի վախարէն կուտամ մի  
այնպիսի նուէր, որ ինձ համար եռապատիկ  
աւելի կ'արժէ քան քո հորթ : Զայս ասելով 'ի  
վարմացումն եւ իմեծ ցաւ գիւղացւոյն, վե-  
րայիչեալ մեծ բողկը իրեն տուաւ :

Մերո անասան շէ Վրեդեր դորդեւ  
Զայ որոնէ օրոյն որ նախորին կը Բերէ :



18. ԿՍՂՍՄԲ .

Երկու արհեստաւոր աշակերտներ՝ Յովսէփ  
եւ Յարութիւն մի օր բանջարի մշակութեան

պարտէզ զնային :

Տես , ասաց , Յովսէփ Յարութիւնին , « տես սրջափ մեծ են այս խոտերու գլուխներ » :

Ամենքերին , ըսաւ , Յարութիւն , որ խիտ պարծենկոտ էր , դուքս բնաւ մեծ չեն : Ես իմ ճամբորդութեանս մէջ մի այնպէս խոտի գլուխ տեսայ որ դիմայի քահանայի տունէն աւելի մեծ էր :

Յովսէփ որ պղնձագործ էր , ասաց , « այդ այնչափ մեծ չէ , ես մի անգամ պղնձագործին հետ մի պղինձ շինեցի որ այս եկեղեցիէն աւելի մեծ էր » :

« Ո՛հ , Աստուած իմ , աղաղակեց Յարութիւն , ի՛նչ բանի պէտք էր այդչափ մեծ պղզինձ » : Յովսէփ պատասխանեց , « անոր համար որ նորա մէջ խոտերու մեծ գլուխներ եփէին » :

Յարութիւն Յովսէփին ըսածը զգալով , ամոչեց , « գիտեմ ասաց իմ մեծ սուտը ծաղրելու համար խօսեցար , ուրեմն թող ինձ խրատ լինի՛ :

Եթէ մի մարդ սուտ խօսերով մեծաբանէ  
Ես ունի որեւէ ամաչելով պիտի լսէ :

\*

\*

\*

19. ՍՈՒՆԿԵՐ

Փոքրիկ Կատարինէին մայրը մի օր զինք

անտառ խրկեց սունկ ժողովելու : Կատարինէն վերագարձին « մայր իմ , աղաղակեց , այս անգամ խիտ գեղեցիկ սունկեր բերած եմ » : Այս բերով կողովք բացաւ , « տես ինչպէս կարմիր ու ծիրանի են , վրանին մարդարտի պէս ծածկուած : Կանաչագոյն տեսակներէն էլ ունիմ , որոնցմէ դու վերջին անգամ բերիր : Անոնք ինծի այնչափ գեղեցիկ չերևեցան : Բայց որովհետեւ ժողոված էի չուզեցի ձգել » :

« Ո՛վ միամիտ եւ տխմար աղայ » , աղաղակեց մայրը զարհուրած , « այդ գեղեցիկ սունկեր թէպէտև ծիրանի ու մարդարտագոյն , սակայն թիւնաւոր ճանճատուններ են և ով որ անոնցմէ ուտէ կը մեռնի : Բայց միւս կանաչներ զորո դու իրենց տղերդութեան պատճառաւ կը անարգես՝ լաւագոյներն են » :

« Այսպէս է նաև , որդեա՛կ իմ , աշխարհի փառաւորութիւնները , առաքինութիւն իւր համետ երևոյթի պատճառաւ քիչ անգամ մարդոց ուշադրութիւն իւր վրայ կը դարձնէ , իսկ պակասութիւնք փայլուն գոյներով կ'երևին և յիմարը կը զարմայնեն : Մեղքերն ևս մի հաճելի երեւոյթ ունենալուն՝ մեզ սիրելի կը լինին , ասոր համար՝

« Զգոյշ եղէ՛ր , ինչպէ՛ս մեղքեր մեզնի հաճոյք կը խոստանան  
« Բայց ինչպէ՛ս ինչ են նոյս որ գեղեցիկ կ'երևան » :

Գեղացիին մէկ ընկոյզի ծառի ստուերի տակ պառկած՝ մտաւայ պարտիզի մէջ մշակուած դդմենիի թուփը կը գիտէր . զարմանք, ասաց ինքնիրեն դուսիս շարժելով : « Այս ի՞նչ է՝ ես բնաւ չեմ հաւնիր : Գդմենին՝ այն փաքրիկ եւ աննշան թուփը, այնպէս մեծ պտուղ տուել է, իսկ այս ահաւոր եւ փառաւոր ընկոյզներն միայն փոքր եւ աղքատ պտուղներ ունին : Եթէ աշխարհ ես ստեղծէի անտարակոյս ընկոյզի ծառը՝ մեծ, ոսկեգոյն եւ լարի ծանրութիւն ունեցող դդմենիով պիտի զարդարէի, որ շատ փառաւոր եւ գեղեցիկ պիտի երևար » :

Գեղացին այսպէս մեծարանած ժամանակ, ծառէն մի ընկոյզ նորա քթի վրայ ինկաւ եւ զայն արունեց : « Վա՛յ աղաղակեց գեղացին զարհուրած, ահա ՚ի խրատ յիմար եւ անպատեն հասարակուս, քթիս մի հարուած ( պնթրեկ ) կերայ : Եթէ այս ընկոյզ դդու՞մ լինէր, ի՞նչ պիտի լինէր քթիս վիճակը, ո՞չ ապաքէն պիտի ջախջախուէր » :

Իմաստութեամբ և խիստ խորին խորհրուով

Սրեղէնց Աստուծոյ բուրբ աշխարհ իւր խօսուի :



Ստիպալի փոթորիկ անցնելէն յետոյ, հայր հօւրքարտոս իւր Սիմէօն որդւոյն հետ դաշա գնաց տեսնելու համար թէ փոթորիկ ի՞նչ վնաս տուել է :

Ճանապարհի վրայ փոքրիկ Սիմէօն յանկարծ աղաղակեց, « տես, հայր իմ, տես, ինչպէս այն ամենամեծ և հաստ կաղնին ինկեր և գետին փռուեր է, իսկ առուակի քովի ակար Ռուենին, որչափ զարմանք որ անվնաս ու կանգուն կը կենայ : Ես կը կարծէի թէ փոթորիկ ուռենին աւելի շուտ կը կոտրէ քան թէ կաղնին » :

Սիմէօնի այս խօսքին վրայ հայրն ասաց, « որդեա՛կ իմ, այն հպարտ կաղնին որ ինքզինք ծառէ չի կրնար պէտք է կտրի, իսկ խոնարհ եւ դալար ուռենին սաստիկ փոթորիկին առաջ ինքզինք ծռիլ զիտէ անոր համար չը կտորի » :

Յամարութեամբ ոչ մի անգամ չէ հնար

Խոնարհութեան եւ լաստոյն ճանապարհ :



Անցեալ ժամանակներու մէջ մի օր երկու

Մերիտասարդներ՝ Մանուէլ և Պօղոս, դատաւորին ներկայացան :

Մանուէլ դատաւորին ասաց, « երեք տարի առաջ երբ ես ճամբորդութիւն կընէի, այս մարդուն, զոր իմ ամենահաւատարիմ բարեկամ կը ճանաչէի, պահ տուի պատուական քարերով զարդարուած մի թանկագին մատանի: Բայց այժմ կ'ուրանայ եւ զայն ինձ վերագործնել չուզեր »:

Պօղոս՝ ձեռք սրտին վրայ դնելով, « կ'երդնում, ասաց, պատուոյս վրայ որ նորա ասած մատանին առած չեմ: Իմ Մանուէլ բարեկամ կ'երեւի թէ ուշք կորսնցուցած է »:

Դատաւորը Մանուէլին հարցուց, « կրնա՞ս վկայ բերել որ դու անոր մատանի տուած ես »:

« Կը ցաւիմ, պատասխանեց Մանուէլ, մէկը չի կար այն տեղ, բաց ի կաղնիի մեծ ծառէն, որուն տակ մենք խրաբմէ բաժնուեցանք »:

« Պատրատ եմ երդնուել, կրկնեց Պօղոս, որ ինչպէս մատանին նոյնպէս եւ այն ծառը բնաւ տեսած չեմ »:

Դատաւոր Մանուէլին ասաց, « գնա՛, այն ծառէն ինձ մի ճիւղ բեր, կուզեմ զայն տեսնել: Իսկ դու Պօղոս այս տեղ կեցիր, մինչեւ որ նա վերագառնայ »:

Մանուէլ գնաց, մի քանի վայրկեանէ յետոյ՝ « ինչո՞ւ արդեօք Մանուէլ չեկաւ », հարցուց

դատաւոր, « Պօղոս՛, բաց միանգամ այդ պատուհան եւ տես թէ չե՞րեւիր »:

« Չէ տէր իմ, ասաց Պօղոս, նա այնպէս շուտ չի կրնար գալ, որովհետեւ այն ծառ այս գիւղէն մի ժամու ճամբայ հեռի է »:

« Ո՛վ անասուած և խաբեբայ մարդ, դո՛չեց դատաւոր, դուն ծառի համար երգում բրիր, այժմ՝ ինչպէս նորա հեռաւորութիւն գիտես, յայանիէ ուրեմն որ ինչպէս ծառին նոյպէս մատանւոյն վրայեօք տեղեկութիւն ունիս »:

Պօղոս պարտաւորեցաւ մատանին ետ տալ եւ այն ծառէն կախուիլ:

Մեծիւմ շքե՛տ երբ որ լինի ևս յայտնի  
Արբէն Ասորում բնիկ տե՛ր եւ կըտարի:



25 . ԱԳԱՐԱԿ՝

Ազքատ Նիկողայոսի տնակ, վայրի մացառներով շրջապատուած տեղ մի էր:

Հունձքի ժամանակ մի խիստ տաք օր, Նիկողայոս կաղնիի ստուերի տակ պառկած միջոյն մի գիւղացի ցորեան բարձած սայլով այնտեղէն կ'անցնէր: Նիկողայոս խիստ նախաձուտ աչօք այն ցորենով լեցուն սայլին նայեցաւ և հազիւ գիւղացիին բարևեց:

Գիւղացին սայլը դադրեցնելով Նիկողայոսին  
ասաց, « բարեկա՛մ, եթէ այդ մացառուս երկիր՝  
որ քո սեփհականութիւնէ, ամէն օր քո ծոյլ  
մարմնոյն հասակին չափ տեղ մշակես՝ մի տար-  
ւոյ մէջ սայլիս վրայի ցորենէն աւելի պիտի  
վաստկիս » :

Նիկողայոս այս խորհուրդին հետեւեցաւ,  
իւր տան շրջապատի մացառուներ հետզհետէ  
քակելով մշակեց եւ քիչ միջոցէն այնպիսի  
աղարակ մի ունեցաւ որ իւր ընտանիքով առա-  
տու թեամբ կ'ապրէին :

Ծոյլէ մոյն որ մշտ բարեկէն կը ներշնչէ  
Աշխարհուէր մարդոսն հոց, Ըստ շէ պիտի :



24. ՀՈՒՆՁԲ.

Մի գիւղացի իւր Գառնիկ անուն փոքրիկ  
տղային հետ գալտ գնաց, տեսնելու համար  
թէ հնձելու ժամանակ հասած է: « Տե՛ս, հայր  
խմ, ասաց անփորձ պատանին, հասկերէն քա-  
նիներ ի՞նչպէս իրենց գլուխ ուղիւ բռնած են :  
Ինձ կերելի որ նոքա, ամէնէն ընտիրներ պի-  
տի լինին. իսկ միւսներ՝ որոնք ծռած եւ գլուխ-  
նին դէպի վար կախած են յոյսնի է թէ ան-  
պէտ վտիաներն են » :

Հայրը որդւոյ այս խօսքին վրայ մի քանի  
հասկ կորզելով ասաց իրեն : « Որդե՛ակ իմ, այս  
հասկերուն նայէ որոնք իրենց գլուխը հզար-  
տօրէն ի վեր բռնած էին՝ ահա բոլարովին  
փաշխայած եւ պարագ են : Իսկ անոնք որ խո-  
նարհաբար գլուխնին ծռել՝ գեղեցիկ ցորեննե-  
րով լեցուն են » :

Իւր հընի մշտ վեր բռնող մարդէ  
Որ ժամանակ բարէ դրոշմը բարեկէնէ :



25. ՈՒՍՈՆ ( ԿՆՈՒՂ ).

Չեռնածուին մէկ քաղաքի իշխանէն խնդ-  
րեց, որ իւր առաջ նման չը տեսնուած մի խաղ  
ներկայացնէ : Չեռնածուն հրաման ընդունելն  
յետոյ, խնդին աման մի լեցուն կակուղ կլուլ  
ձեռքն առած սենեակ մտաւ եւ ներկայեց մի  
ասեղ, որ ամէն անգամ կլուլներուն հետ վեր  
ձգած ժամանակ կլուլներ անպիւրէպ ապրին ծայր  
կը շարուէին :

Իշխանը զայն տեսնելով ասաց « բարեկամ,  
յիրաւի ի իստ սեծ աշխատութիւն կրած եւ շատ  
էլ ժամանակ կորսնցուցած ես այդ յաջողու-  
թիւն ձեռք բերելու համար : Այժմ զքեզ դու-  
րա համար սիտի վարձատրեմ » : Այս ասելով

Ժառայն գոչեց և ծածուկ իրեն հետ խօսեցաւ :  
Ծառայն խնդոյն դուրս գնարով լեցուած պարկ  
մի ուսին վրայ դրած ներս մտաւ : Չեռնածուն  
տեսնելով զայն խիստ աքախացաւ , կարծելով  
որ լեցուած պարկը ոսկի է :

Երբոր ծառայն տիրոջ հրամանին վրայ  
պարկը բացաւ , նորա մէջ ուրիշ բան չք կար  
բայց միայն կլուլ : « Բարեկամ , ասաց իշխան ,  
որովհետեւ ձեր խաղ մարդկութեան օգտակա-  
րութիւն չունի , հարկէ զձեզ անպէտ նութեամբով  
վարձատրել : Արդէն ձեր խաղին համար դոքա  
շատ պէտքեն , զի կրնան շուտով պակսիլ : Այս  
ասելով կլուլներ Ծեռնաձուկն նուիրեց » :

Մի աշխարհի որ ուսանի այն բաներ  
Որ ժողովուրդն Բնա օգուտ չի բերեր :



26 • ՈՍՊԵՐ •

Հարուստ մարդ մի կար որ խիստ խնայո-  
ղութեամբ կ'ապրէր : Իւր կերակուրն էր միայն  
սոսք , որ ամէնէն առողջ եւ աննդարար կը հա-  
մարէր :

Բայց որպէս զի անորմէ էլ շատ չուտէ , ոս-  
պեր կը համրէր և կուզէր միայն այնչափ ուտել  
որ քաղցէն չք մեռնի :

Սակայն իւր այս սոսք համրելու երեսէն  
մեծ վնաս կրեց , որովհետեւ մի օր երբ սոսք  
համրելու զբաղած էր և աստ անդ ցրուածներ  
կը ժողվէր , ծառայն անդիէն մի քանի մախաղ  
ցորեան գողացաւ :

Այս հարուստ խիստ աղքատ վիճակի մէջ  
մեռաւ , իւր մահուան վերջի խօսքերն էին՝

Թե լաւ մէջ գործն մէջ ինչպէս  
Եւ մի եւ նոյն նախ ի մէջ գործարարէ :



27 • ԿՏՍԻ •

Հարուստ տիկնոջ մէկ ուզեց իւր արտին  
մէջ ամենաքնտիր կանեփ մշակել : Մի կտաւա-  
վաճառ իրեն գարով ասաց « տիկին , քո արտի  
կանեփի սերմերէն , որ շատ արդիւնաւոր չէ ,  
պարկ մի լեցուն ինձի տուր , ես 'ի փոխարէն նոյն  
չափ օտար երկրի լաւ սերմերէն բերեմ քեզ-  
բայց դու պէտքէ որ մի ոսկի վրայ տաս » : Տի-  
կին այս փոխարինութեան մասին շատ գոհ էր :

Սակայն կտաւավաճառ մի նենգաւոր մարդ-  
լինելով կ'ուզէր զտիկին խաբել , մի ոսկի առ-  
նելով իւր սերմ կրկին իրեն վերադարցունել :

Ուստի ամառարանօք սերմը բերաւ , տի-  
կին էլ ամենայն ուրախութեամբ քնդունեց և

չուտով պարպէլ տուաւ, այս միջոցին սերմի մէջ  
փայլուն մի բան երեւեցաւ, տիկին հետաքր-  
քիր լինելով տեսաւ որ իւր ոսկեայ մատանին  
էր, զոր անցեալ աշուն սերմերու մէջ կորսնցու-  
ցած էր :

«Դու մի խաբեբայ մարդ ես», ասաց տիկին,  
կտաւաժաճառին դառնալով, «քո այս խաբէու-  
թիւն ահա յատնի եղաւ, փոխանակ օտար սեր-  
մի՝ իմ ունեցածը՝ ինձի ծախել ուղեցիր: Այժմ  
ի պատիժ քո այս չարութեան մի ոսկի ստանա-  
լու տեղ դուն պէտք է նոյն չափ վճարես ինձ»:

Այս ատելով զինք դատաւորին մատնեց  
իւր պահանջն ստանալու, խաբեբան այնուհե-  
տեւ իւր համարումը կորսնցնելով կտաւաժա-  
ճառութիւնը այլ ևս չի կրցաւ շարունակել:

Խաբէութեան որպի լարդեր յետո՛ւ լին

Մէջո՛ր փոխանակ շահո՛ւ կորստո՛ր կը լուսակն:



28 ՀԱՐՈՒՍՏ ԵՒ ԱՂՔԱՏ .

Հարուտ մարդուն մէկ կը բնակէր մի փա-  
ռաւոր տան մէջ, ունէր շատ ծառաներ եւ մե-  
ծագումար հարստութիւն: Բայց իւր գանձերը  
պահպանելու հոգէն բոլոր գիշեր անկողնոյ մէջ  
կը չարչարուէր և հանգիստ քնանալ չէր կրնար:

Սա մի աղքատ դրացի ունէր որ օրն ի բուն  
կ'աշխատէր եւ երեկոյ իւր զաւակաց հետ կ'եր-  
եեր, կը պարէր, կ'ուրախանար, գիշերն էլ  
հանգիստ եւ անհոգ կը քնանար:

Հարուտը իւր դրացիի վիճակի վրայ նա-  
խանձելով, մի գիշեր գաղտնի նորա տուն մտաւ  
եւ մի քսակ ոսկի դրան ետեւէն կախելով տուն  
դարձաւ: Աղքատը առաւօտեան դէմ քսակով  
ոսկին տեսնելով ուրախութեամբ վերցուց եւ  
գաղտնի տեղ մի պահեց: Այնուհետեւ սկսաւ  
մտածման մէջ ինչալ թէ մի գուցէ ոսկին իւր  
պահած տեղէն գողցուի, ասոր համար զայն  
իւր անկողնոյ տակ թաղեց եւ հիւանդ եմ ա-  
տելով պառկեցաւ: Ոսկին պահելու հոգէն աղ-  
քատին երգն ու պարը դատրեցան եւ տան  
ուրախութիւնը տխրութեան փոխուեցաւ: Մի  
քանի օրէն յետոյ հարուտը աղքատին գնալով  
առանձին յայտնեց թէ պահած ոսկին իւրն է և  
թէ պէտքէ չուտով իրեն յանձնէ, ապա թէ ոչ  
զինք կախել կուտայ: Դրացին զարհուրած ու-  
կին չուտով հարուտին յանձնեց եւ սկսաւ ա-  
ռաջուան պէս աշխատել, երգել, պարել եւ  
գիշեր քաղցր ի բուն ննջել:

Հարստի կեանք միւր հոգերով կը ծածկուի  
Աշխատութեամբ մարդս երջանի կը լինի:



29. ԱԳԱՐԱԿԻ ԳԱՆՁ .

1—Մի հեռու աշխարհի մէջ մի օր երկու գիւղացիներ դատաւորին ներկայացան :

Գիւղացիներէն մին ասաց դատաւորին, « ես իմ այս գրացիէն մի կտոր արտ գնեցի, զայն մշակելու ժամանակ նորա մէջ մի գանձ գտայ, զոր ինձ պահել մեղք կը համարիմ, որովհետեւ ես միայն հողք գնած եմ, նորա գանձի վրայ իրաւունք չունիմ » :

Ասոր հակառակ միւս գիւղացին կը պնդէր թէ ինքն էլ իրաւունք չունի զայն առնելու, « որովհետեւ գանձը պահող ես չեմ, կասէր, ուստի չեմ կրնար տէր լինիլ: Ասորմէ ՚ի զաա իմ արտք իւր մէջի ամէն եղածներով ծախեցի, նորա մէջէն ոչ մի բան ինձի վերապահած չեմ: Որոչէ՛ այժմ, ո՛վ իմաստուն դատաւոր, ասաց գիւղացին, թէ գանձը որի՞ն կը վերաբերի » :

« Ես լսած եմ, ասաց դատաւոր, թէ մէկիդ արու զաւակը միւսի դստեր հետ ամուսնանալ կուզէ, ասէ՛ք ուրեմն այդ գանձը՝ իբր օժիտ Ձեր զաւակաց » :

Բարեւիրտ եւ համեստ գիւղացիներ զայն կատերելու խոստացան եւ զո՛հ սրտով իրենց տուն գնացին :

Պատուոյ շքանշան, կեանք անբար

Մէջ ԲՈՆ ԿԸՒ ԱՊՐԱՆԻ ԵՄ ԲԱՐԵՎ

2—Մի օտարական որ այս դատաստանին ներկայ էր, խիստ զարմանալով ասաց, « եթէ մեր երկիր լինէր խնդիր բողոքովին ուրիշ կերպարանք կ'առնոյր: Գնողք պէտք էր գանձը ծածկէր եւ միւսին բան մի չը տար: Եթէ վաճառողք իմանալով բողոքելու եղնէր, յայնժամ նորա դատաստան աւելի շատ պիտի արժէր քան բոլոր գանձը » :

Դատաւորն այս խօսքին վրայ զարմացած հարցուց իրեն, « արդեօք ձեր երկիր Արեգակ կը ծագի՞ », « Ի՞նչպէս չէ » պատասխանեց օտարական, — « կ'անձրեւէ՞ », շարունակեց դատաւոր: — « Անշուշտ », պատասխանեց նա: — « Այդ բան յիշաւի զարմանալի է » ասաց դատաւոր եւ յարեց՝ « կա՞յ արդեօք ձեր երկիրն էլ կով եւ սլխար » — « Խիստ շատ » պատասխանեց օտարականը :

« Ապա ուրեմն, ասաց դատաւոր, Ամենաբարին Ատուած անտարակոյս այդ անմեղ կենդանեաց համար ձեր երկրին Արեւ եւ անձրեւ կուտայ, ապա թէ ոչ դուք արժանի չէք » :

Չը ԼԻՒԵ ԲԱՐԵՎ, ԵՐԼՆԿԻՆՆԻՆ ԵՄ ԵՐԼԵՐ

ՈՐ ԼԻՒԵ ԿՈՒՄԻ ԵՄ ԵՄ ԲԱՐԵՎ ԿՈՒՄԻՆԻՆ:



Մարկոս կը բնակէր մի գեղեցիկ տան մէջ որոյ շուրջ կային մի մեծ մարգագետին և բազմաթիւ պտղատու ծառեր լի պտուղներով : Սորա մօտ կար մի աղքատ դրացիի մարգագետին որոյ մի ծայր իւր մարգագետնոյ մէջ մտած էր : Անխիղճ Մարկոս կուզէր դրացիի այս մասը իւր ունեցածի հետ խառնել : Այս խորհրդով մի գիշեր երկու կալուածոց սահմանը որոշող քարը գաղտնի գրացիի մարգագետնոյ մէջ մղեց՝ բաւական տեղ :

Քիչ ժամանակէն յետոյ, մի օր երբ Մարկոս սանդուխով ծառի վրայ ելած էր՝ յանկարծ սանդուխէն դէպի ետեւ գառնալով վար ինկաւ եւ վերայիշեալ սահմանաքարին պատահելով ծոծրակը ջախջախեցաւ :

Եթէ Մարկոս սահմանաքար իւր տեղէն չի փոխեր, անտարակոյս անորմէ հեռու կահուղ գետնի վրայ էյնալով այնչափ չք արտի վնասուէր :

Ասոր համար տուակ եղաւ :

«Թեպէր Մարկոս Կարոյ շարժին վնասել ունէց Բոյց Կարն վերջէն երես ծոծրակը Լուիւնից» :



Պարտիզպանին մէկ իւր տան մէջ անկեց բարունակ որ տան բոլոր պատեր կանաչ տերեւներով կը ծածկէր, եւ պատուական խաղող կուտար : Իւր դրացիս սորա վրայ նախանձեւով մի գիշեր գաղտնի բարունակի գեղեցիկ ուռերը կարտեց :

Երբոր առաւօտ եղաւ պարտիզպան բարունակը տեսնելով խիստ տխրեցաւ, որովհետեւ մինչեւ այն ժամանակ դեռ չէին գիտեր թէ որթին կըտարուին օգտակար է :

« Իս կը պարտաւարիմ լալ, ասաց պարտիզպան, ինչպէս որ բարունակն էլ իւր կարուելուն վրայ կ'երեւի թէ կուլայ » :

Սակայն նոյն տարուան մէջ տեսաւ որ բարունակ ամէն տարիներէն աւելի առատ և բնաւ իր խաղող տուաւ : Այս դէպքէն պարտիզպան օգուտ քաղելով՝ սկսեց ամէն տարի բարունակի ճիւղեր կտրտել, որ առատ պտուղ տայ :

Ինչ բանով որ Թեր Բնասին Թեշ վնասե  
Նոյն բանն Արորոս Թեշ Բարն և Կարնից :

Մի ծերունի մահուանէն առաջ իւր երեք

որդւոց տասց : « Իմ սիրելի՛ զաւակներս , ես ձեզի ուրիշ ժառանգութիւն չեմ թողուր՝ բայց միայն այս խրճիթ եւ խաղողի այգին : Վերջինի մէջ ես մի գանձ թաղած եմ՝, փորեցէք եւ պիտի գտնաւք զայն » :

Հօր մեռնելէն յետոյ որդիներ մեծ յուսով ըլլոր այգին փորեցին բայց ոչ մի բան չը գրտան : Եւ որովհետեւ այգին մինչեւ այն ժամանակ այնպէս լաւ փորուած չէր , նոյն տարուան մէջ առատ խաղող տուաւ :

Որդիներ ուրախութեամբ ասացին , « այս է ուրեմն մեր բարի հօր մեզի թողած գանձը » , եւ մեծ տառերով այգիի դրան վրայ գրեցին թէ՛

Ճշմարիտ գանձ ճարտոյն համար  
Աշխարհիւն է միայն :



33 . ԵՐԳՈՂ ԹՈՉՈՒՆ .

Փոքր եւ գեղեցիկ գեղ մի կար , պտղատու ծառերով շրջապատուած : Այս ծառերը գարնան ժամանակ գոյնզգոյն ծաղիկներով մի զմայլելի տեսարան կ'ընծայէին : Իրենց ոստելուն ինչպէս նաեւ շրջապատի ցանկերուն վրայ կերգեին եւ կ'ոտտօտէին բազմաճառակ թըռ-

չուններու իսկ աշնան ժամանակ ծառերու բոլոր ճիւղեր զանազան եւ գեղեցիկ պտուղներով կը լեցուէին :

Մի քանի չար տղաքներ՝ սկսեցին ծառաստանի թռչնոց բոյներ քակել , այնպէս որ թռչուններ հետզհետէ այն տեղէն հեռացան : Գարնան գեղեցիկ օրերու մէջ այլ եւս թռչնոց սիրուն երգեր չէր լսուեր , բոլոր անտառք խոր լռութիւն տիրեց .

Այնուհետեւ այն փնասակար թռչուններ , որոնք երգողներու ձայնէն կը հալածուէին , սկսեցին ծառաստանը յաճախել եւ ծառերու պտուղներ փնասել : Ասոր վրայ ծառերը ձմրան պէս բալրովին մերկացան . այն չարածճի տղայք , որոնք յաճախ խիստ առատ կերպով եւ ձրի պտուղներ կուտէին , իսպառ զրկուեցան եւ մի ինձորի կարօտ մնացին :

Բնութեան բարի + Աստուծոյ սիրտեր որ լայնէն +  
Եւ ոչ թէ զայն ի պարտի մեր եղբայրներ +



34 . ԴԵՂՁԱՆԻԿ ԹՈՉՈՒՆ .

Փոքրիկն Մարիամ միանգամ իւր մօրն աղաչեց որ իրեն համար մի գեղձանիկ թռչուն

գնէ : « Շատ լաւ ասաց մայրը , այս պայմանաւ սր միշտ խեղօք , աշխատասէր և հնազանդ լինիս » :

Մի օր երբ Մարիամ դպրոցէն տուն դարձաւ մայրն ասաց իրեն : « Մի քանի վարկեան ես դառնալ պիտի գնամ : Այս դրասեղանի վրայի նոր եւ փոքրիկ արկղը չի բանաս , մինչեւ որ վերադառնամ : Եթէ պատուէրս պահես 'ի դարձին քեզ հետ մեծ ուրախութիւն պիտի ընենք » :

Հազիւ թէ մայրը դռնէն հեռացած էր , անհամբեր Մարիամ արկղը շուտ վեր վերցուց , « վա՛յ ո՛րչափ թեթեւէ ասաց , կախարիչի վրայ էլ փոքրիկ ծակեր կան , ի՛նչ պիտի լինի արդեօք սորա մէջ , մայրս արդէն չի տեսներ , ես կրնամ սուսնսնին բանալ զայն » . Այս տեսլով կախարիչ վեր առաւ — Յանկարծ տեսաւ որ մէջէն մի գեղին եւ ամենագեղեցիկ թռչուն գուրս թռաւ եւ սկսեց կրկնալով « անեակի մէջ թռչաիլ » :

Մարիամ ուզեց թռչնիկը բռնել և շուտով արկղին մէջ դնել , որպէս զի մայր չի տեսնէ : Երբ շնչասպառ , աչքերը լարած ձեռներ էլ տարածած թռչնիկը բռնելու կը ջանար՝ մայրը ներս մտաւ , « Անհնազանդ եւ անհանրեր աղջիկ » ասաց իրեն , « այդ գեղեցիկ թռչունը քեզ պիտի ընծայէի , բայց ուզեցի որ անախոյց քո հնազանդութիւն փորձեմ և տեսնեմ թէ արժա » :

նի՞ ես այդ ընծային : Այժմ պէտք է որ թռչնիկը իւր տիրոջ վերադարձնեմ :

Բարի ողորմ երէն պարտեր կը ճաննայ  
Թեղեա ձեռք ափն անբա՛ւ և Լէնն ներկայ :



55 ԽՕՍՈՂ ԹՈՉՈՒՆ .

Մի ծերունի որսորդ իւր սենեկի մէջ խօսող փոքրիկ թռչուն մի ունէր , որուն մի քանի բառ արտասանել վարժեցուցած էր : Օրինակի համար՝ եթէ որսորդ ձայներ իրեն « ուր ես թռչնիկ » կը պատասխանէր « հոս եմ » :

Դրացիի փոքրիկ կարողոս այս թռչնոյն վրայ չափազանց կ'ուրախանար եւ յաճախ տեսնելու կ'երթար : Մի օր երբ ծերունի որսորդ բացակայ էր՝ կարողոս շուտով թռչունը բռնեց եւ գրպան դնելով՝ ուզեց անէն հեռանալ :

Հազիւ թէ ասն դուռը հասած էր , որսորդը ներս մտաւ և ուզեց թռչունը խօսեցնելով կարողոսը ուրախացնել : « Ո՛ւր ես թռչնիկ » ձայնեց ծերունին , թռչուն որ տղայի գրպանին մէջ կը նեղուէր , բոլոր ձայնով աղաղակեց « հոս եմ » :

Թէ գողութեան ճարտար Լէնն  
Մածկել դժուար կը յաջուի :

Մի աշխատասէր տանտիրիկին ամէն առաւօտ  
տան աքաղաղը խօսելուն պէս իւր երկու սպա-  
սուհիք աշխատելու կը հանէր : Սպասուհիք  
աքաղաղին վրայ խիստ զայրացեր էին և մի օր  
յաջողեցան զայն կորսնցնել, որ երկար և հան-  
գիստ քնանալ կարողանան :

Բայց ծերունի տանտիրիկին սպասուհիք ար-  
թնցնելու ժամանակը կորսնցնելով՝ սկսեց ժա-  
մանակէ դուրս մինչև իսկ կէս գիշեր զանոնք  
վեր հանել :

Փորին ցոռի թէ ղը համբերեմ  
Աստուծոյ յետ լինի և ևրեմ



Մի աղքատ որբուկայրի, իւր ունեցած մէկ  
հաւէն ամէն օր մի հաւկիթ առնելուն գոհ չը  
լինելով սկսեց հաւը պարարել որ օրական եր-  
կու մինչ երեք հաւկիթ ունենայ : Բայց յուսա-  
յածին հակառակ հաւը չափազանց կերակուր-  
ներէն պարարտանալով այլ եւս ձու չ'ածեց :

Թէ քորին թէ քոր լի և ևրեմ  
Մեծերն էլ և ևրեմ



Անգութ աղայ մի կար որ երբ թռչնոյ մի  
բոյն գտնէր, շուտով նորա մէջէն ձագերը հա-  
նելով կը կուրացնէր : Իւր մայրը կը յանդիմա-  
նէր զինք « անասուած աղայ, կ'ասէր, գիտ-  
ցիր որ եթէ խրատիս չի լսես Աստուած զքեզ  
պիտի պատժէ » : Բայց այս չար աղան մօր խը-  
րատին չէր լսեր, այլ գաղանի կը ծաղրէր զինք  
և օրէ օր իւր չարութեան մէջ աւելի անգութ  
կը դառնար :

Մի կիրակէ փոխանակ եկեղեցի երթալու,  
անտառը գնաց, թռչնոյ բոյն փնտռելու : Ան-  
տառի մեծ կաղնիին վրայ թռչնոյ մի մեծ  
բոյն առնելով՝ անմիջապէս ծառին վրայ ելաւ  
և ձագերէն մին վար ձգեց : Երբ միւսն եւս  
բռնել կուզէր, յանկարծ ձագերի ծնողք՝ որ  
պատառող թռչուններ էին, վրայ հասան և  
լրենց սուր կառույցներով նորա աչքերը փորեցին :

Աստուած է քնող արհամարհող օր  
Անորարկոյս արունց դորտի լի մայ :

Գատալար մի օր դրացիի պարտէզ շրջելու  
ժամանակ վաղ գի թուփ տեսնելով՝ անոնցմէ մին

քաղեց « ես այժմ այս վարդ պիտի հոտոտամ ասաց » : երբ իւր փոքրիկ քիթը կարօտով կէս բացուած վարդի կոկոնի մէջ դրած էր , յանկարծ սաստիկ ցաւ զգաց : վարդի կոկոնի մէջ մեղու կայր ծածկուած որ ծաղկին հետ նորա ձեռքին մէջ ճզմուելով քիթը խայթեց :

Գասպար՝ որ խիստ զայրացկոտ էր , երկու ձեռք լեցուն հող և տիղմ առնելով , վրէժին գրուծեամբ դէպի մեղուանոց ձգեց : Ասոր վրայ մեղուներ՝ մեծ բազմութեամբ նորա վրայ լեցուելով հարիւր տեղէ աւելի խայթեցին :

Գասպարը մերձ ՚ի մահ հիւանդացաւ եւ հազիւ իւր կեանքը ազրտեց :

Թե՛ մի արեւոյ համբերութեամբ շէրսնէս  
Նորս շիրտն հարեւր արեւ և իրս :



40 . ՃԱՆՃ ԵՒ ՕՍՐԴ .

Մի երկոտասարդ իշխան , ամէն անգամ երբ մի ճանճ կամ սարդ տեսնէր , « Աստուած ասոնք ինչո՞ւ համար ստեղծած է , կ'ասէր . ասոնք մարդոց օգտակարութիւն մի չունին , եթէ կարողանայի աշխարհէն իսպառ կը ջնջէի զանոնք :

Միանգամ այս իշխանը պատերազմի մէջ թշնամոյն երեսէն փախչելու պարտաւորեցաւ , երեկոյեան դէմ երբ հոգնած եւ շնչասպառ անտառի մի ծառի տակ ինկած կը քնանար , մի թշնամի զինուոր զինք տեսնելով սուրբ մերկացուց եւ վրայ վազեց որպէս զի սպաննէ : այս վայրկենին մի ճանճ նորա երեսի վրայ նստելով այնպէս խայթեց որ իշխանը արթնցաւ , աչքը բացեց եւ թշնամին տեսնելով՝ վեր ելաւ սուրբ մերկացուց եւ յաջողեցաւ զայն իրմէ հալածել :

Յետոյ՝ ապահովութեան համար անտառի խոր այրի մէջ քաշուեցաւ : Սոյն գիշեր մի սարդը ոտսայն ձգելով այրի դուռը ծածկեց : Երբոր առաւօտ եղաւ , երկու թշնամի զինուորներ որ զինք փնտռելու ելած էին , այրի դուռը եկան . « տես գոչեց մին՝ մեր թշնամին այս այրի մէջ պիտի լինի » — « չէ , ասաց միւսը , եթէ այդ տեղ լինէր ներս մտած ժամանակ սարդի ոտսայն կը պատառէր » : Իշխանը թշնամի զինուորաց այս խօսքերը դողալով կը լսէր :

Երբոր զինուորները հեռացան , իշխանը ծունկի վրայ ինկաւ , ձեռներ տարածեց եւ լալով « Աստուած իմ ազադակեց , որչափ շնորհակալ եմ քեզմէ , որ երէկ մի ճանճի , այսօր էլ սարսի միջոցաւ կեանքս ինձի շնորհեցիր : Այժմ կը

ճանաչեմ թէ ո՛րչափ բարի, ո՛րչափ կարեւոր  
են քո բոլոր արարածներ :

Ամենայն էր յայն աշխարհի  
է կորեւոր եւ դերանի :



41 . ՄԵՐ ԶՈՒԿ .

Պաւտոսեան դէմ ձկնորսին մէկ իւրնաւակը  
ծովին վրայ ձգելով ձուկ որսալու ելաւ : Բայց  
բոլոր օր աշխատելէն յետոյ ոչ մի ձուկ չի կըր-  
ցաւ բռնել :

Երեկոյեան դէմ երբ ՚ի տուն կը գառնար,  
ստաց ինքն իրեն : Այսօր ձուկ չը բռնելուս  
պատճառը այնէ որ առաւօտեան դէմ գործիս  
յաջողութեան համար աղօթելու ծուլացայ :

Եւ յիրաւի երկրորդ անգամին երբ աղօթե-  
լով գործի սկսեց, մի մեծ ձուկ որ ուրիշներէն  
կը հալածուէր, ինքզինք ջուրէն դուրս ձգե-  
լով նաւակին մէջ ինկաւ եւ որսորդի սաքին  
առաջ ծփծփալով մեռաւ :

Ոչխարոսիւն յայնժամ մայն կը յաջողէ  
երբ Աստուծոյ օրհնութեանն էլ հետ լինի :



42 . ՇԱՆ ՀԱՒԱՏԱԲԱՐՈՒԹԻՒՆ .

Թագաւորին մէկ ճանապարհին հանդիպեցաւ  
մի շան, որ մի սպանած մարդու մօտ նստեր  
մարմինը կը պահպանէր : Թագաւորը հետաքը-  
քիր լինելով իմացաւ որ այդ շունը երեք օր ա-  
ռանց կերակուրի մնացեր և սպանուած մարմի-  
նէն չի հեռանար : Հրամայեց որ մեռեալը թա-  
ղեն, շունն էլ կերակրելով հետերնին բերեն :  
Մի քանի օրէն յետոյ թագաւորը զօրահանդէս  
ընելով հրապարակի վրայ նստեցաւ : Բոլոր զօր-  
քեր զոյգ զոյգ իւր առջևէն անցնելով հրապա-  
րակ ելան : Այնտեղ էր նաև շունը որ իսկզբանե  
լուս եւ հանդարտ էր, բայց երբ իւր տիրոջ  
սպանողը զօրաց մէջ տեսաւ, վազեց և կատաղ-  
աբար հաչեց նոցա վրայ, մի կողմէն գէպի ներ-  
կայ եղող բազմութիւն եւ գէպի թագաւորը նա-  
յելով : Այս զարմանալի յայտնութեան վրայ  
ամէնքը հիացան . չարագործներ պարտաւորե-  
ցան յանցանքնին խոստովանել և արժանի եղած  
պատիժը կրել :

Չարագործներ որակ ճարտար էլ լինեն  
Չարեւը մի օր յանկարծ յայտնի կը լինի :



43 . ՓՈՔՐԻԿ ՇՈՒՆ .

Օրերդ վաղենիկ մի օր երբ առուակին

եզերք շրջելու գնացած էր, մի քանի չար աղայոց պատահեցաւ որոնք մի փոքր շուն ջուրի մէջ ձգած խեղդել կ'ուզէին: Վաղենիկ խեղճ կենդանւոյն վրայ գլխաւով անոնցմէ ազատեց եւ իրեն հետ տուն բերաւ:

Շնիկը շուտով քնտանացաւ՝ և սկսեց ամէն տեղ տիրոջ ետեւէն երթալ: Մի երեկոյ երբ օրիորդ քնանալու համար ննջարան գնաց, շնիկը սկսեց կատաղի կերպով հաչել՝ եւ դէպի մահճակալի տակ վազել: Վաղենիկ շուտով ճրագ վառեց եւ հետաքրքրութեամբ մահճակալի տակ նայելով մի ստոկալի մարդ տեսաւ եւ սարսափած բոլոր զօրութեամբ « օգնութիւն » ազադակեց: Անմիջապէս տան մէջի մարդիկ այնտեղ վաղեցին եւ աւազակը բռնելով դատաւորին տարան:

Հարցաքննութեան մէջ պարտաւորեցաւ խոստովանել թէ ինքը փողոցի աւազակ էր եւ թէ կուզէր օրիորդը խողտողելով տան հարստութիւնը գողանալ:

Վաղենիկ իւր բաղդաւոր ազատութեան համար Աստուծոյն շնորհակալ լինելով կ'ասէր, « ո՛վ կը կարծէր թէ այս խեղճ կենդանին՝ որուն ազատարար եղայ, այն էլ իմ կեանքը պիտի ազատէր:

Թէ կենդանեաց գուշ եւ խնամ ցըցես  
Նոր գործն օրմ Աստուծոյ կ'ըրոտես:

Մի աղքատ որբեւայրի, Մարգարիտ անուն, մի երեկոյ իւր տան դուռը նստած ճախարակ կը մանէր: Դրացիի հաւը հեռուէն հետզհետէ իրեն մօտենալով քովի բաց դռնէն ներս մտաւ: Մարգարիտը տեսնելով զայն խոկոյն վեր ելաւ, դուռը գոցեց եւ հաւը բռնելով տան վերնահարկ տարաւ: « Այս տեղը կը պահեմ այս հաւը, ասաց ինքն իրեն, կը կերակրեմ և թող ամէն օր ինձ համար հաւկիթ ածէ:

Յիրաւի երկրորդ օրը հաւը մի հաւկիթ ածեց, բայց այնպէս մեծ աղաղակ (կրկոց) հանաւ որ ամէն տեղ կը լաւէր: Մարգարիտը վերնայարկ վազելով ուզեց հաւը լռեցնել բայց ի գուր: Դրացին իմանալով զայրացած այնտեղ եկաւ եւ հաւը կրկին իւր տուն փոխադրեց: Այս դրացին հարուստ լինելով ամէն ժամանակ Մարգարիտին կ'օգնէր, իրեն ալ իւր իւր եւ հաւկիթ կուտար, բայց այնուհետեւ դատրեցուց իւր գլխութեան անարժան համարելով զայն:

Այս եղաւ Մարգարիտի գողութեան արդիւնքը, որուն համար խիստ զղջալով անդատար կ'ասէր՝

Անորդար շատուկ ին պահէ ուղե՛ս  
Արդարեն անգամ կը շինէ զեղ:՝

1—Մի երիտասարդ հովիւ որ իւր ոչխարներ լեռներու վրայ կ'արածէր, մի օր ապառաժի վրայ վայրի ծառի ստուերի տակ նստած քնացաւ :

Քունին մէջ, ինչպէս որ բնական է, գլուխը առջև ծռած՝ երբ արթննար վեր կը վերցնէր, քնացած ժամանակ վար կը թողուր : Ոչխարի խոյն, որ իրմէ քիչ հեռու կ'արածէր, քնացող հովիւի գլխոյ շարժիլը տեսնելով կարծեց թէ հովիւը իւր հետ գլխով կռուիլ կ'ուզէ : Ուստի իսկոյն պատրաստուեցաւ, սառնալից դիրք մի բռնեց, ուղիղ վազելու համար մի քանի քայլ գէպի ետև քաշուեցաւ, յետոյ խիստ արագութեամբ փազելով հովիւի ճակատին զարկաւ : Քնացողը այս յանկարծակի եւ ուժգին հարուածէն արթննալով սաստիկ զայրացաւ, վեր ելնելով խոյը բռնեց և ապառաժի քովի խոր անդունդի մէջ ձգեց :

Ոչխարներ՝ որ հարիւրէն աւելի էին երբ զայս տեսան բոլորն էլ անմիջապէս խոյի ետևէն անդունդը ձգուելով ապառաժներու վրայ շտախարուեցան :

Հովիւը զայս տեսնելով սաստիկ ցաւէն գլխի մազերը փետտեց եւ կ'ազաղակէր՝

Վո՛յ է անո՛ր որ երբ շարոյն չէ գոբը  
Գլին կը բերէ հարե՛ցուոր շարիներ :

2—Ոչխարաց հօտի այս դժբաղդ եղելու թիւնը ամէն տեղ տարածեցաւ : Մի ծերունի հովիւ, որ խելացի եւ արդարասէր էր, այս դէպքէն մեծ օգուտ քաղեց :

Մի օր երբ իւր զաւակներ տարեկան պարահանդիսի մէջ պարելու համար քաղաք պիտի երթային, որդեակ իմ ասաց « այդ մտադրու թիւնը ոչինչ է, պարահանդէսը մարդուն վրայ սովորաբար չար տպաւորութիւն կընէ, ես ձեզի անմեղ և բարի մեծցուցած եմ, դուք այնտեղ անվայել բաներ տեսնելով կրնաք աւրուիլ » . ազաքներ պատասխանեցին « չէ՞ որ այնտեղ ուրիշներ էլ կ'երթան » :

« Ճշմարիտ է, ասաց հայր : այնտեղ շատեր կ'երթան, բայց նոքա իրենց առողջութիւն կեանք, պատիւ եւ անմեղութիւն կը կորսնցունեն, կ'ուզէ՞ք ուրեմն դուք էլ անոնց հետևիլ զգուշացէ՞ք որ ոչխարներու պէս չլինիք, յայտնի է ձեզ թէ ի՛նչպէս երբ անոնցմէ մին անգունդ ինկաւ ամէնքը ետևէն ձգուեցան, ասոր համար իսկ զանոնք յիմար կենդանի կ'անուանենք : Այսպէս են նաև շատ մարդիկ երբ մէկը թէպէտ եղծման մէջ էլ լինի կը հետևին անոր և ցոյց կ'ուտան յիբաւի թէ իրենք յիմար ոչխարներու կը նմանին » :

Երբոր մի ծարր իտլիներ իրաց զէլ եւ յէլ  
Նորս շահնի հետեւել բնաս հարի չէ :

Մի գիւղացւոյ գեղեցիկ ձին գիշեր իւր ձիանոցէն գողցուեցաւ : Մի ուրիշ ձի գնելու համար՝ գիւղացին տասն եւ հինգ ժամ՝ հեռու ձիավաճառանոց գնաց , բայց ո՛րչափ զարմացաւ երբ այնտեղի ձիերու մէջ իւր գողցուած ձին էլ տեսաւ : « Այս ձին իմն է , աղաղակեց գիւղացին , ձիու սանձէն բռնելով , այս երեք օր կը լինի որ սա ինձմէ գողցուած է » :

Այն մարդը՝ որ ձին ծախելու բերած էր , շատ քաղաքավարութեամբ ասաց իրեն « բարեկամ , դուք ասոր վրայ իրաւունք չունիք , ես արդէն մի տարի է որ այս ձին գնած եմ , սա ձեր չէ , բարց կարելի է որ ձերինին հետ նմանութիւն ունենայ » :

Գիւղացին անմիջապէս իւր երկու ձեռքերով ձիու աչքերը գոցեց և ասաց « շատ աղէկ , եթէ դու մի տարի է որ այս ձին ունիս , ասա՛ ինձ , սորա ո՛ր աչք կոյր է » :

Այն մարդ որ ձին յիրաւի գողցած՝ սակայն լուս գիտած չէր , այս հարցման վրայ շուարեցաւ , բայց որովհետեւ պատասխան տալ պէտք էր՝ ասաց « ձախ աչքն է կոյր » « ճշմարիտ չբսիւր , գոչեց գիւղացին , ձիու ձախ աչք ամենեւեւ կոյր չէ » վա՛յ աղաղակեց գող « ես սխալեցայ ձիու աջ աչքն է կոյր » :

Այս միջոցին ձիու երկու աչքերը բացաւ և աղաղակեց « ահա յայտնի է որ դու գող եւ խաբերայ մարդ ես , թող ամէն ոք տեսնէ թէ ձիու ոչ մի աչք կոյր չէ , ես անոր համար հարցուցի որ քո գողութիւն յայտնի լինի » :

Բազմութիւն որ սոցա շուրջը կեցած էին , բարձրաձայն ծիծաղեցան եւ ծափահարելով աղաղակեցին « բռնուեցա՛ւ բռնուեցա՛ւ » :

Ասոր վրայ գողը պարտաւորեցաւ ձին ետ տալ եւ արժանի եղած պատիժը կրել :

Թէպէտ մի գող որով ճարտար էլ լինի  
Իւր գողութիւնն մի հնարով կը յայտնուի :




Մի ծերունի հայր իւր զուտակաց հետ սովորութեան և կրթութեան վրայ խօսած ժամանակ , հետեւեալ զարմանալի պատմութիւնն քրաւ : Մարդուն մէկ մի մեծ եղն առջև ձգած հրապարակներու վրայ կը շրջէր : Երբ իւր շուրջ մարդոց բազմութիւն տեսնէր խկոյն եղն իւր ուսին վրայ սուած կը քալէր բաւական սեղ : Այս արհեստով նա շատ ստակ վաստակեցաւ : Միանգամ հարցուցին՝ թէ ի՞նչպէս այն զարմանալի ուժեղութեան հասած էր՝ մարդը

պատասխանեց « երբ այս եզն գեռ վտարիկ հորթ էր, ես իմ տանս մէջ ամէն օր մի ժամ ուսիս վրայ առած կը շրջէի: Քանի որ հորթ մեծնար եւ ծանրանար իմ՝ ոյժս էլ նորա հետ կ'աւելնար, այս կերպով եզան ծանրութիւն ունեցող բեռներ այժմ՝ առանց գժուարութեան կը կրեմ »:

Այսպէս է նաեւ կրթութիւն էլ, ասաց հայր, որ թէպէտ հնարուած կամ ճշմարիտ լինի, մեզ կը յիշեցնէ միշտ նախնեաց այն առած թէ՛

կրթութիւններ ձեռքդ կուտան ճարտերու եւ յաջողակ կ'ընեն ասին բաներու »:



Պարտիզպանին մէկ քաղաքի շտաբով հասնելու ժամանակ իւր էջը բանջարներով այնպէս բեռնաւորեց որ խեղճ կենդանիին միայն գլուխը կ'երեւար:

Ճանքան որովհետեւ ուռենիներու մէջէն կ'անցնէր, պարտիզպան բանջարներ կապելու համար մի քանի ճիւղեր կտրեց. « ասոնք խիստ թեթեւ են, էշու բեռան ծանրութիւն չեն

տար », ասելով վրան դրաւ: Մի քիչ յառաջ երթալով կաղնի ծառերու հասաւ, մի քանի երկայն եւ դաւար ճիւղեր էլ այս ծառերէն կտրեց: « Ասոնք այնպէս թեթեւ են որ էջը հազիւ թէ կ'զգայ » ասելով անոնք էլ բեռան վրան դրաւ:

Երբոր արեգակը բարձրացաւ և հետզհետէ տաքնալ սկսեց, պարտիզպանը իւր կանաչ վերարկուն հանելով բեռան վրայ ձգեց: « Գընացած տեղերնիս շատ հեռու չէ, ասաց, վերարկուն՝ զոր ես իմ ճիւղից մատուց կը վերցնեմ չի կրնար էջը նստեցնել »:

Հողիւ թէ այս խօսքը ըսած էր, էջը մի քարի վրայ ներսուլով գետին ինկաւ եւ բեռան ծանրութենէն այլ եւս չը կրցաւ ելնել:

Պարտիզպան ասոր վրայ շփոթած ու ցաւած բարձրաձայն կ'ասէր: « Ախ հիմայ կը տեսնեմ թէ ինչ վնաս կրեցի, միթէ պէտքէ՞ անասնոց վրայ այն չափ անխղճօրէն բեռ դնել:

Մի անգամ կարոյն անգամ կը քսուէ նոր ով որ արդէն ձեռքէն անի իւր շրջ:



Մի անգամ երկու գող մի ջորի գողնալով անտառը տարան եւ այնտեղ սկսեցին խորհիլ

Թէ շորին ի՞նչ գնով ծախեն եւ թէ նորա գնէն իւրաքանչիւրը ո՞րչափ պիտի ստանայ : Գողերը այս խորհուրդին մէջ չբճամաձայնելով սկսեցին ազդակաւ իրար հետ կռուիլ և զիրար ծեծել :

Այս միջոցին մի ուրիշ գող գալով շորին քակեց եւ հեծնալով այն տեղէն հեռացաւ : Կռուող գողեր այս այն ժամանակ տեսան , երբ արդէն հեռացած էր եւ զայն վերադարձնելու յոյս չկար . ուստի արիւնստ գլխով հոգնած և տխուր իրարու քով նստած՝ շորի ճանապարհ դիտեցին : Երբ բոլորովին հանդարտեցան անոնց մէ մին ասաց « սա խիստ իրաւամբ եղաւ , այնպէս վաստակելուն , այսպէս վայելել կարժէր » : Միւսն էլ՝

» Երկու կռուող մարդոց վտարի  
Մերն երբորին է փնտի » :



Հարուստ՝ բայց խիստ ազահ մի մարդ կար , որ իւր կենաց մէջ ոչ մի անդամաղքատի ողորմութիւն չէր տուած :

Մի օր սորա բացակայութեան ժամանակ , մի կապիկ նորա սենեակի բայ պատուհանէն ներս մտաւ եւ անոր ոսկով եւ արծաթով լեցուն անտուկը առնելով պատուհանէն դուրս ձգեց :

Ներկայ եղող բազմութիւն զայս տեսնելով , չղատ վրայ վազեցին եւ սնաուկին մէջ եղած ոսկին եւ արծաթ իրարմէ յափշտակելով ցրուեցին :

Այս միջոցին ազահը եկաւ եւ իւր տան պատահարը տեսնելով՝ սաստիկ շփոթեցաւ , սրտիցաւէն կապիկին մի քանի բռնցի հարուած տուաւ եւ զայն յիմար կենդանի անուանեց : Մարդուն մէկ որ ներկայ էր զայս լսելով՝ զայն րացող ազահին ասաց « եթէ յիմար է կապիկ որ սակին սնաուկով դուրս ձգեց . ապա ո՞րչափ աւելի յիմար ես դու որ ոսկին սնաուկին մէջ կը փակես » :

Հարստութիւն մըն համար այն ժամանակ է քովէն  
Երբ այն մըն է՝ սրբէն բարեաց համար քորշածով :



Երկու ճանապարհորդ որսորդ՝ Յովհաննէս եւ Աբրահամ լսելով որ անտառին մէջ մի մեծ արջ կայ , ուզեցին զայն որսալ : Այս մտադրութեամբ ամէն օր անտառը կ'երթային արջը լրտեսելու , իսկ երեկոյեան սուանց դրամ ունենալու պանդոկ գալով ընտիր գինի կը խմէին . « մի հողար՝ արջը իւր կաշիով մեր այս ծախքերը կը հողայ » կ'ասէին պանդոկապետին :

Մի օր երբ սոքա անտառին մէջ կը շրջէին՝ արջը ահադին ձայնով մրմուռով իրենց վրայ եկաւ : Յովհաննէս թէպէտ հրացանը կրակեց, բայց երկիւղէն գնդակը վրիպեցաւ, ուստի թող տալով շուտ ծառի վրայ ելաւ : Իսկ Աբրահամ որուն հրացան ամենեին չը պարպուեցաւ, ան միջապէս դեմնի վրայ իյնալով ինքզինքը մեռեալ ձեւացուց : Արջը ասոր մօտանալով բերան, քիթն եւ ականջը հոտոտեց եւ մեռեալ կարծելով այնտեղէն հեռացաւ : Քիչ յետոյ երբ այլ եւս չէր երեւար՝ Յովհաննէս ծառէն վար իջաւ եւ ընկերը ծաղրելով հարցուց, « Աբրահամ, արջը քո ականջին ի՞նչ ասաց » նա էլ պատասխանեց, ասաց որ « արջը դեռ չի բռնած նորա կաշին մի ծախէք » :

Զգուշաց' որ չի վտանս ինչ որ պիտի վերջ վտանկն  
Արա ինչ ոչ որ ամենայն է կործանման կը հասնին :



32. ԳԱՅԼ .

Մի անմիտ եւ խարերայ հովիւ, Մանաս անուն, իւր ոչխարներ գիւղի մօտ անտառի մէջ կ'արածէր :

Մի անգամ ծաղու եւ ուրախութեան համար բոլոր ձայնով աղաղակեց « գայլն եկաւ, գայլն եկաւ՝ հասէ՛ք » :

Մօտակայ գիւղէն իւր ձայնը լսելով՝ սուր եւ հրացան առած բազմութեամբ այնտեղ վազեցին եւ կ'ուղէին գայլն սպաննել, բայց անսնելով որ չկայ տուններնին վերադարձան : Մանասէն ասոր վրայ ուրախ էր եւ գայլունի կը լինդար :

Մի անգամ եւս նոյնպէս « գայլն եկաւ, գայլն եկաւ, հասէ՛ք » գոչեց : Գիւղացիք դարձեալ բազմութեամբ այնտեղ վազեցին, սակայն նորէն գայլ չը տեսան, եւ գլուխնին շարժելով լի բաբկութեամբ տուններնին դարձան :

Մի օր յիրաւի գայլն եկաւ : Մանասէն չիութած բոլոր զօրութեամբ « օգնութիւն գայլն եկաւ, օգնութիւն հասէ՛ք » կ'աղաղակէր, բայց մէկը չի լսեց և ոչ ոք օգնութեան չեկաւ իրեն :

Ոչխարներ գայլէն խրտելով ամենայն արագութեամբ գէպի գիւղ վախան, բայց խեղճ Մանասէն որ կաղ էր և արագ վազել չէր կրնար, ոչխարներէն ետ մնալով գայլը զինքը պատուակեց :

Ո՛վ որ ինչքնս սատ իւրեւ լարժեցնէ  
Չէն հոտորս ինչ ճշարտ էլ իւրե :



35. ԱՌԻԻԾ .

Մի թշուառ գերի իւր տիրոջմէն փախչե-

լուն համար մահուան դատապարտեցաւ : Մեռ-  
ցնելու ժամանակ պարխապներով շրջապատեալ  
մի մեծ և քնդարձակ հրապարակ բերին զինք  
և մի սոսկալի առիւծ իւր վրայ թողուցին : Այս  
տեսարանին ներկայ էին հազարաւոր մարդիկ :

Երբոր առիւծը կատաղի կերպով խեղճ  
գերիկի վրայ վազեց և պիտի պատառէր՝ յան-  
կարժ կանգնեցաւ , պոչը շարժեց , ուրախու-  
թեամբ իւր շուրջ կը վազվազէր և սկսեց երախ-  
տազէտ շարժումներով գերիին ձեռները լիզել :  
Ամէն մարդ ասոր վրայ զարմացած պատճառը  
գերիին հարցուցին :

Գերին ասաց , « երբոր ես իմ տիրոջմէս  
փախայ , ինքզինքս անապատի մի խոռոչի մէջ  
ծածկեցի : Այնտեղ այս առիւծը ինձի եկաւ և  
աղաչանաց ձևերով ցոյց տուաւ ինձ իւր թախթը՝  
որուն մէջ մի սուր փուշ մտած էր : Երբոր զայն  
բռնելով գուրս հանեցի՝ այլ ևս չի հեռացաւ  
ինձմէ . միշտ վայրի որսերով զիս կերակրեց եւ  
իրեն ընկերացուց : Բաւական ժամանակ այնպէս  
մնալէն յետոյ վերջի որսորդութեան մէջ իրար-  
մէ հեռանալով երկուքս էլ բռնուեցանք : Այժմ  
այս բարի կենդանին զիս վերատին գտնելուն  
համար կ'ուրախանայ » :

Բոլոր ժողովուրդ Առիւծի երախտագիտու-  
թեան վրայ զարմացած սկսեց աղաղակել ,

« Թո՛ղ տպրի , Թո՛ղ տպրի , բարերար գերին և  
երախտազէտ Առիւծ » :

Ասոր վրայ խեղճ գերին ազատութիւն գը-  
տաւ եւ շատ էլ թանկագին ընծաներ ընդու-  
նեց : Պատժոյ այս հրապարակէն առիւծը ան-  
բաժան իւր ետեւէն գնաց : Ընտանի կենդանիի  
պէս միշտ իւր հետն էր եւ բնաւ մարդու  
չէր վնասէր :

Ձեռ բեղեցիկ եւ սիրուն բան երախտագիտութեան  
Որ վայրենի բազան եւի ժողի կամ փոթե զբռնութեան :



Երկու եղբայրներ՝ Դաւիթ եւ Ռուբէն ծու-  
վու վրայ ճանապարհորդելով մի խիստ հեռու  
աշխարհ գնացին բախը վնասելու :

Դաւիթը այնտեղ մի կտոր անմշակ երկիր  
ձեռք բերաւ . մեծ աշխատութեամբ ազարակի  
դարձուց և քիչ միջոցէն առատ հաց կը վա-  
տակէր :

Իսկ Ռուբէն լեռներու վրայ ոսկիի կտոր-  
ներ ժողվելու գնաց : Սակայն իւր այս աշխա-  
տութեան տեղեր հաց չի գտնարով՝ սկսեց մեծ  
տանջանքով խոտերու արմատներ եւ վայրի ծա-  
ռոց պտուղներ ուտել : Վերջապէս մի ժամանակէ

դիմի, մի պարկ լեցուն ոսկի ունն առած եղբոր  
քովն եկաւ :

«Տե՛ս, եղբայր իմ ասաց, տե՛ս թէ ո՛րչափ  
բաղտաւոր եմ ես : Այս բոլոր ոսկին իմն է : Բայց  
դու ինձ այժմ ուտելու հաց տուր, որովհետեւ  
քաղցէն նուազած եւ թուլցած եմ » :

Շատ աղէկ, ասաց Գաւիթ, ես քեզ ուտե-  
լու հաց կուտամ, բայց դու պէտք է որ մէն մի  
հացի ծանրութեամբ ինձ ոսկի փոխարինես :

Ռուբէն այս պայմանի վրայ շատ խոժոռե-  
ցաւ, բայց ստիպեալ ընդունեց, որովհետեւ խիստ  
սկիւրացած եւ անզօր լինելով առանց հացի  
իւր ճամբան շարունակել չէր կրնար :

Երբոր քիչ օրէն Ռուբէնի ոսկին ընցաւ,  
Գաւիթը ասաց իրեն, « սիրելի եղբայր, ահա քո  
ոսկին անբողջապէս քեզ կը վերագարձնեմ : մի  
կարծեր թէ քոյդ քեզմէ առնելու չափ ան-  
դութ լինիմ, ես քեզ ասով ուղեցի ցոյց տալ  
թէ հարստութիւն զմարդ բախդաւոր չի բներ  
և թէ աշխատութիւնը ոսկիէն լաւագոյն է » :

Թե՛ փոքրն զճո՛ւրս գոհ սրբով աշխատութեամբ ունի-  
չարստութեան ու իսկ ոսկոյ կեանքից համար պէտք ունի :



դուտ անապատին մէջ մարդեցաւ, ուր մարդ-  
ընդ երկար շրջելով բնակութիւն չի գտնար :

Քաղցէն եւ ծարաւէն խսպառ թուլցած  
վերջապէս հովանաւոր արմաւենիի տակ մի վճիռ  
ազդիւրի քով հասաւ : Այստեղ ճանապարհորդ-  
մի փոքրիկ պարկ դտաւ եւ « փա՛ռք քեզ Աս-  
տուած » ասելով դայն շոշափեց « ասոնք կա-  
րելի է որ որուն լինին, ասաց և զիս այս քաղ-  
ցէն ազատեն » . հետաքրքրութեամբ շուտով  
պարկը բացաւ, այլ մէկէն զարհուրած բարձ-  
րաձայն աղաղակեց « ո՛հ Աստուած իմ, ասոնք  
մարդարիտ են եղբեր » :

Մի կտոր հաց որ թեւ 10 կեանք կ'աղաթե  
Քան մարգարէր եւ ամն զսոյի պարստական է :

2— Իսեղծ ճանապարհորդ այն մեծագին մար-  
դարիտներու քով քաղցէն կը նուաղէր : վերջի-  
յուսահատութեան հասած՝ սկսեց լալով Աս-  
տուծոյ օգնութիւն խնդրել : Այս միջոցին յան-  
կարծ մի Հնդիկ ուղափ վրայ հեծած մեծ արա-  
զութեամբ իւր քով եկաւ եւ զթալով հաց և  
բնտիր պտուղներ տուաւ : Յետոյ զինք ուղափ  
վրայ առնելով ճամբան շարունակեց :

« Տե՛ս, ասաց Հնդիկը, տե՛ս ինչպէ՞ս գը-  
թառասոն Աստուած ամենայն ինչ կը տնօրինէ :  
Ես այդ մարդարիտներ կորսնցնելուս համար

ինքզինքս անբաղդ կը համարէի: Բայց այս Աստուծոյ կամքն էր որ այդ մարդարիտներ ազբիւրի քով մնար եւ ես դառնալով քս կեանքը ազատէի »:

Փոքրիկ բաներով Աստուծոյ կ'ապրէ  
Շատ անգամ մարդիկ Վժ փոքր բաներէ:



56 . ՊԱՏՈՒԱԿԱՆ ԱԿՈՒՆԵՐ .

Ոսկերիչին մէկ մի ազնուական տիկնոջ փառաւոր զարդեր շինելու համար շատ պատուական ակներ առաւ: Իւր Յակոբ անուն աշակերտ այն փայլուն եւ զանազան գոյն ունեցող ակներու վրայ կ'ուրախանար եւ զանոնք յաճախ կը դիտէր:

Մի օր ոսկերիչը տեսաւ որ այն պատուական քարերէն երկուքը պակասած է, աշակերտի վրայ կասկածելով անմիջապէս նորա նշարանք հետազօտեց: Ակները մի հին արկղի ետև պատի ծակի մէջ գտաւ:

Յակոբ կ'երդնոյր որ քարերը ինք առած չէ, բայց ոսկերիչը չք հաւատալով խստութեամբ պատժեց զինք յետոյ « դու կախուելու արժանի ես » ասելով աշակերտութենէ հանեց:

Միւս օր քար մի եւս պակսեցաւ, զոր ոսկերիչ դարձեալ նոյն ծակին մէջ գտաւ. սկսեց միշտ ուշադրութեամբ լրտեսել, թէ ո՞վ արդեօք քարերը այն ծակին մէջ կը տանի: Մի անգամ տեսաւ որ աշակերտի պահած կաշաղակ թուչունը, սեղանի վրայ ելնելով կտուցով մի քար առաւ եւ դէպքի այն պատի ծակ տանելով ծածկեց:

Ոսկերիչը զայս տեսնելով ՚ի խոր սրտէ զղջացաւ և ինքզինքը շատ մեղադրեց որ իւր անմեղ աշակերտին այնպէս անիրաւած և զբրպարտած էր: Ասոր վրայ զայն կրկին իւր քովը առաւ եւ ՚ի սփոխումն այնչափ վշտաց զինք առատ կերպով վարձատրեց:

Մարդոց կողմէ երբ ինչի պէս կը լուրջ  
Խիստ շատ անգամ անփութերու կը պարտուի:



57 . ԿԱՅՄԻՒՄ .

Մի երիտասարդ սայլորդ, թորոս անուն շատ օղի խմելէն վտանգաւոր հիւանդութեան բռնուեցաւ, Մի օր բժիշկին ասաց իրեն, « եթէ դու օղին բոլորովին չի ձգես պիտի մեռնիս, որովհետեւ օղին երիտասարդաց մահաբեր թոյն է »:

Թորոսը՝ պատասխանեց՝ « այդ չեմ կարող  
զի արդէն սովորութիւն արած եմ ամէն օր այս  
չիշ լեցուն խմել » :

« Եթէ այդպէս է, ասաց բժիշկ, քեզ հա-  
մար ուրիշ դարման մտածեմ » : Երկրորդ օր  
կայծքարով լի զարդարուն տուփ մի բերաւ և  
պատուիրեց որ ամէն օր անոնցմէ մին օղիի շիշի  
մէջ ձգելով թողու որ շարունակ մէջ մնայ, « երբ  
այդպէս քնես, ասաց, այլ եւս օղին զքեզ չի  
մնասեր » :

Թորոսն այնպէս կարծեց թէ այն քարերը  
օղին անմնաս քնելու զօրութիւն ունին, ուստի  
օր մի քար շիշի մէջ ձգեց :

Այսպէս ամէն օր շարունակեց՝ առանց  
նկատելու թէ օղին հեղհեղեղ կը պակսէր :  
Երբոր շիշը կայծքարով լեցուեցաւ, Թորոսն էլ  
օղիի գործածութեան մահաբեր սովորութիւնը  
թողուց :

Թե՛ քո՛ր առ քո՛ր շիշ բարոյն լարեցնեն՝  
Քիչ մըցեն լարեաներն է՛լ լարեն՝ :



58 . ՔՍՐ .

Հագուստ մարդուն մէկ մի աղքատ գոր-  
ծաւորի հետ կուսելով զայն քարով զարկաւ :

Աղքատը քարն առնելով գրպան դրաւ, « պիտի  
գայ ժամանակ, ասաց, որ ես էլ այս քարով  
զքեզ զարնեմ » :

Հարուստը իւր յանդգնութեան, պարա-  
պութեան մանաւանդ անառակութեան համար  
խապառ աղքատացաւ և ցնցածինքը հագած  
սկսաւ դռնէ դուռ մուրալ : Մի օր ևս աղքատ  
գործաւորի դուռն եկաւ :

Գործաւորը զինք տեսնելով շուտներս վա-  
զեց քարը բերելու, որպէս զի այն անբաղդ  
մարդուն զարնէ : Այս միջոցին յանկարծ ուշա-  
բերելով ինքնիրեն ասաց : « Այո՛ մարդս պէտք  
չէ բնաւ վրէժխնդիր լինի : Եթէ մեր թշնամին  
հարուստ եւ զօրաւոր է՝ խոհեմութիւն չէ, իսկ  
եթէ աղքատ եւ անբաղդ, անգթութիւն է :  
Մեր թշնամին ո՛վ որ լինի, վրէժխնդրութիւն  
չարիք է եւ քրիստոնէի անկայել » :

Մէջէնէր շեշտներէ այլ հոգեբէր  
Եւ կընդունին Դո՛ւ մեծ շնորհ Աստուծո՛յ :



59 . ՀՈՂՈՎ ԼԵՅՈՒՆ ՊՍՐԿ .

Մի ազնուական իւր պարտէզը մեծցնելու  
համար գրացի աղքատ որբեւայրի ազարակը  
պարտիզին հետ խառնեց : Երկրորդ օր երբ աղ-

Նուականը ագարակին մէջ կը շրջէր՝ որքեայրին մի մախաղ առած իւր քով եկաւ եւ լալտ աչօք աղաչեց որ թող տայ իւր հայրենական ժառանգութենէն մի մախաղ հող առնել : Ազնուականը իւր խնդիրն ընդունեց, « այդպիսի յիմար աղաչանք չեմ մերժեր » ասաց :

Որքեայրին մախաղ լցնելէն յետոյ, ազնուականին ասաց՝ « ձեզմէ մի խնդիր էլ ունիմ, հաճեցէք այս մախաղը ուսիս վրայ վերցնել » :

Ազնուականը որ բեռ վերցնելու սորված չէր, չուզեց լսել իրեն, բայց որքեայրի կրկնակի աղաչանաց վրայ երբ ծառուեցաւ և մախաղը պիտի վերցնէր՝ « վա՛յ որչափ ծանրէ, աղաղակեց, անկարելի է որ վերցնեմ » ասելով ետ քաշուեցաւ :

Ասոր վրայ որքեայրին ազնուականին նաեւ լով ծանր եւ ազդու կերպով ասաց իրեն, « եթէ քեզ համար այս հողով լեցուն փոքրիկ մախաղը վերցնել ծանր է, ինչպէ՞ս ուրեմն բոլոր ագարակը՝ որ հազարերոյ այսչափ հող կը պարունակէ յաւիտենականութեան մէջ պիտի կրես » :

Ազնուականը այս խօսքէն զարհուրեցով ագարակը իրեն վերադարձուց : Այժմ կը տեսնեմ ասաց :

« Մեր աներան հարստութեան փոքր բեռ է իր երկնէ մէջ շփուող անշուշտ պիտի ընէ » :

Հոֆման անուն մի ծերունի խիստ կռուարար լինելով յաճախ դատ կը վարէր : Սա միանգամ տեսաւ որ դրացիի տան պատ քակելով նոր լուսամուտ դնել կուզէր, չը կրնալով համբերել դրացիին սպառնացաւ եւ յայտնեց թէ իւր վրայ պիտի բողբէ :

Միւս դրացիներ ամէնէն էլ Հոֆմանին գալով ըսին « բաւական է՝ քո ծերութեան վերջին օրեր այլ եւս դատ մի վարեր, դուն այդ անխորհուրդ բողբէն վաստակ չունիս » Հոֆման դրացիներու խօսքին վրայ խիստ զայրանալով ձեռք գրասեղանի վրայ զարկաւ և բարձրաձայն դուռեց, « ես ձեզի խօսք կուտամ թէ դատը պիտի վաստակիմ եւ այնտեղ հասցնեմ որ դրացին այլ եւս իմ բակիս մէջ չը նայի » :

Հոֆմանը դատն սկսեց բայց կորսնցուց և պարտաւորեցաւ բոլոր ծախքերն էլ վճարել : Եւ որովհետեւ սա իւր շարունակեալ դատերուն պատճառաւ մեծ պարտուց տալ ինկած էր և վճարել չէր կրնար, պարտատեարց բողբին վրայ իւր բակը ծախուեցաւ :

Մի քայէլ՝ որ գեղի գլխաւորի զաւակն էր, այս բակը գնեց : Ասոր վրայ դրացիներ Հոֆմանին ծաղրելով կ'ատէն « Ահա արդարեւ դատդ

վաստկեցար, այսուհետեւ գրացիդ չէ թէ քո՛ւ  
այլ Մի.քայէլի բակին մէջ կը նայի » :

« Գրո՛ւ շտեմով վաստկէ շնեւ ինչ որ հարկաւ  
Ունեցածդ եւ վրո՛ւ ուսել դէտէ շնեւ » .



61. ԶՍՐՄԱՆՍԷԼԻ ՊՈՐԻՍՊ .

Քաղաքէն քիչ հեռու բնակող մի գիւղացւոյ  
բնտանիք եւ ծառաներ պատերազմի ժամանակ  
մեծ երկիւղի մէջ ինկան, մանաւանդ այն գիշեր՝  
երբ թշնամին մտեցած էր : Թշնամոյն յաճախա-  
կի կրակներէն երկինքը արեան պէս կը կարմ-  
րէր, եւ թնդանութներու գոռումին հեռ ամե-  
նուն սարսափ կուտար :

Այս միջոցին ձմեռը լինելով խիստ ցուրտ  
եւ փոթորիկ էր : Գիւղացւոյն բնտանեաց ոչ մի  
կերպով ապահովութիւն չի կար . այն ցուրտ  
եղանակին էլ թշնամոյն երեսէն փախչիլ ան-  
կարելի էր :

Տան ծերունիք, երիտասարդներ, աղայք եւ  
ծառաներ բոլոր գիշեր անքուն իրարու քով  
կեցած անգագար կ'աղօթէին : Մեծ մայրը ա-  
ղօթադիրքը բերելով պատերազմի ժամանակի  
աղօթքը կարդաց, յորում գրուած էր՝ » ո՛վ տէր,  
մեր շուրջ մի հաստատուն պարիսպ քաշէ եւ թշ-  
նամոյն ձեռքէն զմեզ ազատէ » :

Երբոր առաւօտ տունէն դուրս դրան վրոյ  
երան, մեծ զարմանքով տեսան որ թշնամոյն  
եղած կողմ փոթորիկ այնչափ ձիւն լեցուցեր որ  
պարսպի պէս բարձրացեր էր, այնպէս որ մէկը  
անոր վրայէն անցնիլ չէր կարող :

Ասոր վրայ ամէքն էլ ծունկի վրայ գալով  
Աստուծոյ օրհնութիւն եւ փառք տուին որ իւր  
գթութեամբ իրենց շուրջը պարսպելով դիրքնք  
թշնամիէն ազատեց :

Ո՛վ որ ինչինքն Սասնո՛ւմ յետո՛ւ կը յայնչէ  
Նորս երբեք ոչ մի վնաս չէ հասնէ :



62. ԱՂՕԹՈՂ, ՏՂԱՅ .

Մի աղքատ որբւայրի՛ Հոխիսիմէ անուն,  
մի առաւօտ իւր հինգ դեռահաս մանուկներուն  
ասաց : « Միրելի զաւակնե՛րս, այսօր ուտելու  
ոչ մի բան չունիմ, ոչ հաց, ոչ ալիւր եւ ոչ խակ մի  
հաւկիթ կայ : Ես ձեզ համար այնչափ աշխա-  
տեցայ որ այլ ես վատտակիլ չեմ կրնար, աղա-  
չեցէք Ամենակարողն Աստուած, որ օգնէ մեզ,  
ինքն խակ պատուիրած է որ մեր կարօտութեան  
ժամանակ իրեն աղաչենք եւ ինքն զմեզ  
կ'ազատէ » :

Փոքրիկն Գարեգին՝ որ տակաւին վեց տա-

բեկան էր, նօթի, տխուր եւ խռոված 'ի վարժարան գնաց: Ճանապարհի վրայ եկեղեցւոյ դուռը բաց գտնալով ներս մտաւ եւ տեսնելով որ մէկը չը կայ այնտեղը, սեղանի առաջ ծունր դրած՝ լալով « Աստուած իմ, աղաղակեց բարձրաձայն, ես, իմ Մայր եւ իմ՝ եղբայրներ այսօր ուտելու ոչ մի բան չունենք, մեր տուն, ոչ հաց, ոչ ալիւր եւ ոչ մի հաւկիթ կը գտնուի, մեզ ուտելու մի քիչ բան տուր, որպէս զի մենք քաղցէն չը նուազինք: Ախօգնէ մեզ, դու հարուստ եւ ամենակարող ես եւ շատ դիւրին կրնաս տալ, չէ որ դու կնքդ պատուիրած ես որ մեր կարօտութեան ժամանակ քեզի դիմենք:

Գարեգին այսպէս աղօթելէն յետոյ 'ի դպրոց գնաց, երեկոյեան դէմ էրք 'ի տուն վերագարձաւ, տեսաւ որ սեղանի վրայ մի մեծ կտոր հաց, մի աման լեցուն ալիւր եւ մի մեծ կողով հաւկիթ դրուած է « փառք քեզ Աստուած աղաղակեց ուրախութեամբ, դու իմ աղօթքը լսեցիր: Մայր իմ, հարցուց Գարեգին, այս բաները Աստուծոյ հրեշտակ բերած է »:

« Ո՛չ, հրեշտակ բերած չէ, ասաց մայրը. սեղանին առաջ քո աղօթած ժամանակ, եկեղեցւոյ մի անկիւնէն, ուր զքեզ առանձին կարծերես, մեր իշխանուհին զքեզ տեսած եւ քո աղօթքը լսած է: Այս բաները նա խորկեց:

Ուրեմն, զաւակներս, մեր սիրելի Աստուծո՛ւմէն շնորհակալ եղէք, որ իւր երկնաւոր հրեշտակին ձեռքով այսօր զմեզ ազատեց, եւ մի մուանաք ձեր կենաց մէջ այն գեղեցիկ առածք որ կըսէ՝

« Գասա՛ 'ի որէր եւ հեւեի որա՛ն հնարէ, Աստուծո՛ւ զեզ ա՛նէն կեքսով կը պահպանէ »:

65 . ՀԱՅ .

Սովի ժամանակ մի հարուստ մարդ քաղաքի աղքատ տղաներ իւր տուն կոչելով ասաց. « Ահաւասիկ մի կողով լեցուն հաց, կուտամ ձեզմէ ամէն մէկ թող անորմէ մի մի հաց առնէ եւ այսուհետեւ ամէն օր դայ տանի մինչև որ Աստուած առատութեան օրեր պարգևէ »:

Տղաներ ամէնն էլ կողովի վրայ վազեցին եւ սկսան շնորհակալ համար իրարու հետ վիճել զի ամէն ոք կողէր մեծն եւ զեղեցիկն առնել: Վերջապէս հարուստի տունէն մի մի հաց առած դնացին առանց շնորհակալութիւն յայտնելու:

Միայն աղքատ բայց մաքուր հագուած կատարինէ անուն աղջիկ, միւս տղաներէն հեռու կենալով կողովի մէջ մնացած փոքրիկ

հացն առաւ , չնորհակալութեամբ մարդուն ձեռքը համբուրեց եւ պարկեշտօրէն 'ի տուն գնաց :

Երկրորդ օր տղաներ դարձեալ նոյն անկրթութեամբ վարուեցան և խեղճ կատարինէին ձեռք հազիւ ուրեմն , իրենց առածի կիսոյ . չափ հաց մնաց : Երբոր կատարինէն տուն եկաւ , հիւանդ մայրը նորա բերած հացը կտրելով մէջէն նոր արծաթի դրամներ թափեցան :

Մայրը ասոր վրայ վախնալով ասաց կատարինէին , « շուտով այս դրամներ իւր տիրոջ դարձուր , կ'երեւի թէ պատահմամբ հացի մէջ ինկած են ասոնք » : Աղջիկը մօր հրամանը անմիջապէս կատարեց :

Սակայն այն բարերար մարդը դրամները չառաւ մի կարծեր ասաց թէ ասոնք պատահմամբ ինկած են , ես այդ դրամները խորհրդով աս'յն փոքրիկ հացին մէջ դնել տուի , քեզ բարի տղայ , քեզ վարձատրելու համար : Միշտ այդպէս բաւականասէր և գոհ սիրտ եղիւր . ով որ փոքրիկ հացը կ'առնու եւ մեծին համար չի վիճեր , նա ամէն անգամ իրեն հետ օրհնութիւն կը տանի , թէպէտ իւր հացին մէջ դրամի կտոր էլ չըլինի » :

Թէ մարդ ճորձակ էր ո՛րքո՞ւն էր :  
Մէջո՞րքո՞ւն էր բարձր էր հե՞ր կը շնէ :

Նրկու ծառաներ՝ Պօղոս եւ Գէորգ իշխանի տուն վառելու փայտ բերելով խոհարան մտան : Երբոր խոհարար գարեջուր բերելու համար գուրս ելաւ , խորամանկ Պօղոս կաթսայի մէջէն մի կտոր միս գողնալով Գէորգին գրպան դրաւ եւ պատուիրեց որ « երբ խոհարարը կուգայ եւ մտնի համար կը հարցնէ՝ ասա թէ ես չեմ գողցած , ես ալ կերդնում թէ ես չեմ պահած : Այս կերպով գիւրութեամբ կ'ազատինք » :


Խոհարարը մի քանի վայրկեանէ յետոյ վերագառնալով երբ կաթսան պարապ գտաւ , սուր աչքով ծառաներուն նայելով հարցուց՝ « ի՞նչ եղաւ այս միս » , երկուքն էլ պատասխանեցին ինչպէս արդէն նախապատրաստուած էին :

Սակայն խոհարար ասաց « դու Պօղոս , միւսը կաթսայէն դու առած ես , այս քո մրախառն ձեռներէն յայտնի է , իսկ դու Գէորգ , զայն քո գրպան դրած ես , զի մտի իւրը զգեստիդ վրայ թափուած կը տեսնեմ . ամօթ ձեզ , ինչպէս չէ՞ք վախնար մեղք գործելէ : Եթէ ես ձեր գողութիւնը չի նկատէի , Աստուած որ մարդոց սրտի գաղտնիքը գլտէ չարագործը անպատիժ չի թողուր » :

Ծառաներ պարտաւորեցան յանցանքին

խոստալ սնիլ եւ արժանի եղած պատիժը կրել ։

Ինչ որ է որ շար անբաժ ստար կերբոսին  
Այն էնը Աստուած գրեթե բնել սրբերին ։



65. ԵՐԵՔԻՆ ՊԱՏՃԱՌ

Մի իշխանազուն քաղաքէ դուրս զբռնե-  
լու ելած ժամանակ կարկտէ բռնուելով մի  
գիւղացւոյ մտակայ խրճիթ մտաւ ։

Նոյն միջոցին գիւղացւոյն տղաներ սեղան  
նստած կը ճաշէին, առջեւնին մի մեծ աման լե-  
ցուն վարսակ կար, որ մեծ ախորժանօք կու-  
տէին, եւ վարդի պէս՝ կարմիր, զուարթ եւ  
գեղեցիկ էին ։

« Ի՞նչպէս կարելի է, ասաց իշխանազուն տը-  
ղայոց մօր, որ այդպիսի անմարս և դատան կե-  
րակուր ուտելէն զկնի զաւակներդ այնպէս ա-  
ռողջ զուարթերես եւ կայտառ կերելին » ։

Մայրը պատասխանեց, « այդ երեք պատ-  
ճառէ յառաջ կուգայ, զոր ես ՚ի գործ կը դը-  
նեմ ։ Առաջին՝ կը թողում որ տղայք իրենց  
կերակուր իրենց աշխատութեամբ գտնան ։ Երկ-  
րորդ՝ սեղանէն առաջ անոնց ոչ մի ուտելիք  
չեմ տար որպէսզի կերակուրնին ախորժանօք  
ուտեն ։ Երրորդ՝ կը վարժեցնեմ զիրենք ունե-

ցածով դռն լինիլ եւ միշտ հեռու մնալ փափ-  
կակերութենէն » ։

Քանի՜ ըստկաթին եւ զինչ ասացր ՚ի կերակուր  
Քան աշխարհութեան, ասացր եւ շտապարութեան ։



66. ԹԱՆԿԱԳԻՆ ԽՈՐՏԻԿ

Հեղիաս անուն մի վաճառական իւր ծովը-  
գերեայ ագարակ ճաշի հրաւիրեց իւր բարեկամ-  
ներ ։ Սեղանի վրայ շատ կերակուրներ բերեւէն  
զկնի՝ ծածկուած պնակ մի ևս բերին որուն մէջ  
կարծուէր թէ Լամբրէթ ըսուած ձուկն լինի ,  
որ իրենց կերցնել խոստացած էր, երբ որ ծած-  
կոցը բացին՝ փոխանակ սպասուած ձկան նորս  
մէջը երեք ոսկի կար ։

Վաճառականն ասաց՝ « մեծարոյ տեսար-  
իմ՝ այն ձուկը զոր ես ձեզ կերցնել խոստացայ,  
այս տարի կարծած էս եռապատիկ գին ունի և  
մին՝ մի ոսկիի կը ծախուի ։ Աոր համար մտա-  
ծեցի որ այն ձկան գին մի հիւանդ գործաւորի  
թշուառ ընտանեաց տամ որ մեր գիւղի մէջ կը  
բնակին եւ որով կրնան մինչև վեց ամիս կերա-  
կուիլ ։ Բայց, տե՛արք իմ, եթէ կը փափագիք  
յիրաւի ծովի այն ձուկէն ուտել, կրնամ ան-  
միջապէս պատրաստել տալ, իսկ եթէ կը հրա-

մայէք որ ոսկին այն աղքատ ընտանեաց տամ  
եւ լամբրէթ ձուկի փոխտրէն ձեզ հետ գետի  
ձուկ ուտեմ, ձեր կամքն է ։

Բոլոր հիւրեր փափագ յայտնեցին որ ոսկին  
գործաւորի ընտանեաց տրուի, մի մի ոսկի էլ  
իրենք աւելցուցին վրան, որով այն խեղճ ըն-  
տանիքը մի տարի ապրեցաւ ։

Մի քանի մի քանի ուրիշ ունայի քերտի  
երբ կ'աւրտի սնով կենսից քերտի ։



87. ՊԱՅՏԻ ԿՏՈՐ .

Մի գիւղացի իւր թովմաս որդւոյն հետ  
գալտ գնալու ժամանակ ճամբու վրայ ասաց  
իրեն՝ « տե՛ս այդտեղ կտորած պայտի մի կտոր  
կայ, առ եւ պահէ զայն » ։ « Է՛հ, ասաց թով-  
մաս, այդ իմ գետին ծռելուս աշխատութիւնս  
չարժեր » ։

Հայրը իւր որդւոյ այս խօսքին վրայ, ԼԵ-  
ռութեամբ գետին ծռելով երկաթն առաւ եւ  
գրպան դրաւ ։ Երբ մտասկայ գիւղ հասան զայն  
պայտառին ծախելով նոյն ստակով կեռաս  
գնեց ։

Երկուքն էլ ճամբանին շարունակեցին ։  
Երբոր արեգակը բարձրացաւ և տաքցաւ ճամ-

բու վրայ ոչ տուն, ոչ ծառ եւ ոչ խակ աղբիւր  
կար ։ Թովմաս ծարաւէն սկսեց թուլնալ և հօր  
ետեւէն քալելու կը տկարանար ։

Հայրը զայս տեսնելով՝ անորմէ դաղտնի  
ճամբուն վրայ մի կեռաս ձգեց ։ Թովմաս տես-  
նելուն պէս ուրախութեամբ վեր առաւ, եւ  
չուտ բերան ձգեց ։ Մի քանի քայլ առնելէն  
զկնի կեռաս մի եւս ձգեց, թովմաս նոյնպէս  
վեր առաւ ։ Այս կերպով Հայրը բոլոր կեռաս-  
ներ թովմասին գետնէն վերցնել տուաւ ։

Երբոր կեռասներ լմնցաւ և դեռ թովմաս  
վերջին ուտելու վրայ էր, Հայրը ծիծաղեց եւ  
իրեն դառնալով ասաց, « տե՛ս եթէ դուն  
պայտին կտոր վերցնելու համար միանգամ  
ծռուէիր, ճամբուն վրայ հարիւր անգամ գե-  
տին ծռելու չէիր պարտաւորեր » ։

Ոչ որ քերտի քերտի շողեր աշխատել  
Խեղ շար քերտի կը դարձանք իմարսիւ ։



88. ՆԱԼԻ ԲԵՒԵՒ .

Մի գիւղացի քաղաք երթալու համար երբ  
իւր ձին կը պատրաստէր, թէպէտեւ տեսաւ որ  
ձիւն նալի մի բեւեռ ինկած է, բայց հոգ չրաւ  
« Ի՞նչ կը լինի այն մի բեւեռէն » ըսելով ձին  
հեծաւ եւ յառաջ գնաց ։

Քիչ օրէն ձիու ոտքի պայտն ևս կորսուեցաւ, և եթէ պայտառ մօտ տեղ չիներ, ասաց գիւղացին, ձին նալել պիտի տայի, բեւեռններն էլ երեք կ'ընէի » :

Չին այն վիճակի մէջ մնալով քարոտ ճամբաներու վրայ սմբակ ֆլաստուեցաւ եւ սկսեց կաղալ, երբոր մի անտառի քով հասաւ և մէջէն պիտի անցնէր, երկու աւազակներ իւր վրայ վազեցին զինք մերկացնելու : Թէպէտ գիւղացին ուզեց ձին մտրակել և փախչիլ, բայց ձին իր կաղ ոտներով չի կրցաւ յառաջ գնալ : Աւազակներ հասնելով զինք բռնեցին՝ ձին և իւր բոլոր ունեցածներ իրմէ յափշտակեցին :

Երբոր հետիոտ գէպի տուն կը դառնար, քն իրեն կ'ասէր՝ « ես չէի մտածեր որ մի բեւեռի համար ձին իւր պարագայիւք պիտի կորսնցնէի, ճշմարիտ է ուրեմն այն առած որ կըսէ՝

« Փորթի բռնէրս թէ անոգ լինի  
Նորս թէ զսո շոտով կը գետնէ » :

✱  
✱  
69. ԿՍՐԹ.

Մի իշխանագուն կարթով ձուկ բռնելու փափագ ունենալուն հիւսածոյ մի փառաւոր

կարթ պատրաստել տուաւ, ոսկեայ մի փոքրիկ կարթ եւս վրայէն կախուած :

Իշխանագուն կարթն առնելով ծովեզերք զնաց և մի փոքրիկ ձուկ բռնեց, երկին անգամ կարթ ձգելով մի մեծ գայլաձուկ եկաւ, կարթ բռնեց, կարտեց եւ հետն առած լողալով յառաջ գնաց :

Չկնորսը՝ տունը դառնալով ասաց, « ահա իմ ոսկեայ կարթի փոխարէն այս փոքր ձուկ շահեցայ. այսուհետեւ ինձ երկաթեայ կարթ տուէք, որովհետեւ անպատեհ է անոր վրայ ծախք անել այն ինչ արդիւնքը խիստ փոքր է » :

Այն օրէն սկսեալ ամէն խաղերու ժամովանդ վիճակահանութեան առած եղաւ հետեւեալն :

« Թեպէտ խաղս ոսկեայ կարթով կը որոս  
Բայց ոսկեայ դեղ չաւ եւ զգլած կ'ունենայ » :

✱  
✱  
✱

70. ՍՐԻՆԳ.

Հովուութենէ յառաջ եկող մի զանձապահ իւր ախրով՝ թագաւորի ներկայութեան անբաստանուեցաւ թէ՛ թագաւորական զանձերուն անհաւատարիմ կը գտնուի եւ թէ գողցած դրամները եւ թանկագին իրեր երկաթեայ

դռնով փակուած մի սենեակի մէջ պահած է :  
 Թագաւորը զայս լսելով գանձապահին այ-  
 ցելութեան գնաց և անոր պալատի ամէն կողմ  
 շրջելէն յետոյ երկաթեայ դռան վրայ եկաւ  
 եւ հրամայեց որ բացուի : Երբոր ներս մտաւ նո-  
 րա մէջ ուրիշ բան չի տեսաւ՝ բայց մի գիւղա-  
 կան սեղան եւ մի փայտեայ աթոռ : Սեղանի  
 վրայ մի հովուուական փող, գաւազան եւ  
 պարկ : Պատուհանէն դուրս կը տեսնուէր կա-  
 նաչ մարգագետին և անտառոտ լեռներ :

Այս տեղ գանձապահն ասաց իմ պատա-  
 նեկութեանս ժամանակ ես ոչխարարած էի,  
 դու, ո՛վ Արքայ, զիս քո թագաւորական ա-  
 պարանքը փարար : Ես այժմ այս սենեակի մէջ  
 օր մի ժամ մնալով անձկութեամբ կը յիշեմ իմ  
 անցեալ կեանքը, կրկնելով այն երգեր՝ զորս  
 հովուութեանս ժամանակ ոչխարներուս քով  
 զԱստուած փառաբանելու համար կ'երգէի :  
 Ա՛խ կ'աղաչեմ զքեզ, տէ՛ր իմ Արքայ, թող որ  
 իմ առաջի վիճակիս դառնամ, իմ հայրենի  
 դաշտերուն վրայ, ուր ես շատ երջանիկ էի  
 քան այժմ քո արքունեաց մէջ » :

Թագաւորը եղած զպարտութեան վրայ շատ  
 խռովելով՝ դրկեց իւր հաւատարիմ գանձա-  
 պահը և աղաղակեց որ իւր պաշտօնի մէջ մնայ :

Ու քանի որ ունի այլ մայն սիրտ հանդարտ  
 Մարտոյ յաշխարհի կ'ուրայ կեանք եւ բարոյ

Ո՛վ է այն որ իւր լեցուն բակեղէթ ուսե-  
 լու վրայ առած դաշտը կ'երթայ — — Գաս-  
 պարը : Ո՛վ է որ ճամբու վրայ միտ ուրիշի պա-  
 կասութեան վրայ կը խօսի, իսկ իւր պակասու-  
 թեանց համար մուկի պէս կը լռէ — — Գաս-  
 պարն է ասացին :

Ուրեմն Գասպարը՝ օտարի բոլոր պակասու-  
 թիւններ բակեղէթի առաջի կողմը լեցուցած  
 է, միշտ զանոնք տեսնելու եւ դատելու հա-  
 մար : Իսկ իւր սեպհական պակասութիւնք ե-  
 տեւի կողմ, որպէս զի զանոնք իւր աչքէն հե-  
 ուու մնան : Թող դարձնէ Գասպարն բակեղէթը  
 եւ պիտի տեսնէ յայնժամ թէ իւր համար շատ  
 բարի պիտի լինի :

Պակասութեան որդի լինելու քո իմաստաբար  
 Յիմարն է որ իւր մեղք լեզու կը բնէ օրոր :



Մի գիւղացի՝ ունէր եօթն գաւակներ, որք  
 յաճախ իրարու հետ կը կուռէին և այս կուռոյ  
 եւ անմիաբանութեան պատճառաւ աշխատիլ  
 չէին ուզեր : Մի քանի շար մարդիկ եւս այս  
 կուռէն օգուտ քաղելով գրգած էին զիրենք

որ հօր մահուանէն յետոյ ժառանգութիւնը բաժնեն :

Միանգամ հայրը իւր զաւակներ կոչելով ներկայեց իրենց եօթ հատ գաւազան, զորոնք հաստատուն իրարու հետ կապած էր և ասաց՝ « ձեզմէ ով որ այս կապոցը կտորէ անոր հորիւր ոսկի կուտամ », զաւակները մի առ մի բոլոր ուժով ջանացին կապոցը կտորել, բայց չի կարողացան եւ « անկարելի է » ասելով վար դրին :

Յիրաւի անկարելի է ասաց հայրը և կապոցն առնելով քակեց և սկսաւ գաւազանները մի առ մի գիւրիութեամբ կտորել : « Էյ աղա՛ դակեցին զաւակներ, այդ շատ դիւրին է այդ կերպով փոքր տղայք ևս կարող են կտորել :

« Ուրեմն երբ այդպէս է ասաց հայրը՝ դուք այս գաւազաններէն ձեզ օրինակ առէք, որչափ անգամ իրարու հետ սերտ սիրով կապուած եւ միաբան լինիք պիտի յարատեւէք եւ մէկը ըզձեզ յաղթել եւ կտորել չի պիտի կարողանայ : Իսկ եթէ զձեզ միաւորող կապը պակսի եւ դուք առանձին առանձին մնաք, յայնժամ ամէն ոք կը յաղթէ զձեզ եւ այս գետին ինկած գաւազաններուն պէս կը ջախջախուիք » :

Այլ կործանի անշուշտ այն գոռն ուր կուտէ կոտ  
Միութեան մեջ միայն կանգուն կը մնայ :

Մարիամ և Յովսէփ՝ քոյր և եղբայր, իրենց մօր հայելին նայեա՛ծ ժամանակ Յովսէփ գեղեցիկ լինելով՝ սիրուն եւ հաճելի կ'երեւար իսկ Մարիամ՝ որ ծաղկէն փոքր ինչ տգեղացած էր՝ իւր դէմք տեսնելով լացաւ :

Ասոր վրայ մայրն ասաց, « դու Յովսէփ քո անցաւոր գեղեցկութեան վրայ մի ուրախանար, զգուշացիր նաեւ որ չար գործքերով ժամանակէ դուրս չի կորսնցնես զայն : Իսկ դու Մարիամ սիրտ առ և մխիթարուէ, դէմքի գեղեցկութենէն աւելի լաւագոյն կայ, դուքո՛ւ այդ պակասութիւնը հոգւոյ գեղեցկութեամբ լեցուր » :

Եւստի Կանցի գեղեցկութեան մարմինն

Միայն հոգւոյ գեղ ինչ մնայ եւ յարստեւէ :



Երկու երիտասարդներ՝ Գամին և Պիւթաս, այնպէս հաւատարիմ բարեկամութիւն հաստատեցին իրենց մէջ, որ մէկը առանց միւսին ապրիլ չէր ուզեր : Դիտնեսիոս բռնակալը մի օր անիրաւ պատճառներով զՊիւթաս մահուան

դատապարտեց : Պիւթաս բռնակալէն հրաման  
 խնդրեց որ իւր գործոց կարգադրութեան եւ  
 ծնողաց հետ վերջին անգամ տեսնուելու համար  
 տուն երթայ եւ մահուան որոշեալ օրը վերա-  
 դառնայ : Իբն երաշխաւոր կ'առաջարկէր իւր  
 Դամոն բարեկամ, այս պայմանաւ որ եթէ չի  
 վերադառնայ, նա իւր փոխարէն մեռնի : Բռ-  
 նաւորը խեղոյն ընդունեց նորա խնդիրը, կ'ար-  
 ծելով որ Պիւթաս զԴամոն երաշխաւոր տալով  
 ինքը պիտի փախչի : Դամոն կամովին բանդ-  
 դնաց : Պիւթասն էլ երեք օր ժամանակ առնե-  
 լով աճապարեց տունը հասնելու :

Պիւթասի մահուան օրը հասաւ, բայց տա-  
 կաւին ինքը վերադարձած չէր : Ամէնքը սկսե-  
 ջին զՊիւթաս մեղադրել, բռնաւորն էլ շատ  
 ուրախ էր, որ նոցա բարեկամութիւնը իբրեւ  
 կեղծ՝ աշխարհի առաջ պիտի խայտառակուի :  
 Որոշեալ ժամուն զԴամոն կախադանի առաջ  
 բերին, այնտեղ դիզուած էր անհամար բազ-  
 մութիւն եւ իրաց վախճանին կ'սպասէր : Այս  
 վայրկեանին յանկարծ Պիւթասը շնչասպառ հա-  
 սաւ եւ բազմութիւնը . ճեղքելով վագեց բարե-  
 կամի գիրկն ինկաւ եւ իր ուշանալուն համար  
 ներողութիւն խնդրեց :

Բռնաւորը այս անակնկալ վերադարձին  
 վրայ հիացած՝ խեղոյն ներեց Պիւթասին եւ խնդ-

րեց որ ինքն եւ իրենց իբրեւ երրորդ բարեկամ  
 ընդունեն :

« Մէ հարաբէրս քան է հարաբէրս  
 Հասարակ ընկերութեան » .



75 . ՊՍՏԿԵՐ .

Պէրլին մայրաքաղաքին մէջ՝ հարիւրաւոր  
 տարի առաջ մեռաւ մի վաճառական որ ան-  
 թիւ հարստութիւն ունէր : Ամէն մարդ գիտէր  
 թէ վաճառական մի զաւակ ունէր հեռու աշ-  
 խարհ պանդխտած, բայց ոչ ոք զինք չէր  
 ճանչնար :

Գիչ ժամանակէ յետոյ երեք երիտասաղներ յիշ-  
 եալ մայրաքաղաք եկան եւ անոնցմէ իւրաքան-  
 չիւր հաստասել կուզէր թէ վաճառականի միակ  
 որդին եւ ժառանգը ինքն է : Գաղաքի դատա-  
 ւոր զիրենք իւր քով կոչելով վաճառականի  
 իսկական պատկեր բերել սուաւ եւ ասաց .  
 « ձեզմէ ով որ այն շնչանին՝ զոր էս այս պատ-  
 կերի սրտէն կը կախեմ, նետով զարնէ եւ դպցնէ  
 ժառանգութիւն անոր պիտի տամ » :

Երիտասարդներէն կ'առաջինը զարնելով  
 նետը շատ մօտիկ դպաւ : Երկրորդին աւելի մօ-  
 տիկ, իսկ երրորդը զարնելու ժամանակ սկսեց

դողալ, գեղնիլ եւ բարձրաձայն լալ : վերջապէս նետն եւ աղեղ գետին ձգելով աղաղակեց « ո՛չ ես չեմ զարներ, թող իմ բոլոր հարստութիւնը կորսուի » :

Ասոր վրայ դատաւորն ասաց, « աղին՛ւ երկտասարդ, վաճառականի ճշմարիտ որդին եւ ժողանգ դու ես, միւս երկուքը՝ որոնք նետել ուղեցին՝ նորա զուակ չեն : Որովհետեւ ճշմարիտ որդին չի կրնար իւր հօր սիրտ նետով ծակել թէ եւ այն պատկերը լինի » :

Որքն գորտ է իւր ձեռքն սիրէ  
Ու թի բանով զանոտ շէն խոտէ :



76 . ՀԱՆԴԵՐՁԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ .

Մի վաճառական որ մետաքսեայ վաճառքներ ունէր՝ մի իշխանաւորի տուն եկաւ : Տան իշխայէլ օրիորդ իւր մօրմէն հրաման խնդրեց, որ նորա տպրանաց մէջէն իւր համար մի շրջազգեստ ընտրէ : Երբոր հրամանը ընդունեց, երկար որոնելէ զինի չի կրցաւ որոշել թէ ինչ գոյն ընտրէ՝ կանաչ, գեղին թէ կապտագոյն : « սիրելի մայր իմ ասաց օրիորդ, ինձ յարմար մի գոյն դու որոշէ », Մայրը ասոր վրայ խընդարով ասաց, « ես կուզեմ՝ ճերմակ լինի՛ որ

անմեղութեան գոյն է, նայնպէս կարմիր, որ ամօթխածութիւն կը նշանակէ » :

Ինչո՞ւն է անմեղութիւնը  
Թող օրերորոց լինի զգեստ սիրուն :



77 . ՈՍԿԵՍՑ ՏՈՒՓ

Բարձաստիճան մի անձ պաշտօնակալներու հետ սեղանի նստած ժամանակ ոսկեայ մի նոր տուփ ցոյց տուաւ որուն վրայ շատ գեղեցիկ նկարներ կային : Մի քանի վարկեան անցնելէ յետոյ երբ սա իւր տուփէն ծխախոտ առնել կուզէր, բոլոր գրպաններ վնտուելէ յետոյ երբ չի գտաւ « Ի՛նչ եղաւ իմ տուփը, հարցուց շքփոթած, վնտուեցէ՛ք պարոններ, մի գուցէ անգգուշութեամբ գրպաննիդ դրած լինիք » :

Ամէնքը շուտ վեր ելան, գրպաննին դարձուցին, վնտուեցին, բայց չի գտան : Անոնցմէ միայն Եզրիաս անուն անձը իւր տեղը անշարժ կեցած ասաց « ես իմ գրպանս չեմ՝ դարցներ, պատուոյ խօսք բառական է թէ տուփը իմ քովս չէ » : Պաշտօնակալներ ամէնքն ևս գլուխնին շարժելով տեղերնին նստեցան, կասկածելով թէ տուփի գողը Եզրիասն է :

Երկրորդ օր մեծաւորը Եզրիաս կոչել տալով ասաց « տուփը գտած եմ, գրպանիս ծակէն

գգեստին վարի կողմը ինկած էր, սակայն ասա  
խնձ, ինչո՞ւ համար երէկ դուք ձեր գրպանը  
ցոյց չի տուիք, չէ որ ներկայ եղողներ ամէնքն  
եւս գրպաննին դարձուցին :

Եղիաս պատասխանեց «ձեզ միայն տէր իմ  
կը յայտնեմ զայն, իմ ծնողքս խիստ աղքատ են,  
ես իմ օրականիս կէսը անոնց կուտամ, կէս  
օրուայ ճաշն չափաւորելով : Երէկ երբոր ձեզմէ  
ճաշի հրաւիրեցայ, ուտելիքս արդէն գրպանս  
դրած էի, ասոր համար ամաչեցի զայն ցոյց տալ,  
յօրում պիտի երեւէր մի կտոր չորացած միս եւ  
մի սեւ հաց » :

Մեծաւորը ասոր վրայ յուզուած ասաց,  
« դու ազնիւ եւ բարի զաւակ ես, թող որ ծը-  
նողքդ աւելի գիւրու թեամբ ապրին, դու այ-  
սուհեակ իմ հետս ճաշէ » : Այս ասելով Եղիասը  
սեղանատուն տարաւ եւ պաշտօնակախներու  
առաջ ինչպէս յարգանաց այն ոսկեայ տուփը  
իրեն նուիրեց :

Ո՞վ որ ծնողք մանկան պէս կը «երէ  
Նա Ասորո՞ւն է մարդկան «երբէն է :

78 . ՅՈՎ ՀԱՆՆԵՍ .

Յովհաննէս մի աղքատ ուսանող էր, սա մի  
գիշեր պարտաւորեցաւ ջրաղաց մնալ, ուր մի

նստարան մահճակալ եղաւ իրեն. կէս գիշեր  
չեղած Յովհաննէս արթնցաւ եւ լուսնակի լու-  
սով քովի պատի վրայ տեսաւ մի արծաթեայ  
ժամացոյց որ նուազ ձայնով կը զարնէր :

Յովհաննէս զայն տեսնելով այլևս չի կրցաւ  
քնանալ, սկսեց խորհիլ թէ ինչպէս այն ժամա-  
ցոյցը գողնայ և ջրաղացի պատուհանէն ելնե-  
լով փախչի : Այս միջոցին իւր խիղճ թէպէտ 'ի  
ներքուստ ձայնեց « մի՛ գողանար », բայց այն  
գեղեցիկ ժամացոյցն ունենալու սէրը աւելի  
զօրաւոր լինելով շուտ վեր ելաւ, պատուհանէն  
դուրս սողաց, փորձելու համար թէ ի՞նչպէս  
պիտի փախչի : Գողանալու մտածման մէջ լի-  
նելով հարիւր քայլ հեռացաւ ջրաղացէն, երբ  
յանկարծ յիշեց եւ խիստ զղջացաւ թէ ինչո՞ւ  
ժամացոյցը հետ բերած չէր որ նորէն չի վե-  
րադառնար :

Խիղճը այս վայրկենին նորէն ձայնեց « մի՛  
գողանար » : Յովհաննէս այս անգամի ձայնին  
հնազանդեցաւ, ուստի ժամացոյցը գողնալու  
մտադրութիւնը թողլով ճամբան շարունակեց :

Գեռ կէս գիշեր էր, լուսնակը հորիզոն  
ժածկելով խոր խաւարը ամէն տեղ պատեց :  
Յովհաննէս մի ճահիճի մէջ մոլորելով երկար  
շրջեցաւ և հազիւ մի բարձր և ցամաք տեղ  
գտնալով՝ եւ որովհետեւ հողնած՝ գետին ին-  
կած քնացաւ :

Արշալոյսի ժամանակ մի սոսկալի աղաղակ  
զինք արթնցուց եւ մեծ երկիրդի մէջ ձգեց :  
Երբոր անք բացաւ՝ գլխու վրայ տեսաւ մի  
կախաղան վրան մի գող կախուած : Այս գիւ-  
կի շարջ ժողովուած էին բազմաթիւ գիշատող  
թռչուններ և աղաղակաւ կը պատառէին զայն :  
Դիւրին է մակաբերել թէ այս տեսարանը զՅով-  
հաննէս որչափ վախի եւ զգացման մէջ ձգեց :  
Այո՛ այս միջոցին մի ներքին ձայն ասաց իրեն  
« տե՛ս քո վախճանդ ևս այդպէս պիտի լինէր,  
եթէ դու գողութեան սկսէիր » : Ասոր վրայ  
շուտ ծունկի վրայ դալով ձեռները տարածեց,  
լացաւ և Աստուծոյ շնորհակալ լինելով հետե-  
ւալ կերպով աղօթեց՝

« Դու որքան Աստուծոյ, դու ես որ զմարդ կ'ողոր-  
ծուր ինչ որ շնորհ որ կ'անիտ ժշտ հաղաւորի՛ ես » :



79 • ԳՕԱԿ •

1—Մի աղքատ ածխավաճառի Ստեփան  
անուն որդին անտառի մէջ մի ծառի տակ նըս-  
տած լալով կաղօթէր, Մի իշխանաւոր կանաչ  
զգեսաներով, աստղանշան կուրծքէն կախած  
իւր քով մտակցաւ եւ հարցուց՝ « պզտիկ՝ ի՞նչ  
չու կուլաս » :

« Ա՛խ, պատասխանեց Ստեփան, մայրս  
երկար ժամանակ է որ հիւանդ է : Հայրս այսօր  
ինձ դրամ տալով քաղաք խրկեց որ գեղավա-  
ճառին տամ, բայց ես ճամբու վրայ բոլոր  
դրամը քսակով կորսնցուցի » :

Իշխանաւորը զայս լսելով ընկերացող որ-  
սորդին հետ գաղտնի խօսելէն զկնի մետաք-  
սեայ կարմիր և փոքրիկ մի քսակ հանեց, որուն  
մէջ մի քանի ոսկիներ կային եւ ասաց իրեն,  
« արդե՞օք այս քո քսակն է » — « ոչ տէր իմ՝  
պատասխանեց Ստեփան, իմս այդպէս նոր չէր,  
ոչ իսկ այդպէս գեղեցիկ դրամ կար մէջ » :

« Ուրեմն այս պիտի լինի », ասաց որսորդ,  
զրպանէն մի հին եւ անպէտ քսակ հանելով :  
« Այո՛ այո՛, աղաղակեց Ստեփան լի ուրախու-  
թեամբ, այդ իմ քսակն է » : Որսորդը զայն ի-  
րեն տուաւ : Իշխանաւորն եւս իւր քսակ հա-  
նելով ասաց « որովհետեւ դու ճշմարտախօս եւ  
աղէիւ տղայ ես այս ևս քեզ ընծայ կուտամ » :

Աղբո՛ւ դմարդ նեղս-նէնէ կալարե  
Եւ երջանի անփորձ օր կ'անձ կըծայ է :

2—Այս եղելութիւն Գալուստ անուն մի  
տղայ լսելով մտածեց որ ինքն եւս պարգեւ  
կ'նդուռնի այն իշխանէն եթէ քսակը կորսնցնել  
ձեւացնէ : Այս խորհրդով մի օր երբ իշխանա-  
ւոր անտառը որսորդութեան գնացած էր, Գա-

լուսա անտառի մի ծառի տակ նստած՝ սկսեց լալ և աղաղակել, « ա՛խ իմ քսակ, իմ քսակ » :

Իշխանք՝ այս աղաղակի վրայ այնտեղ եկաւ եւ Գալուստին լեցուն քսակ մի ցոյց տալով հարցուց, « ձե՞րն է արդեօք » — այս՝ գուշեց Գալուստը և ձեռքը ձգեց քսակն առնելու :

Սակայն որտորդք որ իշխանին քով կեցած էր սաստելով զԳալուստ՝ « անամօթ տղայ, ասաց, դու իշխանը խաբել կուզես . ես այժմ դորա փոխարէն քեզ ուրիշ դրամ պիտի տամ » : զՄյս ասելով իւր ձեռքի դաւաղանաւ զայն ծեծեց, զգացնելու համար թէ չարութիւնը անդատիժ չի մնար :

Սուր խառնէն պարծեալ էր լինէ սրտինն  
Խաբէութեամբ շքե՛տ էր բերէ եւր էլինն :



80 . ՈՍԿԻ .

Իսահակ անուն մի շերմեռանդ գիւղացի, Մատթէոս անունով ծառայ մի ունէր որ շատ բարկացող լինելով միշտ անվայել կերպով կը հայհոյէր : Իւր տերը՝ թէպէտեւ զինք յաճախ կը խորատէր, սակայն Մատթէոս « այդ ինձ համար անկարելի է, կ'ասէր, որովհետեւ մարդիկ և կենդանիներ զիս շատ կը զայրացնեն » :

Մի օր, առաւօտեան դէմ, Իսահակ ծառային ասաց « Մատթէոս՝ կը տեսնե՞ս այս նոր եւ գեղեցիկ ոսկին, քեզ կուտամ եթէ դու այսօր մինչ երեկոյ համբերես եւ քեզմէ հայհոյանաց մի խօսք չի լսուի » : Ծառայն խոստացաւ համբերել եւ ուրախութեամբ իւր գործին զնաց :

Մատթէոսի ծառայակիցներ զայս լսելով՝ խորհեցան զինք զայրացնել որ ոսկին զրկուի : Այս մտադրութեամբ բոլոր օրը զինք շրջապատեցին, այլ նա զանոնց համբերել և մինչ երեկոյ անվրդով մնաց :

Երեկոյեան դէմ Իսահակ ոսկին իրեն տալով ասաց, « Ամօ՞թ քեզ, մի կտոր անարգ ոսկիէ համար բարկութիւնդ կրցար զսպել իսկ Աստուծոյ սիրոյն համար չուղեցիր համբերել եւ անկարելի է ասացիր » :

Ծառայն ամաչելով ինքզինքը ուղղեց եւ քիչ օրէն քաղցրաբարոյ մի մարդ դարձաւ :

Երբ Աստուծոյ սիրոյն 'է՛րդ որս բնակէ  
Դու դիւրութեամբ դժուարութեան կտրէս յողմէն



81 . ՈՐԳԻԱԿՍՆ ՍԷՐ .

Մի Չինացի իւր պաշտօնի մէջ անհաւատարիմ գտնուելով մահուան դատապարտեցաւ :

Իւր տանն և հինգ տարեկան որդին թագաւորին  
 դիմելով խնդրեց որ իւր հօր փոխարէն ինքը  
 մեռնի : Թագաւոր այս զարմանալի հայրասի-  
 րութեան վրայ ՚ի գութ շարժեալ հայրն աղա-  
 տեց Քահուանէ և որդւոյն ևս վարձատրելով  
 պատուանշան տուաւ , պատուիրելով որ միշտ  
 իւր կուրճքի վրայ կրէ , ամենուն բարի օրինակ  
 հանդիսանալու համար : Սակայն ազնիւ և հայ-  
 րասէր որդին թագաւորի պարգեւէն հրաժարե-  
 ցաւ , առարկելով թէ այն պատուանշանը միշտ  
 պիտի նորոքէ իւր հօր յանցանաց յիշատակը եւ  
 նորա մահուան դատապարտուիլը , վառ անուն  
 թողլով ամենու յիշողութեան մէջ :

Առաջինի, ծնողսեր Ք որդի  
 Ընդ մշտ փութաց, յաջողութեան կը հասնի :

✱  
 ✱  
 82 : ԽԱԶ .

Օրիորդ Աննան պարգեւ ընդունած էր մի  
 գեղեցիկ խաչ , որ երեսնոս փայտէ շինուած էր ,  
 անկիւններն ևս ոսկեգօծեալ : Օրիորդը զայն իւր  
 սրտէն կը կախէր գոյնզգոյն ժապաւէնով :

Մի օր խաչի փոքր գօտին վրայէն քակու-  
 ւեցաւ , Աննան իւր հօրն աղաչեց որ զայն շինել  
 տայ :

« Շատ լաւ , սոսայ հայրը , ձեր խնդիրը սի-  
 րով կը կատարեմ , բայց կուզեմ որ դեռ չը-  
 նած դու նորա վրայ ուսանիս եւ գործես այն-  
 պէս որ աշխարհի մէն մի վիշտեր քեզ համար  
 խաչ չը լինին » :

« Աւրեմն , Աննա՛ , սոսայ հայրը , նայէ՛ որ  
 ասեմ քեզ : Առանց այս գօտին միւս երկու  
 փայտեր խաչ չեն : Այն ժամանակ երբ այս փայ-  
 տեր հակառակ կողմէն իրարու վրայ կը դըր-  
 ւին եւ գօտին վրան կուգայ , կատարեալ խաչ  
 կը լինի » :

« Այսպէս են աշխարհի ամէն վիշտերն  
 եւս , զորս մենք խաչ կ'անուանենք : Աստուծոյ  
 կամքը այս երկար փայտին կը նմանի , ինչ ժա-  
 մանակ որ մարդոց կամքն եւս հակառակ կող-  
 մէն նորա վրայ կուգայ գօտեւոր խաչ կը լինի » :

« Հեռացո՛ւր ուրեմն , Աննայ՛ , քո խաչերու  
 վրայէն գօտին և պիտի տեսնես որ քեզ համար  
 այլ ևս կրելու խաչ չը կայ » :

Թէ Աստուծոյ կամաց որո մշտ հնազանդես  
 Աշխարհի մէջ ոչ ցաւ , ոչ խաւ կը կրես :

✱  
 ✱  
 83 . ՀՐԱՇԱԳՈՐԾ ԱՐԿՂ

Մի տանտիկին իւր տնային տնտեսութեան  
 մէջ միշտ զանազան դժբաղդութեանց կը հան-

գիպէր և տարուէ տարի ևս իւր տան կարաւ սիք կը պակսէին : Այս չարեաց գէմն առնելու համար՝ անտառի մէջ բնակող մի ծերունի ճգնաւորի դիմեց և եղած իրեն պատմելով ասաց « իմ տանս մէջ կարգադրութիւն բնաւ յառաջ չ'երթար, կ'աղաչեմ եթէ այս մասին մի հնարք գիտէք ուսուցէ՛ք ինձ » :

Ճգնաւորը որ մի զուարթերս ծերունի էր՝ զտանտիկին մի քանի վայրկեան սպասեցնելէ յետոյ՝ փոքրիկ եւ կնքուած մի արկղ բերաւ եւ ասաց : « Այս արկղիկ պէտքէ որ ամէն օր՝ երեք անգամ ցորեկուան և երեք անգամ ևս գիշերուան մէջ, խոհարան, մառան, ախոռ, ամբարանոց եւ տան ամէն անկիւններ պտտցնես մի տարի շարունակ . և պիտի տեսնես որ ամէն բան կը բարուօքի : Իսկ երբ տարին կը լրանայ կրկին ինձ վերադարձուր » :

Պարզամիտ ասնտիկին այս արկղին խիստ մեծ հաւատք ընծայեց եւ սկսաւ անձանձիր ամէն օր եւ ամէն Կեղ պտտցնել : Առաջին օր երբ որ ամբարանոց գնաց, տեսաւ որ ծառայն մի աման դարեջուր գողցեր՝ տանել կ'ուզէր, նոյնպէս գիշերուայ մէջ խոհարան գնալով տեսաւ որ սպասուհիներ գաղտնի խմորեղէն կ'եփէին : Իսկ երբ ախոռ եկաւ՝ կովեր թանձր կոյի մէջ կեցած, ձիեր փոխանակ դարբի միայն յարթ

կ'ուէին եւ երբէք քերուած եւ մաքրուած չէին : Այսպէս ամէն օր մի պակասութիւն տեսաւ եւ անձամբ ուղղեց :

Երբոր տարին լրացաւ արկղն առած ճգնաւորին գնաց եւ գոհ սրտով ասաց իրեն, « շնորհակալեմ, այժմ ամէն բան բարուօքած է : Բայց կը խնդրեմ որ թէ կարելի է մի տարի ևս այս արկղը իմ քով թողուս, ինչպէս կ'երեւի սորա մէջ խիստ զարմանալի հնարք կը պարունակէ » :

Ճգնաւորը այս խօսքին վրայ ծիծաղելով ասաց « ո՛չ, այդ արկղ ձեզ թողուլ չեմ ուզեր, բայց նորա մէջի հնարքը կը փափագիմ որ դուն գիտնաս » : Այս ասելով արկղը բացաւ և ցոյց տուեց որ նորա մէջ բան մի չի կայ այլ մի թերթ ճերմակ թուղթ որուն վրայ գրուած էր՝

« Կարգաւորեալ պահել ընդ մշտ + ուր տան հորձեր  
Եւ դու անյամբ նոցա վրայ հեղու լեր » :



84. ԱՂՕԹՈՂ ԻՇԻՍԱՆԱԶՈՒՆ

Պատերազմի ժամանակ մի իշխանազուն մի ծերունի զինուորի հետ թշնամոյն երեսէն փախաւ, եւ որպէսզի չը ճանչցուի երկուքն եւս պարզ եւ հասարակ զգեստներ հագան :

Մի երեկոյ լեռներու մէջ բնակող մի դիւ-

զացոյ տուն եկան և գիշեր այնտեղ անցուցին։  
 Իշխանը՝ թշնամուռն հասուցած չարեաց ինչպէս  
 նաեւ իւր կորսնցուցած գրամներու համար ան-  
 դադար մտածելով չի կրցաւ քնանալ։ Ուստի  
 կէս գիշեր վեր ելնելով սենեակի մի անկիւն  
 ծածկուած ծունկի վրայ ինկաւ և լուռ թեամբ  
 երկար աղօթեց։ Եւ որովհետեւ սիրտը խիստ  
 նեղուած եւ մտառանջ էր, իւր ներքին տաղ-  
 նապէն մի անգամ լուռ թիւնը խզեց և հոգոյ  
 հանելով բարձրաձայն գոչեց « Ա՛խ, Աստուած  
 իմ, այլեւս գթութիւն արա՛ աղքատ իշխա-  
 նաւորիս » ։

Այս հառաչանաց ձայնը գիւղացի տանտէր  
 լսելով առաւօտ իշխանի ծառային ասաց, « գի-  
 տեմ քո տէրը մեծ իշխան է, բայց կ'աղաչեմ  
 ասա ինձի ինչո՞ւ նա այնպէս տխուր կ'երեւի » ։  
 Ծառայն եղածը պատմեց գիւղացւոյն պատուի-  
 րելով ոչ ոքի չի յայտնէ ։

Երբոր իշխանը մեկնիլ կուզէր, գիւղացին  
 յարգանք և լալուտ աչքով իւր սենեակ մտաւ  
 և ասաց իրեն « տէր իմ, ձեր գիշերային ա-  
 ղօթքը՝ ձեր վիշտը յայտնեց ինձ ։ Շնորհ ըրէ,  
 կաղաչեմ այս քսան ոսկին բնգունել մինչեւ  
 ժամանակի դժուարութիւններ անցնին եւ ձեր  
 վիճակ բարւոքի ։ կուզեմ նաև ձեզ մի ճանա-  
 պարհ ցոյց տալ որմէ շուտ եւ ապահով տե-  
 ղերնիդ հասնիք » ։

Իշխանը ասոր վրայ զարմանալով շնորհա-  
 կալ եղաւ այն ագնիւ գիւղացիէն, առաւել շք-  
 նորհակալ Աստուծմէ որ իւր աղօթքը սքանչե-  
 լի կերպով բնգունեց ։

Վերջապէս իշխան յաջողութեամբ իւր  
 ազգականներէն մէկի տունը եկաւ եւ քիչ մի-  
 շոյէն իւր առաջի փառաց համեւելով՝ այն բա-  
 րեսիրտ գիւղացւոյն տանապատիկ աւելի փո-  
 յաւրինեց ։

Աղբէ Բուր սրով երբ նեղած ես  
 Աստուծոյ անորոտից աղորոթիս կը գործես ։



85 . ՀՈՎՈՒՌՆԻ .

Մայիս ամսոյ մի գեղեցիկ օր, երբ ամէն  
 կողմ կանաչներով, գեղեցիկ եւ զանազան ծա-  
 ղիկներով զարդարուած էր՝ մի Հովուուհի երե-  
 կոյեան դէմ իւր գառնուկներ թողած տխուր  
 եւ սրտաբեկ ծաղկեալ մացառի մի քով կեցեր  
 կուլար եւ արտասուաց կաթիլներ իւր կարմիր  
 այտերէն վար կը թափէին ։

Այս միջոցին գիւղի որսորդի փոքրիկ Յով-  
 սէփ անտառէն դուրս ելնելով իրեն մօտեցաւ  
 եւ կարեկցութեամբ հարցուց « ինչո՞ւ կուլաս »  
 — « Ա՛խ, ասաց Հովուուհին, քիչ առաջ այստեղ  
 վայրի դորտ մի տեսայ որ այս մացառին մէջ

տողաց » « է՛հ, ասաց Յովսէփ, ի՞նչ կը լինի գորտէն եւ ինչո՞ւ կուլաս » :

Հովուուհին շարունակեց « երբոր ես գորտը տեսայ, մտածեցի, որ այս կենդանին այսպէս ազեղ է, կը սողայ գետնի վրայ մեծ նեղութեամբ, կը հալածուի ամէն մարդերէ, չը գիտեր բնաւ թէ ո՛վ է արարիչը եւ իւր բոլոր կեանքը տիրմերու եւ մութ ծակերու մէջ կանցունէ, մինչեւ վերջապէս կը մեռնի եւ կապականի » :

« Բայց ես, կըսէի ինքնիրենս, մարդկային կանգուն հասակ եւ գեղեցիկ կերպարան ունիմ: Եւ կրնամ աղատ ամէն տեղ շրջել, նկատել երկինք եւ երկիր, ուրախանալ ծաղիկն եւ ջուրին վրայ: Գիտեմ նաև թէ ո՛վ է իմ արարիչը եւ ունիմ մի անմահ հոգի: Սակայն աւա՛ղ որ դեռ մի անգամ զինքը ՚ի բոլոր սրտէ չը պաշտեցի: Իմ դառն գանկատը զիս այնպէս վրդո՞վեց որ լալ սկսայ » :

Յովսէփ այս խօսքերէն այնպէս զգացուեցաւ որ իւր բոլոր կենաց մէջ զանոնք չի կրցաւ մտնալ: Խոր ծերութեան մէջ տակաւին կը պատմէր զայն իւր զաւակաց եւ կը յաւելոր « եթէ այն ազեղ եւ չնչին կենդանիներ իսպառ անօգէտ էլ լինին, սակայն կ'ուսուցանեն մեզ ճանաչել եւ զնահատել մարդկային առաւել-

լութիւն, որով Աստուած զմարդ իբրեւ գերազոյն արարած երկրի վրայ դրաւ » :

Ոչ որ Աստուած իւր գործերով չէ զբարեզայն սորոգի մարդ անուանել չէ վայել :



86 . ՓՈՒՔՐԻԿ ԿՈՂՈՎԱԳՈՐԾ

Հարուստ ծնողաց զաւակ էր Յովհաննէս եւ վատահանալով նոցա ընչից բոլոր օր անգործ կը շրջէր, մտածելով թէ իւր ծնողաց հարստութիւնը իւր համար բաւական կը լինի: Սա մի աղքատ գրացի ունէր, որուն Յակոբ անուն զաւակ ընդհակառակ խիստ աշխատասէր էր եւ անդադար կողովագործ լինելու կը ջանար:

Մի օր Յովհաննէս ծովեզերք նստած դրօսնելու համար ձուկ կը որսար, Յակոբն ես մի մեծ խորձ ուռենիի ճիւղ կտրած կողով կը հիւսէր: Յանկարծ մի ֆանի ծովու աւազակներ անտառէն դուրս վազելով երկուքն ես բռնեցին եւ իրենց նաւը տարան հեռաւոր աշխարհ իբրեւ գերի վաճառելու համար:

Սյո նաւը ճանապարհին արեկոծութեան բռնուելով դէպի հեռու կղզիներ մղուեցաւ եւ ապառաժի զարնուելով ջախջախեցաւ: Մէջ եղողներէն միայն այս երկու տղայք ազատեցան,

բայց այնպիսի ցամաքի վրայ՝ ուր անդուծ եւ վայրենաբարոյ Հնդիկներ կը բնակէին :

Յակոբ մտածելով որ իւր արհեստ կրնայ թերեւս զիջենք այն վայրենիներէն ազատել . շուտ իւր դանակը հանելով քովի ուռենետայ ճիւղեր կտրտեց եւ սկսաւ տափարակ կողով գործել : Բազմաթիւ սեւամորթ մարդիկ զայս տեսնելով իւր շուրջ ժողովեցան եւ հետաքրքրութեամբ իւր գործած կողովին կը նայէին :

Երբոր կողովը ըննցաւ , Յակոբ զայն իրենց գլխաւորին նուիրեց , այնուհետեւ ամէնքն էլ ցանկացան մի մի կողով ունենալ : Եւ որպէս զի Յակոբը շարունակ եւ անարգել աշխատի , պըտղատու ծառերով շրջապատեալ մի խրճիթ տըւին եւ խոստացան իւր պարէնը եւ բոլոր պէտքերը առատութեամբ տալ :

Յետոյ սեւամորթներ պահանջեցին որ Յովհաննէս եւս կողով գործէ . բայց երբ տեսան որ չբզիտէ , սկսեցին զինք ծեծել եւ մօտէր մեռցնէին եթէ Յակոբ նորա համար չի բարեխօսէր : Վերջապէս Յովհաննէսը պարտաւորեցաւ մորթէ վերարկու եւ կտաւեայ բաճկոնակ հագնելով՝ ստրուկի պէս ծառայել Յակոբին եւ իւր շինած կողովի համար ուռենի ճիւղ պատրաստել :

Աշխատութեան բորձն յեռներ  
կոռնեայ հոց տէն տեղեր :

1—Թեթեւամիտ Բենիամին իւր փոքրիկ եղբայր Փիլիպպոսն առնելով գետ գնաց եւ նաւակի մէջ մտնելով ցամաքէն հեռացաւ :

Սրնթաց գետը նաւակը տանելով ապառաջի զարկաւ եւ կտորեց՝ Բենիամին ջրի երես յողալով դէպի ապառաժը գնաց և շնչասպառ քարին շուրջը պտտելով վրան երնելու տեղ չի գտաւ : Իսկ Փիլիպպոսը ջրի հոսանքէն գլորուելով իրմէ հեռացաւ :

Մի ձկնորս այս երկուքի ազաղակը լսելով օգնութեան վաղեց եւ ինքզինքը վտանգի մատնելով ջուրին մէջ ձգուեցաւ եւ նախ փիլիպպոսին ետեւէն երթալով ազատեց զայն : Այս ազատութեան վրայ ձկնորս շատ ուրախացաւ :

Անյուէր բարի եւ առնի մարդ մայն  
Կը դնէ զիւր իւր կեանք որքէն գոհան :

2—Երբոր բարի ձկնորսը Բենիամին եւս ազատելու գնաց , տեսաւ որ նա խեղդուած էր : Բազմութիւն որ այն տեղ ժողովուած էին , զայս տեսնելով ձկնորսին ասին : « Եթէ դու երկուքն ևս չէիր կրնար ազատել ինչո՞ւ համար կեանքդ վտանգի մէջ դրիր , չէ՞ որ Բենիամին որ աւելի մօտ էր , կրնայիր առանց մեծ աշխատութեան և առանց վտանգի ջուրէն դուրս հանել : »

Չկնորսք պատասխանեց : « Այն թեթեւա-  
միտ Բենիամին որ խեղդուեցաւ , շատ անգամ  
ինձմէ ձուկ եւ խեցեցեալն գողացած էր , թող  
դայս՝ յաճախ իմ ուսիաններս կը քակէր : Բայց  
ազնիւ ֆելիպպոսը՝ երբ ես իմ ոտքիս պատճա-  
ռաւ երկար ժամանակ աշխատիլ չէի կրնար ,  
իւր երեկոյեան հաց միշտ ինձի կը բերէր և եր-  
բեմն ևս ստակ կուտար : Ինչպէ՞ս կրնայի ու-  
րեմն այսպէս ազնիւ մի տղայ առաջին անգամ  
չազատել :

Երեթ շրջալ արդէն յաճախ տեսնուած է  
Որ տրէ դարձի, բարէն՝ պարէն- ընդունէ :



88 ԱՌՅՐ ԱՆԳՐԷԱՍ .

Մի կոյր պատանի, Անդրէաս անուն, մի օր  
գաւազան ձեռք եկեղեցիէն դէպ ի տուն  
կ'երթար խիստ ծանր եւ մտածելով : Գիւղացի  
չտրագործ մի տղայ, Ղուկաս անուն, սկսեց  
զԱնդրէաս ծաղրել և ասել « Ե՛կ գրաւ դնենք  
երեք ոսկի եւ տեսնենք թէ երկուքէս ո՞րն  
աւելի արագ կը վազէ » :

Կոյր Անդրէասն ասաց , « շտտ աղէկ՝ գրաւ  
դնենք , բայց այս պայմանաւ որ վազելու ճամ-  
բան ինձ ծանօթ լինի եւ ժամանակն եւս յար-  
մար » : Ղուկասն այս պայմանը անմիջապէս ըն-

դունեց , բոլոր ներկայ եղողներն ևս թող վը-  
կայ լինին ասաց : Անդրէասն ասոր վրայ տեղ  
եւ ժամանակ որոշեց եւ ասաց : « Այս գիշերը  
ժամ երկուքին մինչ ի քաղաք վազենք » :

Որոշեալ ժամուն երկուքն ի միասին ճամ-  
բայ ելան : Այն գիշերը սովորականէն աւելի  
մութ էր , օդն եւս փոթորկալից , իսկ ճամբան  
թանձր անտառի մէջէն կ'անցնէր՝ եւ որովհե-  
տեւ կոյր Անդրէասին համար գիշեր եւ ցորեկ  
միեւնոյն էր՝ դեռ արշաւոյս չի բացուած ան-  
արդել քաղաքը հասաւ : Բայց ծիծաղող եւ  
անձնապատասան Ղուկաս , անտառին մէջ մտը-  
րելով գլուխը մերթ ծառի ստերուն կը զար-  
նէր , մերթ արմատներու վրայ կ'էյնար և մերթ  
ևս վշտա մտցառնելու մէջ կ'արդկուէր : Վեր-  
ջապէս ի քաղաք հասաւ այն պահուն՝ երբ ար-  
դէն արեգակը բարձրացած էր :

Ղուկասը պարտաւորեցաւ երեք ոսկին վը-  
ճարել և ամէն մարդէ ծաղր և ծանակ լինել :

Անորո-նեմք Բե Բըտառեք ծողք ունե-  
Անորո-նեյս Դո- Դե դարձի և Երե :



89 . ԵՐԿՈՒ ԶԱՆԱՊԱՐԷՆՈՐԻ .

Երկու ճանապարհորդ , Պօղոս և Վարդան  
ի միասին կ'ուղեւորէին : Պօղոս տեսաւ որ ճամ-

բու վրայ մի քսակ լեցուն ոսկի ձգուած է ու-  
րախութեամբ շուտ վրայ վաղելով առաւ :

« Եղբայր ասաց վարդան, մենք պէտք է  
այդ դրամը արդարութեամբ վրանխա բաժ-  
նենք » — « չէ՛ , ասաց Պօղոս , այդ չեմ ընել ,  
քսակը ես գտայ եւ ինձ միայն կը վերաբերի » :  
« Այս ասաց եւ ծիծաղելով գրպան դրաւ : Վար-  
դան ասոր վրայ խռովելով իրմէ հեռացաւ :

Այս միջոցին յանկարծ մի աւազակ սուրբ  
մերկացուցած վրանին վազեց : Պօղոս զայն  
տեսնելով սաստիկ վախցաւ , « Եղբայր ասաց ,  
վարդանին , պէտք է որ մենք հաւատարմու-  
թեամբ զիրար պաշտպանենք , մի մարդ չի կըր-  
նար դիւրութեամբ երկուքիս յաղթել , փու-  
թա՛ դու ես քո սուրբ քաջէ՛ : Բայց վարդանը  
պատասխանեց , « այդ չեմ ընել , ոսկի չունիմ՝  
որ աւազակը կողոպտէ , քսակը միայն քեզ հա-  
մար պահեցիր եւ պէտք է որ զքեզ միայնակ  
պաշտպանես » :

Պօղոսը աւազակէն կողոպտուեցաւ եւ ոսկւոյ  
փոխարէն շատ վէրքեր ընդունեց :

Ե՛՛նէ Բուրդէր + Ընկերն Բաժին Դոս  
Անբարոյն Բեռնը Դո Ին Ընկեր Կոնքնոս :



90 , ԱՄԻԱԳՈՐԾ ԵՒ ԼՈՒԱՅԱՐԱՐ :

Ածխագործին մէկ տուն շինող մի լուացա-  
րարի ասաց : « Եղբայր աւելորդ են ձեր այդ-  
ժախսեր , իմ տունս եկ , որ բաւական մեծ է ,  
իմ եւ քո ապրանքներ նորա մէջ կրնան տե-  
ղաւորիլ » :

Լուացարարը պատասխանեց , « չէ եղբայր  
այդ կարելի չէ , որովհետեւ այն կտաւներ ,  
զորս ես մեծ աշխատութեամբ կ'սպիտակացնեմ ,  
քո ածուխէդ պիտի սենայ » :

Այս խօսքի վրայ ածխագործը ծիծաղե-  
լով « Իրաւունք ունիս , ասաց , սեւ եւ սպիտակ  
իրարու չեն յարմարիր : Ինչպէս որ սպիտակ եւ  
մաքուր կտաւ ածուխի մէջ կը մրտտի , այնպէս  
էլ անմեղ հոգիներ , մեղաւոր մարդոց եւ չարա-  
նենդ սովորութեանց մէջ կ'ապականին » :

Ե՛՛նէ Կոզե Ընկերն Բաժին Դոս  
Զօր Դարբերն Գարդէ Ընդ Դիւր Կոնքնոս :



91 . ԶԱՂԱՅՊԱՆ ԵՒ ԻՒՐ ԷՇԸ .

Մի Զաղացպան իւր որդւոյն հետ իրենց էջը  
ի քաղաք վաճառելու կը տանէին : Ճանապար-  
հի վրայ մի ձիաւոր պատահելով՝ « այդ ի՞նչ է  
էջը պարապ թող տուած երկուքդ էլ կը քա-  
լէք ասաց » :

Այս դիտողութեան վրայ շաղացանի որ-  
դին անմիջապէս հեծաւ, բայց հազիւ մի քիչ  
առաջ գնացած էր՝ մի սայլորդ տեսնելով զինք  
յանդիմանեց։ « Անկիրթ տղայ, ասաց, չե՞ս  
ամաչեր դու հեծած քո ծերունի հայրը կը  
քալեցնես » : Տղան շուտ վար իջաւ եւ հայրը  
հեծցուց :

Ասորմէ յետոյ մի գիւղացի կին՝ կողովք  
լեցուն պտուղ չալակն առած իրենց դէմն ելաւ :  
« Այս ի՞նչ անգութ հայր է, ասաց, որ ինքը  
հանգիստ հեծած իւր խեղճ որդին տիղմերու  
մէջ իւր ետեւէն կը վազցնէ » : Այս խօսքի վրայ  
որդին էլ հօր հետ էշու վրայ հեծաւ :

« Վախ խեղճ կենդանի, աղաղակեց մի  
ոչխարարած որ իւր հօտը անտառին մէջ կ'ա-  
րած էր, կ'երեւի թէ չուտով պիտի սատկիս, քո  
վրայ հեծնողներ անամնոց պատիժ եւ ճշմար-  
տապէս անգութ մարդիկ են եղեր » :

Այս անգամ երկուքն էլ վար իջան եւ որդին  
խիստ վշտացած հօրն ասաց : « Ի՞նչ ընելու ենք  
այժմ որ մարդոց հաճելի լինի. եկուր էշը ձո-  
ղիի վրայ առած այնպէս վաճառատեղին տա-  
նենք եւ կամ այս գետին մէջ զայն խեղդենք » :  
« Ո՛չ, համբերէ, ասաց հայրը՝ ես այժմ յայտ-  
նապէս կը տեսնեմ որ մարդս՝ ոչ մի անգամ  
ամէն մարդու ուզածը չի կրնար ընել եւ թէ

խիստ ճշմարիտ կը գտնամ այն առածը որ կըսէ՝

« Դու քո բարձր երէ ճշտութեամբ կարգարբ  
Ձի հասնող Ինչու կուրէ խոշ ծառքէ » :



92. ՈՐՍՈՐԴ ԵՒ ԻՒՐ ՇՈՒՆ .

Որսորդին մէկ իւր շունը նապաստակին  
ետեւէն ձգելով « բռնէ՛ բռնէ՛ » կ'աղաղակէր .  
շունն էլ բոլոր զօրութեամբ որսին ետեւէն իյնա-  
լով դաշտի ամէն կողմեր պտտցնելէն յետոյ  
վերջապէս հասաւ եւ զայն իւր ատամներով ա-  
մուր բռնեց : Որսորդը վրայ հասնելով նապաս-  
տակի ականջէն բռնեց եւ « թո՛ղ թո՛ղ » փսայ  
շան, շունն էլ թող տուաւ :

Բաղմաթիւ գիւղացիք այս որսորդութեան  
կը նայէին եւ անոնցմէ մի ծերունի տասց : Այս  
որսի շունը ազահ մարդուն կը նմանի որ ազա-  
հութիւնը միշտ իրեն « բռնէ՛, բռնէ՛ » կ'ատէ,  
ազահն էլ կը հնազանդի եւ իւր բոլոր ժամա-  
նակ հարստութիւնը ժողովելու կուտայ : Բայց մի  
օր յանկարծ մահը գալով « թո՛ղ թո՛ղ » կ'ատէ  
իրեն եւ ազահը այնչափ աշխատութեամբ ժո-  
ղոված գանձերը առանց վայելելու ուրիշին  
թող կուտայ :

Չան՝ ընդ միւր բարի բանիւր ժողովե  
Եւ երկնից ձի զայն անկորսաւ վայելեւ

Օրօրդ Մագթաղինէն կը բնակէր մի փառաւոր տան մէջ և ինքզինքը իւր վիճակին համեմատ կրթեալ կը համարէր :

Մի՛ օր իւր գրացի աղքատ որմնադրի դուստրը Մարիամ իրեն գալով ասաց , « հայրս մերձ ՚ի մահ հիւանդացեր է գրեզ կ'աղաչէ որ իրեն քով գաս , մի կարեւոր բանի համար քեզ հետ պիտի խօսի : »

Օրիորդը արհամարհանօք պատասխանեց Մարիամին : « Ի՞նչ պիտի լինի այն կարեւոր բան որ մի այնպիսի յետին աստիճանի մարդինձի պիտի խօսի , գնա՛ , ես ձեր խրճիթին հետ գործ չունիմ » :

Մարիամ գնաց՝ բայց մի քանի վայրկեանէ յետոյ նորէն եկաւ եւ շնչասպառ՝ « ոհ սիրելի օրիորդ , ասաց , աճապարեցէ՛ք մեր տուն գալ ձեր երանելի մայրը պատերազմի ժամանակ շատ ոսկի և արծաթ դնել տուած է ձեր տան պատի մէջ և հօրս պատուիրած՝ որ ոչ ոքի չասէ բացի ձեզմէ երբ քսան տարեկան լինիք : Այժմ հայրս մեռնելու մօտ է եւ երկար սպասել չի կրնար » :

Օրիորդ Մագթաղինէն զլոյս ըսելով շուտ վեր ելաւ եւ կարելի եղած արագութեամբ հիւանդի տունը գնաց : Բայց երբ սենեակը մտաւ որմնադիրն արդէն մեռած էր :

Ասոր վրայ Մագթաղինէն խիստ ցաւի եւ մտատանջութեան պատճառաւ գրէթէ ինքզինք կորսնցուց , իւր գեղեցիկ տան պատերը ամէն տեղ ծակել և ճեղքել տուաւ , բայց ոչ մի բան չի գտաւ : Սա իւր բոլոր կենաց մէջ շատ կը զղար՝ երբ կը յիշէր թէ իւր անբարաւանութիւնը արգելեց զինք այն համեստ մարդուն այցելութիւն տալու , իւր կենաց վերջի ժամուն մէջ , եւ թէ ՚ի պատիժ այն հպարտութեան կորսնցուց իւր այն մեծ հարստութիւնը : Ուրեմն՝

Զբոյլ եղէր շէ մարտնոսի հպարտութեան  
Որ շտ անբա՛ շըլու կորոյ շոյն վայրիտն :



Մովի ժամանակ մի անծանօթ մուրացկան որ շատ աղքատօրէն բայց շատ էլ մաքուր հագուած էր , գիւղի մէջ շրջելով ողորմութիւն կը խնդրէր :

Սա մի քանի տուններէ անարգուելով հեռացաւ , մի տուն էլ խիստ աննշան ողորմութիւն տուաւ : Միայն մի աղքատ գիւղացի կանչեց զինք և օդի ցրտութեան պատճառաւ իւր տաք սենեակը տանելով . նորեփ կարկանդակ կերցուց :

Հետեւեալ օրը այն ամէն մարդիկ՝ որոնցմէ անծանօթ մուրացկանը ողորմութիւն խնդրած

Օրհորդ Մագթադինէն կը բնակէր մի փառաւոր տան մէջ և ինքզինքը իւր վիճակին համեմատ կրթեալ կը համարէր :

Մի՞ օր իւր դրացի աղքատ որմնադրի դուստրը Մարիամ իրեն գալով ասաց , « հայրս մերձ ՚ի մահ հիւանդացեր է գրեզ կ'աղաչէ որ իրեն քով գաս , մի կարեւոր բանի համար քեզ հետ պիտի խօսի » :

Օրհորդը արհամարհանօք պատասխանեց Մարիամին : « Ի՞նչ պիտի լինի այն կարեւոր բան որ մի այնպիսի յետին աստիճանի մարդինձի պիտի խօսի , գնա՛ , ես ձեր խրճիթին հետ գործ չունիմ » :

Մարիամ գնաց՝ բայց մի քանի վայրկեանէ յետոյ նորէն եկաւ եւ շնչասպառ՝ « ո՞հ սիրելի օրհորդ , ասաց , աճապարեցէ՛ք մեր տուն գալ ձեր երանելի մայրը պատերազմի ժամանակ շատ ոսկի և արծաթ դնել տուած է ձեր տան պատի մէջ և հօրս պատուիրած՝ որ ոչ ոքի չասէ բացի ձեզմէ երբ քսան տարեկան լինիք : Այժմ հայրս մեռնելու մօտ է եւ երկար սպասել չի կրնար » :

Օրհորդ Մագթադինէն զոչս լսելով շուտ վեր ելաւ եւ կարելի եղած արագութեամբ հիւանդի տունը գնաց : Բայց երբ սենեակը մտաւ որմնադիրն արդէն մեռած էր :

Ասոր վրայ Մագթադինէն խիստ ցուրի եւ մտատանջութեան պատճառաւ գրէթէ ինքզինք կորսնցուց , իւր գեղեցիկ տան պատերը ամէն տեղ ծակել և ճեղքել տուաւ , բայց ոչ մի բան չի գտաւ : Սա իւր բոլոր կենաց մէջ շատ կը զղար՝ երբ կը յիշէր թէ իւր անբարտաւանութիւնը արագելոց զինք այն համեստ մարդուն այցելութիւն տալու , իւր կենաց վերջի ժամուն մէջ , եւ թէ ՚ի պատիժ այն հպարտութեան կորսնցուց իւր այն մեծ հարստութիւնը : Ուրեմն՝

Զէոյշ եղէր չէ մարտնչու հպարտութեան  
Որ շոտ անբարտաւան կորսնցուց իւր զոյրիւն :



Սովի ժամանակ մի անձանօթ մուրացկան որ շատ աղքատօրէն բայց շատ էլ մաքուր հագուած էր , գիւղի մէջ շրջելով ողորմութիւն կը խնդրէր :

Սա մի քանի տուներէ անարգուելով հեռացաւ , մի տուն էլ խիստ աննշան ողորմութիւն տուաւ : Միայն մի աղքատ գիւղացի կանչեց զինք և օղի ցրտութեան պատճառաւ իւր տաք սենեակը տանելով . նորեքի կարկանդակ կերցուց :

Հետեւեալ օրը այն ամէն մարդիկ՝ որոնցմէ անձանօթ մուրացկանը ողորմութիւն խնդրած

էր՝ իշխանի ապարանքը ընթրիքի հրաւիրեցան :  
 Երբոր սեղանատուն մտան, սեղանի վրայ մե-  
 ծագին կերակուրներ, կտրտուած հացեր, գետ-  
 նախնձոր և ուրիշ զանազան բանջարեղէններ  
 կային՝ որոց մեծագոյն մասը անձանօթ էր իրենց :  
 Այս տեղ իշխանուհին, հիւրերուն ասաց, գիւղը  
 շրջող անձանօթ մուրացիկ կինը ես էի, այս սովի  
 ժամանակ՝ յորում տղքատներ խիստ կը տան-  
 ջուին ձեր բարեբարութիւն և աղքատասիրու-  
 թիւնը փորձել ուզեցի : Ձեր մէջէն այս երկու  
 աղքատ մարդիկ իրենց կրցածին չափ զիս հիւ-  
 րասիրեցին և ինձ հետ հաց կերան, որոց այժմ  
 կը փոխարինեմ : Իսկ դուք բաւականացէք այն  
 ողորմութեամբ որ ինձի տուիք և այստեղ իմ  
 կերակուրներուս վրայ նայեցէք, յիշելով որ հան-  
 դերձեալին մէջն ևս սեղանոյ պիտի ծառայէք :

Ինչ կերպով հարց այս երկրի հըջ կը ցանկ  
 Նայել ճշտութեամբ երկնիս հըջ կը գտնէ :

95 . ԽՈՋԻ ԳՈՂ .

Մի երեկոյ երկու ճանապարհորդ հետեր-  
 նին մի խաղացող արջ առած գիւղի պանդոկ  
 գնացին : Այս միջոցին պանդոկապետ իւր մեծ  
 և պարարտ խոզը ծախած էր և տեղը պարապ  
 մնալուն՝ խաղացող արջը արձակ խոզի ախու  
 մացուցին :

Գողին մէկ՝ որ խոզի ծախուին չը գիտէր,  
 կէս գիշեր զայն դողնալու եկաւ և լուելեայն  
 ախուի դուռը բանալով՝ խոր մթութեան մէջ  
 փոխանակ խոզի պատահեցաւ արջի, որ մրմուռ-  
 լով իւր վրայ վազեց՝ թաթերով բռնեց զինք և  
 էլ թող չի տուաւ :

Գողը սաստիկ երկիւղէն և ցաւէն բոլոր  
 դորութեամբ սկսեց աղաղակել : Պանդոկի մար-  
 դիկ իւր ձայնը լսելով շուտ այն տեղ վազեցին  
 և եզածք իմանալով մեծ աշխատութեամբ հա-  
 ցիւ թէ գողը ստիպալի արջէն ազատեցին և  
 արիւնտու ու տանջուած դատաւորին տարան :

Չորտորաներ հըջ երեկոյ չը գտնէրին  
 Արժանաւոր դարձեալ ինչոյ կը կրեն :

96 . ԵՐԵՎ ԱՒԱԶԱԿՆԵՐ .

Երեք աւաղակներ մի հարուստ վաճառ-  
 կան անտառին մէջ կողոպտելով մեռցուցին :  
 Յափշտակած գանձերը մի քարայրի մէջ բերե-  
 լով՝ իրենցմէ փոքրիկը՝ Ք քաղաք խրկեցին կե-  
 րակուր գնելու :

Մորա հեռացած ժամանակ միւս երկուքը  
 ասին իրարու : « Ինչո՞ւ մենք այս մեծ հարս-  
 տութիւնը այն անզոր աղային հետ բաժնենք :  
 Քաղաքէն վերադարձած ժամանակ կերակուրն

աննելով զինքը սպաննենք եւ նորա բաժինը  
թող մեզ մնայ » :

Փոքրիկ աւազակն էլ ճամբուն վրայ մտա-  
ծեց թէ ինքը շատ բազդաւոր պիտի լինի եթէ  
այն մեծ հարստութիւնը միայն իրեն մնայ : Այս  
խորհրդով քաղաքէն առած կերակուրներուն  
մէջ թոյն խառնած ընկերներուն բերաւ :

Քարայրի դուռ հասած ժամանակ ընկեր-  
ներ վրայ յարժակելով զինք մեռցուցին եւ ի-  
րենք կերակուրն առած սկսան ուտել և խմել :  
Մի քանի վայրկեանէ յետոյ թունաւորուած  
կերակուրներէն իրենք էլ մեռան, և մարմինն  
այն մեծ հարստութեան շուրջ փռուած մնաց :

Չորից Երեւե երկու լէր :

Մէկ շեկո՛ւ պարտո՛ղ կ'ըլլան :



97 . ՄԱՐԴԱԿԵՐ .

Երկու քաղաքացի մանուկներ անտառի մէջ  
ճանապարհնին կորսնցնելով, երեկոյեան դէմ  
բնակութենէ հեռու աննշան մի պանդոկ եկան  
գիշերն անցնելու : Կէս գիշեր իրենց քովի սե-  
նեակի մէջ խօսելու ձայն լսելով եւ որովհետեւ  
մէջերնին փայտեայ մի բարակ պատ կար եւ  
խօսքերը գիւրութեամբ կը լսուէր, սկսան եր-  
կուքն էլ ականջնին պատին դնելով ունկնդիր

լինել : Նոյն միջոցին այս խօսքը լսեցին որ կ'ա-  
ւեր՝ պանդոկապետը, «կին, առաւօտ շուտ կաթ-  
սան եռացուր, որ քաղաքացի մանկիկներ պի-  
տի մորթեմ » :

Խեղճ մանուկները զայս լսելով մահուան  
երկիւղի մէջ ինկան : « Ախ, Աստուած իմ, այս  
պանդոկապետ մարդակեր գազան է եղեր »  
կ'ստէին : Փախչելու համար սենեակի պատուհա-  
նէն ինքզինքնին դուրս ձգեցին, բայց ինկած  
ժամանակ ոտքերնին այնպէս ցուեցաւ, որ ել-  
նել եւ առաջ երթալ չէին կրնար, թող զայս,  
բալի մեծ դուռն էլ փակուած էր :

Յուսահատեալ քովի ախոռը սողալով խո-  
տերու մէջ ծածկուեցան և բոլոր գիշեր մահ-  
ւան երկիւղի մէջ էին : Երբոր առաւօտ եղաւ,  
պանդոկապետը գալով ախոռի դուռը բացաւ  
և դանակը դուրս հանելով կանչեց, մանկիկներ  
դուրս եկէք, ձեր վերջին ժամ հասած է » :

Մանուկները զայս լսելով սկսեցին լալ, աղա-  
ղակել եւ ծունկի վրայ իննալով դառնապէս  
խնդրել որ զիրենք չի զենու : Պանդոկապետը  
զանոնք խողերու մէջ տեսնալով, զարմացած  
հարցուց թէ ի՞նչ է պատճառ որ կը կարծեն  
թէ զիրենք կը զենու՝ և թէ ինքը մարդակեր է :

Մանուկները լալով պատասխանեցին, « չէ  
որ դուք այս գիշեր այնպէս խօսեցաք թէ զմեզ  
պիտի զենէք », « ո՛հ, պարզամիտ սողաներ,

աղաղակեց պանդուխտներս, ես ձեզի չէ, այլ  
իմ քաղաքէն դնած երկու խողերու համար ասի  
եւ զանոնք զուարճարանութեամբ քաղաքացի  
մանկիկ անուանեցի » :

Այսպէս կը լինի գաղանի խօսքերու ունին-  
դիր եղողի, 'ի միտ առ հետեւեալ առածը որ  
կ'ասէ՝

« Սմաշէր, հողորի մտի ընել  
Որ մարդոյ մեղ է մեր շըն՝ կը բերէ » :



98. ԴԵՂԱՎԱՃԱՌ .

Մի ճանապարհորդ կիրակի օր գիւղի  
պանդուխտ գալով խորոված հաւ եւ մի շիշ ընտիր  
գինի բերել տուաւ ճաշելու համար : Հաղի-  
թէ մի պատառ կերած էր, սկսեց « վա՛յ վա՛յ »  
աղաղակել . ճերմակ թաշխինակով ծնօտը փաթ-  
թեց « արդէն տասն հինգ օր է որ սաատիկ ա-  
տամնացաւով կը չարչարուիմ » ասաց : Սրահի  
բոլոր գիւղացիք ասոր վրայ իւր շուրջը ժողո-  
վելով կարեկից կը լինէին :

Ինչ յետոյ մի գեղազաճառ պանդուխտ  
ճաշելու եկաւ, սա քովի փոքրիկ արկղէն իրա-  
րու վրայ ծալուած ոսկեզօծեալ թուղթեր հա-  
նելով բացաւ եւ օտարականին ներկայացնելով  
« ասէր իմ, ասաց, ձեր մատի ծայրը թրջելով

այս ճերմակ վառօղէն մի քիչ առէք եւ ցաւօր  
ատամին վրայ դրէք » : Օտարականը հաղի թէ  
դեղը ատամի վրան դրած էր, « իս ինչպէ՞ս  
հանգստացայ, գոչեց, կարծես թէ ցաւը մէջէն  
գուրս փչեց » : Ասոր վրայ գեղազաճառին կէս  
ոսկի տալով ստիպեց որ իրեն հետ ճաշէ :

Բոլոր հիւրեր եւ գիւղի բազմութիւնը գեղա-  
վաճառին շուրջ ժողովելով այն վառօղէն մօտ  
երկու հարիւր ծրար գնեցին : Այնուհետեւ երբ  
գիւղին մէջ մէկը ատամնացաւ ունենար՝ շու-  
տով այն հրաշալի վառօղին կը դիմէր : Բայց  
մեծ զարմանք եղաւ ամենուն տեսնելով որ  
վառօղը ոչ մէկին չի բժշկեց :

Խարէութիւնը վերջապէս յայտնուեցաւ :  
Երկու ճանապարհորդներ այն առևտուրին մէջ  
ընկեր էին : Ճերմակ վառօղը ուրիշ բան չէր  
բայց մանրուած կաւիճ : Սակայն խաբեբաներ  
թէ այս եւ թէ ասոր նման խարդախութեանց  
համար բռնուելով պատժուեցան :

Թէ անձանց վաճառողը դեղ բնե՞ս  
Նորա շրէ՛ք է աս շըն՝ շո՞ր կը դեմնե՞ս :



99. ՄՈԳԱԿԱՆ ՄԱՏԱՆԻ .

Մի վաճառական ծովու վրայ ճանապար-  
հորդելով մի խիստ հեռու աշխարհ գնաց դրամ

վատակելու : Այն տեղ իւր աշխատասիրու-  
թեամբ և բնական յաջողակութեամբ ըստ բա-  
ւականին հարստանալով , երկար տարիներէ յե-  
տոյ իւր հայրենիք վերադարձաւ : Երբոր նաւը  
նաւահանգիստ հասաւ , վաճառականը լսեց որ  
իւր ազգականները մի գիւղական ագարակի մէջ  
ժողովուած , երեկոյթի և ուրախութեան մէջ են :

Ասոր վրայ ուրախանալով՝ առանց իւր ճա-  
նապարհի զգեստները փոխելու , աճապարեց  
նոցա ժողովուած տեղը գնալ :

Իբրոր երեկոյթի լուսաւոր եւ զարդարուն  
սրահը մտաւ , ազգականները իւր զգեստները  
տեսնելով կարծեցին թէ աղքատ եւ կարօտ վի-  
ճակի մէջ հայրենիք վերադարձած է . ուստի  
զինք կրկին տեսնելու համար մի մեծ ուրախու-  
թիւն չը յայտնեցին :

Վաճառականի հնդիկ ծառայն տեսնելով  
զայն անհնարին զայրացմամբ գոչեց « ի՞նչ վատ  
մարդիկ են ասոնք , որ իրենց բարեկամ , զոր  
երկար ժամանակ չէին տեսած , ուրախութեամբ  
անդամ չը բարեւեցին » :

Համբերէ՛ ասաց վաճառականը իւր ծա-  
ռային լռութեամբ , քիչ յետոյ պիտի տեսնես որ  
նոքա կերպարանքնին պիտի փոխեն : Չայս ա-  
սելով՝ գրպանէն մի մատանի հանաւ եւ մատն  
անցուց : Երբոր ազգականները զայն տեսան մի  
առ մի վաճառականի շուրջ ժողովելով սկսեցին

ուրախութեամբ նորա գալուստը շնորհաւորել :  
Մին նորա ձեռները բռներ բարի գալուստ կը  
մտղթէր , միւսն զինք գրկեր կը համբուրէր :  
Ամէնքը մի մի ցոյցերով կը ջանային աւելի մեծ  
ուրախութիւն յայտնել : Ի վերջոյ սկսան վիճել ,  
ամէն ոք փափաք կը յայտնէր որ իւր սիրելի  
ազգականը , իւր ազնիւ տէրը , որուն ի վաղուց  
կարօտաւոր էր , իւր տունը իջեանի :

« Տէ՛ր իմ , հարցուց Հնդիկ ծառայն , զար-  
մացմամբ , արդեօք ձեր մատանին զմարդ մոգե-  
լու գորութիւն ունի՞ » : — « Ը , պատասխանեց վա-  
ճառականը , ազգականերս այս փայլուն մատա-  
նին տեսնելով գիացան որ ես հարուստ եմ , ա-  
նոր համար իմ՝ շուրջ ժողովեցան . հարստու-  
թիւն նոցա համար ամենայն ինչ է » :

« Ո՛վ կոյր և յիմար մարդիկ , ազազակեց  
հնդիկ ծառայն , մատանին չէր որ զձեզ մոգեց  
այլ ձեր ընչասիրութիւն և ազահուլթիւն : Ու-  
րեմն ձեզ համար դեղին պղինձ եւ փայլուն  
քարեր նախապատիւ են , քան իմ՝ տէրոջս պէս  
առաքինի եւ պատուական մարդիկ : Ըջնարխտ  
է ուրեմն այն առածը որ կ'աւէ՛

Յիմարին Կով արժանի ունի  
Իւրչը է Կան զմարդ տատկի :



Երեկոյեան վերջնարդի ժամանակ մի օտարական նոր օրինակ զգեառներով, թեւի տակ մի թածր գիրք, ձեռքն էլ ճերմակ գաւազան բռնած՝ Մատթէոս անուն գեղացոյ տուն եկաւ : Եւ ձեզ մի գաղտնիք պիտի յայտնեմ, ասաց գիւղացոյն, ձեր ագարակներէն մէկուն մէջ ոսկոյ և արծաթի մի մեծ գանձ կայ, եթէ դու այն գանձի տաններորդ մասը ինձի տաս, ես զայն կը հանեմ և դու ևս մէկէն մեծ հարստութեան տէր կը լինիս : Գիւղացին ուրախութեամբ ընդունեց :

Կէս գիշերուան մօտ, թի և մի փոքր սայլ առած ՚ի միասին ագարակ գնացին և սկսան լռելեայն գանձին տեղը փորել : Քիչ միջոցէն մի ծանր սնտուկ գտան և սայլին վրայ գնելով ուրախութեամբ գիւղացոյ տուն բերին : Գանձ գտնողը այստեղ սնտուկ ամէն կողմէ դիտելէ յետոյ՝ գաւազանը մերթ այս մերթ այն կողմուն դպցուց և իւր գրքէն մի քանի անհասկանալի բառեր էլ կարդաց գլուխը շարժելով :

« Վերջապէս՝ եթէ կուզենք որ մեր գանձը ամուլ չի դառնայ, պէտք է որ զայն բանալէ առաջ՝ մասնաւոր եւ բոլորովին գաղտնի դեղ մի գործածենք, ասաց : Բայց ասիկայ միայն մի գեղավաճառի քով կը գտնուի որ ասկէ տասն

ժամ հեռու է եւ այն եւս քսան տուքութէն պակաս չի տար » :

Գիւղացին որ երկու օր առաջ նոյնչափ գումար մի ստացած էր իւր ձին ծախելով. անմիջապէս այն մարդուն տուաւ, որ գիշերուայ մէջ ճամբայ ելնելով գնաց և այլ ևս չի վերադարձաւ :

Գիւղացին երկար սպասելէ յետոյ սնտուկը բացաւ եւ մէջը ոչ ոսկի, ոչ արծաթ եւ ոչ իսկ ամուլս գտաւ, այլ միայն կայծքար որ իւր ագարակի դրան առաջ լեցուց եւ ասխտակի վրայ հետեւեալ բառնաւորը գրելով քով դրաւ :

« Տեսե՛ք ինչպէս գանձ փորելով  
 Հարստացոյ այս փորել » :



Մանուէլ անուն գործաւոր երկու մախաղ առած, կէս գիշեր դրացի իշխանի պարտեզը մտաւ և զանոնք մինչեւ բերան խնձոր լեցնելէն յետոյ՝ ուզեց մի առ մի փախցնել :

Երբոր մի մախաղն առած պարտիզի պատի ստղեւէն կ'երթար, եկեղեցոյ զանգակատան ժամբ՝ վեց զարկաւ, հոյն էլ ծառոյ տերեւներ շրջընել սկսեց : Կէս գիշեր էր, Մանուէլ յանկարծ իւր քով մի սէւ մտրդ տեսաւ որ օգնա

կանի պէս կ'երեւէր թէ միւս մախաղն ևս ինքն առած իւր հեռ կուգար :

Մանուէլը զայս տեսնելով զարհուրեցաւ , ուստի անմիջապէս մտխաղը ուսի վրայէն ձգելով ամենայն զորութեամբ փախաւ : Սև մարդն ևս նոյնպէս իւր մախաղը ձգելով իրեն հեռ վաղեց մինչեւ պարտիզի պատի ծայրը եւ այն տեղ այլ եւս չ'երեւցաւ :

Երկրորդ օր Մանուէլ ճիւղաղին տեսնելը ամէն տեղ պատմեց առանց իւր գողութիւնը յայտնելու : Սակայն պարտիզի տէրը նոյն օր զինք կոչելով « դու այս գիշեր իմ պարտեզ ինձոր գողնալու եկած ես , ասաց , այն մախաղներ որոց վրայ ձեր հօր անունը գրուած է զձեզ մատնեցին , ասոր համար դու իմ տանս արգելանոցի մէջ պիտի բանտարկուիս : Իսկ այն ճիւղաղ որմէ դու զարհուրած ես , ուրիշ բան չէր բայց քո ստուեր , զոր դու պարտիզի սպիտակ պատերու վրայ տեսած ես լուսնակի ելնելու պահուն » :

Այսպէս կը լինի ամէն անոնց որք չարութեան հակամիտ են , նորա տերեւներու շարժումներէն կը վախնան եւ իրենց ստուերէն անգամ կը զարհուրին :

Ոչ որ էւր մէջ մի հանրարտ ինչ՞ ունենայ

Ես ոչ սէ , ոչ ինձեմ չե գողայ :

Հարուստ դատաւորին մէկ կը բնակէր մի ամենագեղեցիկ տան մէջ , զոր մեծագուժար դրամով շինել տուած էր և որուն այժմ հետքն անգամ չ'երեւիր : Այս դատաւորը աղքատաց ոգորմութիւն տալ կամ անոնց գթութիւն ընել չէր ուզեր :

Մի անգամ մի աղքատ կրօնաւոր նորա տուն գալով աղաչեց որ մի գիշեր օթեւանեալ տեղ տայ : Դատաւորը բարկանալով « զնա , ասաց , մի թէ իմ տունս պանդոկ է » , կրօնաւորը « խնդրեմ , հրաման տուր ասաց որ երեք հարցում անեմ և ապա զնամ » : Դատաւորը հրաման տուաւ , բայց այս պայմանաւ որ իւր հարցումը միայն իւր տան համար լինի , որուն սիրով պիտի պատասխանեմ , ասաց :

Կրօնաւորը դատաւորին հարցուց , « Ձեզմէ առաջ ո՞վ այս տան մէջ կը բնակէր » — « իմ հայրս » , « ձեր հօրմէն առաջ » — « իմ մեծ հայր » — « սակայն ձեզմէ յետոյ ո՞վ պիտի բռնակի » — « Այդ Աստուած գիտէ , շատ կարելի է որ իմ որդիս » պատասխանեց դատաւորը :

Շատ լաւ , շարունակեց կրօնաւորը , եթէ ամէն մէկ միայն քիչ ժամանակ այս տան մէջ բնակած է և միշտ մէկ միւսին տեղ տուած ուրեմն ինչէք դուք այժմ այստեղ , չե՞ որ

հիւր էք եւ այս տունն էլ հիւրանոց, մի ջա-  
նաք ուրեմն զայն այնչափ մեծ փառաւորու-  
թեամբ զարդարել, որուն մէջ դուք միայն քիչ  
ժամանակ պիտի բնակիք. ջանացէ՛ք աւելի  
ազքատաց ողորմութիւն և բարերարութիւն ա-  
նել և անով երկնքի մէջ ձեզ մշտնջենաւոր բը-  
նակարան պատրաստել ։

Կրօնաւորին այս խօսքերը զգատաւորն ՚ի  
գութ ածեց, զայն իւր տուն բնակեցուց եւ  
սկսեց ազքատաց եւս ողորմութիւն տալ ։

Այս աշխարհէ գործն և պարտն կ'ունցանէ  
Բարէի գործն իւր և յորտեմէ ։



Մի իշխանազուն՝ որ իւր դէմքի գեղեց-  
կութեամբ հարստութեամբ և բարձրաստի-  
ճան լինելուն վրայ՝ ոչ սակաւ կը պարծէր, մի  
օր լեռան հեռու եւ անձանօթ կողմեր որսոր-  
դութեան գնաց ։ Այնտեղ նա մի ծերունի ճգ-  
նաւոր տեսաւ որ իւր մենարանի առջև նստած  
մեծ ուշադրութեամբ մեռեալի գանկ կը դիտէր ։

Իշխանազուն ճգնաւորին մօտեցաւ և ար-  
համարհական ծիծաղով հարցուց թէ « ինչո՞ւ  
համար այդ գանկը այդպիսի ուշադրութեամբ  
կը դիտես եւ գորա վրայ ի՞նչ կուզես տեսնել ։

ճգնաւորը խիստ պատկառելի դէմքով իշ-  
խանին նայելով պատասխանեց, « կուզեմ՝  
իմանալ թէ այս իշխանի՝ արդեօք թէ մուրաց-  
կանի գանկ է եւ որոշելու կը դժուարիմ ։

Բանի ունայն գերեցկութիւն, ոսկի ու գործն  
Գանկ գործնայն թելէ ճշտիւ կոտորանէ ։



Մի ազնուական Օրիորդ ծաղիկ հասակի  
մէջ մեռաւ ։ Իւր դին ձերմակ պատտուններով  
փաթաթած դազաղին մէջ դրին, մարդարիտ-  
ներով գլուխը զարդարած, աջ ձեռքն էլ ոս-  
կեայ մատանի ։ Այս հարստութիւնը իւր վշտա-  
լի ծնողք իւր հետ գերեզման դրին ։

Հետեւեալ գիշեր, մի գիւղացի լապտեր  
ի ձեռին գաղտնի Օրիորդի թաղուած տեղը  
մտաւ և գերեզմանը բանալով ուղեց դին իւր  
վարժերէն կողոպտել ։ Սակայն մեռեալը յան-  
կարծ ելաւ նստեցաւ, իւր վրայ ցուրտ ակնարկ  
մի ձգեց և բարակ ձայնով հարցուց, ի՞նչ կու-  
զես ։, գիւղացիը զարհուրած աճապարանօք  
փախաւ ։

Օրիորդը որ իրօք մեռած չէր այլ մեռեալ  
կարծուած, գերեզմանէն դուրս ելաւ, փախ-  
չողի լապտերն առաւ եւ շիտակ դէպի տուն  
գնաց ։ Երբոր ներս սենեակ մտաւ ծնողք ա-

աւջին անգամ շատ վախցան, բայց վերջէն  
իւր կենդանութիւնը իմանալով անպատմելի  
ուրախութեան մէջ ինկան:

Չորսու յարգելի թաղէք  
Զհոռանալ Վոյն պետի:



105: ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ .

Մի հարուստ վաճառական իւր բոլոր հա-  
րստութիւն իւր զաւակաց յանձնեց, որոնք  
խոստացան զինք մինչ ՚ի մահ հանդիստ կենօք  
եւ առատութեամբ կերակրել:

Իսկզբան խոստումնին կատարեցին, վերջէն  
սկսան հետզհետէ անգթանալ, անպիտան եւ  
ցնցոտի զգեստներ տուին իրեն. մինչև անգամ  
կերած միջոցին պատառները կը համրէին:

Համբերատար հայրը, յաճախ կ'ասէր: «Ես  
շատ սխալեցայ որ իմ բոլոր հարստութիւնը զա-  
ւակներուս տուի: Աւելի լաւ էր որ նոքա ինձի  
աղաչելու պարտաւորէին քան թէ ես նոցա »:

Մի օր հայրը իւր առեւտուրի հին բարե-  
կամներէն մէկուն քով մտացած երկու հարիւր  
ոսկին՝ որ ՚ի վաղուց կորսուած կը կարծէր, ամ-  
բողջապէս ստացաւ:

Այս գումարը՝ երկաթեայ խիստ հաստա-  
տուն եւ մի քանի փականք ունեցող մետաղի  
մէջ պահեց:

Իւր զաւակները զայս իմանալով՝ սկսեցին  
իրենց հայրը նորէն ամենայն առատութեամբ  
խնամել եւ իւր պակասութիւններ անմիջապէս  
հողալ, որպէս զի այս գումարն ևս ձեռքերնին  
ձգեն: Սակայն հայրն այլ եւս ոչ մի դրամ չի  
տուաւ իրենց, ուստի յոյսերնին ժառանգու-  
թեան վրայ մնաց:

Հօր մեռնելէն յետոյ, զաւակները աճապա-  
րանօք սնտուկը բացին որպէս զի դրամը բաժ-  
նեն: Բայց նա իւր ստացած գումարը գաղտնի  
որբանոցին նուիրած էր եւ տեղը՝ մտուկին  
մէջ կայծքար լեցուցած, վրան էլ մի թուղթ  
դրած յորում հետեւեալ տողերը կային՝

« Ապերախ զաւակներս ուրոյ փորձ  
ի՞նչ կրնայ ժառանգ ըստուր ամ ամ փայն »:



106. ԲԱՐԵՎԱՄՆԵՐ ՄԱՀՈՒՄՆԷ ՅԵՏՈՅ .

«Մի անգամ մի հայր իւր չափահաս զաւ-  
կաց հետեւեալը պատմեց: Մի թաղաւոր իւր  
կառավարիչ իշխանը կողի վրայ կոչեց իւր  
տեսչութեան հաշիւն առնելու: Կառավարչի  
բարեկամներէն անոնք՝ որոց վրայ ինք մեծ  
վստահութիւն եւ հաւատարմութիւն ունէր,  
թող տուին որ ինքը հեռանայ եւ բնաւ իրենց  
տեղէն չի շարժեցան: Քանին ևս՝ որոց վրայ

ինք դարձեալ բաւական վստահութիւն ունէր մինչեւ նաև իւր հետ ընկերացան : Իսկ անոնք՝ որոցմէ բնաւ յոյս չունէր, իւր հետ գնացին մինչեւ թափաւորի գահին առաջ, ամենայն ջանիւք բարեխօսեցին և իրեն համար թագաւորէն գթութիւն եւ շնորհ հայցեցին » :

« Մարդն էլ երկրի վրայ շարունակեց հայրը երեք տեսակ բարեկամներ ունի, զորս մենք շատ անգամ այն ժամանակ միայն կը ճանչնանք, երբ երկնաւոր թագաւորէն կը կանչուինք այս աշխարհի մէջ ունեցած մեր գործոց վրայ հաշիւ տալու » :

« Այս բարեկամներէն առաջինը՝ հարստութիւնն է, որ այն միջոցին մեզմէ կը հեռանայ : երկրորդ՝ ազգականներ և բարեկամներ՝ որոնք մեզ հետ մինչև գերեզման կուգան : Իսկ երրորդ մեր բարի գործեր՝ որոնք մեր երկար ճամբորդութեան մէջ՝ որ ՚ի յաւիտենականութիւն կը տանի, մեզ հետ կ'ընկերանան և բարեխօս կը լինին Աստուծոյ աթոռին առաջ մեզ համար ողորմութիւն և գթութիւն հայցելով : Որչա՛փ ողորմելի է այն մարդ որ այսպիսի բարեկամներ չունի եւ անոնց վրայ իւր յոյս չի դնէր » :

Կեանքիդ այս կտրճ օրերու մէջ բարե՛ք գործէ՛  
Դո՛ւս յերկնս տե՛ղ բարեխօս ընկե՛ր ե՛ն :

Գլուխ .

Երեւ

1	Աստուած	5
2	Բարի Հայր	7
3	Ջերմեռանդ Մայր և իւր որդիներ	8
4	Քոյր եւ եղբայր	10
5	Արեգակ	12
6	Անձրեւ	13
7	Ծիրանի գօտի	14
8	Արձականք	15
9	Աղբիւր	17
10	Ծաղիկ	17
11	Խնձոր	18
12	Տանձ	19
13	Ընկոյզ	20
14	Ըեկոյզի կեղեւ	21
15	Կանաչ ճիւղ	22
16	Հազուադիւս բանջար	23
17	Բողկ	24
18	Կաղամբ	25
19	Սունկեր	26
20	Դղմենի եւ ընկոյզենի	28
21	Կաղնի եւ ուռենի	29
22	Կաղնի ծառ	30
23	Ագարակ	31
24	Հունձք	32
25	Ոլոռն ( կլուլ )	33

Գլուխ	Երես	
26	Ոսպեր	34
27	Կտաւ	35
28	Հարուստ եւ աղքատ	36
29	Աղարակի դանձ	38
30	Սահմանաքար	40
31	Բարունակ	41
32	Այգի	41
33	Երգող թռչուն	42
34	Դեղձանիկ թռչուն	43
35	Խօսող թռչուն	45
36	Աքաղաղ	46
37	Հաւ	46
38	Թռչնոյ մեծ բոյն	47
39	Մեղուներ	47
40	Ճանճ եւ սարդ	48
41	Մեծ ձուկ	50
42	Շան հաւատարմութիւն	51
43	Փոքրիկ շուն	51
44	Դրացիի հաւ	53
45	Ոչխարարած	54
46	Գողցուած ձի	56
47	Մեծ եղն	57
48	Էջ	58
49	Չորի	59
50	Կառիկ	60
51	Արջ	61
52	Գալ	62

Գլուխ	Երես	
53	Աւիւծ	63
54	Ոսկի	65
55	Մարգարիտ	66
56	Պատուական ակունք	68
57	Կայծքար	69
58	Գար	70
59	Հողով լեցուն պարկ	71
60	Գիւղացոյ բակ	73
61	Զարմանալի պարկիսկ	74
62	Աղօթող աղայ	75
63	Հաց	77
64	Մսի կտոր	79
65	Երեքին պատճառ	80
66	Թանկագին խորտիկ	81
67	Պայտի կտոր	82
68	Նալի բեւեռ	83
69	Կարթ	84
70	Սրինգ	85
71	Բակեղէթ ( հայպէ )	87
72	Եօթն գաւազաններ	87
73	Հայելի	89
74	Հազուադիւր բարեկամութիւն	89
75	Պատկեր	91
76	Հանդերձի ընտրութիւն	92
77	Ոսկեայ տուփ	93
78	Յովհաննէս	94
79	Բռակ	96

Գլուխ	Երևո
80 Ոսկի	98
81 Որդեական սէր	99
82 Խաչ	100
83 Հրաշակործ արկղ	101
84 Աղօթող իշխանագուն	103
85 Հովուուհի	105
86 Փռքրիկ կողովագործ	107
87 Փռքրիկ նաւորդ	109
88 Կոյր Անդրէաս	110
86 Երկու ճանապարհորդ	111
90 Ածխագործ եւ լուացարար	113
91 Պարտիզպան եւ իւր էջ	113
92 Որսորդ եւ իւր շուն	115
93 Հպարտ օրիորդ	116
94 Մութացող կին	117
95 Խողի գող	118
96 Երեք աւազակներ	119
97 Մարդակեր	120
98 Գեղավաճառ	122
99 Մողական մատանի	123
100 Գանձ փնտռող	126
101 Ճիւղ ( գիշերային երեւոյթ )	126
102 Պանդակ	139
103 Ճգնաւոր	130
104 Սնուեալ կարծուած օրիորդ	131
105 Ժառանգութիւն	132
106 Բարեկամներ մահուանէ յետոյ	133

446

4833000

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0004481

